պատուիրէր Աստուած Անվխիսի 'ի հին  
օրէնս , զի թէ գոտանէր այր յիսրայէլ  
որ չէր սուրբ 'ի ցայգութեան բխմանէ  
(յերազական գիջութեննէ) , ելանել ար-  
տաքոյ բանակին , և ընդ երեկո լուանալ  
զմարմին իւր ջրով , և առա ընդ մոտա-  
նել արեւուն՝ մոտանել 'ի բանակն . (ՕՌԻ-  
ՒԳ . 10 :

Այս հստումն գիշերային՝ պատճառի  
բազմիցս և 'ի զեղխութենէ կերակրոց ,  
'ի պագչոտ և 'ի տռփական խորհրդոց ,  
որ նոյնպէս համարին մեղք մահոցու-  
ցիչ հոգւոյ : Երբեմն ևս 'ի թուլութենէ  
և 'ի լոյն բնութենէ , և յայնժամ է մեղք  
ներելի և թեթե : Աւստի պարա է մեղք  
'ի յամ քնոյ՝ մաքուր մոռք դիմել առ  
Աստուած աղօթիւք , և յաւէտ զգու-  
շանալ տեառնագրելով զերեսս մեր , և  
խնդրել 'ի նմանէ զօգնութիւն իւր և  
զպահանութիւն հրեշտակի իւրոյ , և  
ասել . « Առաքեա Տէր զհրեշտակ խա-  
ղաղութեան քո , որ եկեալ պահեսցէ

զմեզ յերկիւղական գիշերիս 'ի դիւական խռովութենէ ։ Աս և զզօրաւոր բանս սուրբ Վարդապետին . և Վարտն որ առ իս , քեւ տէր վանեսցի . զի եթէ յարիցէ 'ի վերայ իմ պատերազմիւ , տեսեալ զքաղաքն ունայն 'ի զօրաց , և զազդողականացն գործի ապաձայն , զքեզ Տէր ունիմ մշտնջենաւոր և աննիրհելի պահապան ։ Ասքեի . ԿԶ :

4. ՈՒԵՂՅ շանկո-լեամբ մարմնոյս , հեշտո-  
լեամբ , պղէրդո-լեամբ , յօրանշմամբ հնոյ , շար-  
ժո-լեամբ մարմնոյս , և զազդործո-լեամբ 'ի  
ունապէս աիսո , հեշտալը-լեամբ լելւացո , ա-  
շտորո-լեամբ աւացո , շանկո-լեամբ սրտիս , ի-  
դո-լեամբ անգայս , պահշատո-լեամբ բերա-  
նոյս . անգո-ծիւլ-լեամբ , շա-այտո-լեամբ և  
արեցո-լեամբ , մեղյ Աստո-ծոյ :

ՈՒԵՂՅ շանկո-լեամբ մարմնոյս :

Հետեւետ բառքդ , հեշտո-լեամբ ,  
պղէրդո-լեամբ , և այլն , են բացայայտիչք  
բառիցս շանկո-լեամբ մարմնոյս = Հանկու-  
թիւն աստեն իմանայ զզդայականն որ վե-  
րաբերի առ ամենայն զգայարանս մար-  
մնոյն . և է ամենայն տենչումն որ հայի

՚ի յոռի հեշտութիւն մարմնոյ , զոր լայ-  
նաբար առեալ Առաքեալն ասէ . « Որ  
ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է մար-  
մնոյ , և ցանկութիւն է աշոց , և ամ-  
բարտաւանութիւն աստի կենաց » . Ա.  
Յ.Հ. Բ. 16 : Որք են ցանկութիւնք ըստ  
մարմնոյ բաղձանաց , և են անհամարք  
և անթուելիք , զորոց տես ՚ի մեկնու-  
թեան կաթուղ . Եր . 340 : Իսկ աստ ըգ-  
տուփականն ասէ , որ են գործք մարմնոյ ,  
ըստ այնմ . « Յայտնի են գործք մարմնոյ ,  
շնութիւն , պոռնկութիւն , պղծութիւն ,  
գիշութիւն , և այլն » . Գաղ . Ե . 19 :

Յանկութիւն մարմնոյ համարի նաև  
ինկատակութիւն և ծաղբածութիւն  
անպարկեշտ բանից , և որ ինչ յառաջ  
գայ ՚ի գատարկութենէ մտաց , ՚ի պագ-  
շոտութենէ և ՚ի թուլամօրթ բնութե-  
նէ մարդկան :

### ՆԵՐԱ-ԲԵԱԺ :

Հեշտութիւն է ախորժակ բանա-  
կանին ՚ի վայելս զուարձալեաց . և է  
կրկին , ներքին և արտաքին : Խսկեթերան  
հեշտութեամբ իմանոյ զներքին տուփա-  
նըս անմաքուր ցանկութեան , և այլ-  
ուրբ Հարք ընդ նմին իմանան և զար-

տարբին անարժան գործոն , որ յառաջ  
գան յանկարգ և 'ի գարշ տռփանաց :  
Եթէ ներքին և եթէ արտաքին հեշ  
տութիւնք անվայել են մարդոյ բանա-  
կանի , ևս առաւել 'ի Քրիստոս հաւա-  
տացելոց . որոց ապականեալ զմարմինսն  
պղծութեամբ , ապականին և 'ի հոգիս .  
ուստի աղերսելով իմն Վռաքեալն ասէ .  
«Ո՞վ այսուհետեւ թագաւորեսցեն մեղք  
'ի մահկանացու մարմինս ձեր՝ հնազան-  
դելցանկութեանցնորադ . Հ-ո-վ. Զ. 12:

Հեշտութեամբ իմանի նաև ամեն-  
նայն դիւրութիւնք բնութեան մարդոյ ,  
որ ցանկայ կալ 'ի փափկութեան , և հան-  
գիստ զամենայն անցաւոր բարիսն վայ-  
ելել , յորմէ մեծապէս զգուշանալի է .  
զի եթէ ոք ընդ երկար մնասցէ 'ի հեշ  
տութեան՝ դադարեալ յամենայն մար-  
միոյ աշխատանաց , համբուրէ զյետին  
թշուառութիւն , ըստ այնմ . «Որ դա-  
տարկակեացնէ՝ անջան որս է սատանայիու :  
Ենաև հեշտութիւն հոգւոյ , որ 'ի խոկ-  
մունս և 'ի բերկրութիւնս աստուա-  
ծայնոցն և հոգեկանաց փափկանոյ ոք  
և զուարձանայ . որպէս ասէ Ասկեբե-  
րան . « Փոխեսցուք զմեղ 'ի հոգեորա-  
կանացն հեշտութիւնս » :

ՊԵՂԵՐԴ ՌԱՄԵԼԻ ՀԱՅԻ :

Պղերդութիւնն է հեղգութիւնն 'ի  
խնդրել զօդտակակարս հոգւոյն , և լինել  
ծոյլ 'ի բարեգործութիւնս և յամենայն  
գործս արդարութեան , և ընդ հակա-  
ռակն՝ ժիր և տրի 'ի վեասել անձին իւ-  
րում և ընկերին , և 'ի գործել զշարիս:  
Արդ՝ պատճառ աղքատութեան և յա-  
ւիտենական թշուտութեան մարդոյ՝  
է պղերդութիւնն և հեղգութիւն . զի  
ոչ մատչիմք արիաբար ոգւով , հաւա-  
ստով , յուսով և սիրով առ Աստուած յա-  
զօթս մեր , խնդրել 'ի նմանէ զշնորհս և  
զպարդես երկնաւոր բարեաց , որ աննա-  
խանձաբար տայ և ոչ խնայէ ու մեք ինչ :

Յօրանշմամբ քեզ :

Կրկին է պատճառ քնոյն , ներքին և  
արտաքին : Ներքինն 'ի տամկութենէ խե-  
լապատակին և 'ի Ճնշելոյ ու զղոյն պատ-  
ճառի . իսկ արտաքինն յերից աստի , 'ի  
ցրտոյ , 'ի խոնաւութենէ և 'ի մթու-  
թենէ . յայսոցիկ պատճառաց թուլա-  
նան զգայաբանք մարմնոյն , ծանրանայ  
գլուխն , վասն որոյ սկսանի յօրանջել .  
ձգտիլ և քոչքոտել : Աարոյապէս՝ զպա-  
շտրեալն 'ի քնոյ անկարդ ցանկութեանց

նշանակէ , որովք թուլանան զգայութիւնք հոգւոյն , ծանրանայ խմացականութիւնն իբր զգալիքնով պաշարեալ , ուստի և չկարէ զբարիս խորհել և առնել , զորոց ասէ Առաքեալն . « Իբրեւ քը նովդանդաչեալք՝ զմարմինն սղծեն » .

Յու-Դ . Ա . 8 :

Երան որ պաշարեալն է 'ի վերահասքնոյ՝ անմտանայ և մտօք դեղեւեալ տատանի 'ի խորհուրդս հեշտութեան , և 'ի թուլութեան զգայութեանցն սկսանի յօրանիջել և ձգտիլ յանովայել շարժմունս մարմնոյ , և ոչ զմուաւ ածէ եթէ այն է սկիզբն և առիթ յաւիտենականքնոյ մահաւան . վասն որոյ հոգրէ է ըդգուշանալ յանձին և գեղեցիկ խորհրդովքնովք մուաց սթափիլ , ողջախոհութեամբ սկնդել զգգայարանս մարմնոյ և հոգւոյ , և արթուն և զուարթուն կանխիսել յաղօթըս և 'ի խոստովանութիւնն , և ասել ըստբանի հոգեկիր վարդապետին . « Տուրզօրութիւնն հոգւոյս կամոց , հնազանդել զկամս մարմնոյս » . Ըստ :

Ըստ Աւագի Տարմայս և պալքագործութեամբ 'ի ոկտոպես ախտս :

Ըարժմունք մարմնոյն չեն ինչ մեղք

մահացու , եթէ ոչ յառաջ գոյցեն 'ի  
չար և 'ի հեշտակիր խորհրդոց և 'ի շտ-  
րադրդիռ ներգործութենէ կամաց ա-  
զատ անձնիշխանութեան . յորմէ ծնու-  
նին պէսպէս զազրագործութիւնք ախ-  
տից չարաց , որք են մահուչափ , և մո-  
հացուցանեն զոգիս՝ եթէ ոչ կանխիցի  
'ի խոստովանութիւն հանդերձ կատա-  
րեալ զզմամբ և ասլաշխարութեամբ :

### ՆԵՇԱԾՔ-ՌԵՄԲ ըԵԼԵՎԱՅ :

Այն է՝ որ զհեշտալուր կամ զվա-  
վաշոտ տռ փանաց բանս լսել ախորժէ ,  
որով ապա սղտորեալ սրտին և խաւա-  
րեալ մտացն՝ վարի 'ի ցանկութիւն մար-  
մնական ախտից , և այլ յայլմէ լեալ՝ ան-  
մըսանայ գլխովին 'ի չարիս : Եւ կամ որ  
և իցէ ձայնք և բանք աղտեղութեան  
առէ . որ հեշտացուցանեն զլսելիս զոգ-  
ջախոհս , և թակարդեն զհոգին 'ի մահ .  
փան որոյ են մեղք մահու չափ :

### ԱՐԱԿՈ-ՌԵՄԲ աՀԱՅ :

Արակութիւն իմա աստէն զյարա-  
տութիւն կամ զյայրատութիւնն , այն  
է խենեշանալն 'ի հայեցուածս . և է  
դժնդակագոյն բան զլսելեաց հեշտալը-

բութիւն . և են ամենայն վայելսութիւն  
 և գեղեցկութիւնք տշխարհիս պատրու-  
 ղականք , որք արատաւորեն զաչս . զո-  
 րոց մի առ մի ասել՝ ձանձրութիւն է  
 լոելեաց , վասն որոյ զմին միայն ցուցա-  
 նեմք , այն է արատ հայել՚ի գեղ գե-  
 մաց կախարդիչ գեղեցկութեան , զոր՚ի  
 նկատել աչաց անզգութեար՝ իսկ և իսկ  
 մոլորեալ մտաց և սրաին՝ վարի ցանկու-  
 թեամբ անկարգ բաղձանաց , և շնոյ ան-  
 դեն՚ի սրտի իւրում ըստ բանի Տէառն .  
 Վ ասն որոյ պարտ է մեղ՚ի տեսանել  
 զայնպիսի գեղ՝ անդեն՚ի բաց դարձու-  
 ցանել զաչս , և ամբառնալ ազօթիւք  
 յերկինս՝ ընդ նմին և զհոգւոյ ակն , և  
 ասել . « Ամենախնամ Տէր՝ դիր պահա-  
 պան աչաց իմոց զերկիւղքո սուրբ , ոչ  
 ևս հայել յարատ » : Եւ այսպէս ըն-  
 կալեալ զշնորհս օգնականութեան Աս-  
 տուծոյ ՚ի պահպանութիւն աչաց մար-  
 մնոյ և հոգւոյ մերոյ , զերծ գտանիմք ՚ի  
 վուանգէ հոգւոյ , յարատ հայեցուածոյ :

### Յանիութեամբ սրտիւ :

Կրկին է ցանկութիւն սրտի , հո-  
 գեսոր և մարմնաւոր : Աստէն ոչ զհո-  
 գւոյն ասէ , որ է առիթ անվախճան եւ

բանութեան, այլ զմարմնական ցանկութենէ սրտի, որ է պատճառ յաւիտենական թշուտութեան : Եւ ոչ զկարեւորաց իսկ առէ, որ են 'ի սնունդ և 'ի պէտօ մարմնոյ կենաց, այլ զանկարգ բաղձանացն, որով անցադաբար բերի յամենայն ցանկութիւնս տշխարհի, ոչ միայն 'ի կարելիս, այլ և յանկարելիսն ձեռներէց լեալ, զոր օրինակ ցանկանութիւն սրտի արքայական աթուաց և բարձրագահ իշխանութեան և փառաց մեծութեան : Եւ բազմիցս ևս պճնագորգ դդեստուց ևս պէսպէս զարդուց 'ի պահուածնս մարմնոյ, երբեմն համադամ կերակրոց և քաղցր ըմպելեաց . մերթ զրօնանաց և մերթ իմաստակական գիտութեանց, զորս ևս առաքեալին երկրաւոր, շնչառար, և դիւական կոչէ : Այս ամենայն ցանկութիւնն է օրտի որ հայի յիրս աշխարհային, և է չարագոյն քան զամենայն ցանկութիւնն յոտի տռ փառաց, զորմէ խօսի աստանօր :

Ի՞ն-Ռեամբ անդաշ :

Թուի թէ զայն առէ, որ զհոտ մահուառնուլ ախորժէ և ոչ զկենաց, հոտ մահու է նախանձ, ատելութիւն, անիւ-

րուտթիւն, սրբեցութիւն, բամբա-  
 սանք, բղջախռհութիւն, և այլք բա-  
 զում որով հեշտացեալ քիմք մարդկան՝  
 անկանին ՚ի գուք ապականութեան :  
 Դակ հոտ կենաց է մաքրութիւն, սրբու-  
 թիւն, արդարութիւն, ողջախռհութիւն,  
 և ոքք միանդամ առաջնորդեն մարդ-  
 կան յերանտկան կեանս, ՚ի հոտ գիտու-  
 թիւն ձշմարտութեան . վասն որոյ ասէ  
 Առաքեայն . « Ամանց հոտ մահուանեէ  
 ՚ի մահ, և ոմանց հոտ կենդանութենեէ  
 ՚ի կեանս » . Բ . Կրն . Բ . 16 . Յաճախ ԺԱ-  
 Խւ որ ինչ հեշտութիւն է մարմնոյ՝ է  
 հոտ մահու . զոր օրինակ Մարիամ մադ-  
 դաղենացի՝ որ կանխաւ առեալ զհոտ  
 մահուան, առներ բուրումն հոտոց ա-  
 նուշից և ծխանելեաց ՚ի հրաւեր հո-  
 մանեաց իւրոց բողարածից՝ իգացուցա-  
 նելով զոնդունս նոցա . ապա զինի զզչ  
 մանն և դարձին էառ զհոտ կենաց, և  
 եղե հոտ անոյշ ՚ի Քրիստոս . և ՚ի նը-  
 շան կատարեալ զզչման և առնլոյ զհոտ  
 անմահութեան կենաց, շիշ մի իւղոյ  
 նարդեան մեծագնոյ, թափեաց ՚ի գլ-  
 լուխ կենարարին մերոյ Յիսուսի, և ջերմ  
 արտասուօք թանայր զտոս նորա, և հե-  
 ռով իւրով ջնջեր և մաքրեր, որով ըն-

կալւու զաստուածային շնորհս 'ի թու-  
զութիւն մեղաց իւրոց , վճարեալ ըդ-  
պարտիս իւր անուշահոտ իւղով և կո-  
րեոր տրտասուօքն . || առ 7 :

### Պատշաճ-Աւանդ բերանոյ :

Պատշաճութիւն բերանոյն է ըզ-  
դազրալի բանս ցանկութեան և բղջա-  
խոհութեան խօսել խենեշաբար , որով  
շարժին ինքեանք , և շարժեն զայլս յան-  
կարգ ցանկութիւն : Քանզի բերան ոչ  
եթէ տուաւ մարդոց 'ի ծառայել յան-  
արժանս , 'ի ցոփաբանութիւն և 'ի մո-  
լեկան խօսս , այլ յօրհնութիւն և 'ի փա-  
ռաբանութիւն Ետութցուծոյ : Եյսպէս կո-  
չի և ակն պակշոտեալ , որ նշանակէ ա-  
կըն կամ հայեցուած անառակ և յայ-  
րաս : Պակշոտեալ բան կոչէ և Փարագե-  
ցի , Եր . 173 . զիսելագարական և զբանդա-  
գուշանաց զրոյցան , որով ջանայր Դեն  
շասլուհ պարսիկ իշխան գողանալ զմի-  
տըս սուրբ նահատակացն Կռնդեանց ,  
և շրջել զնոսա 'ի քէշ որմզդական մո-  
լորութեան :

### Ենթա-Հիալ-Աւանդ :

Ենթաթիալութիւնն է մեղք բնաւ-

ւորեալ յունակութեան, որով չարաշաբ  
մեղանչէ՝ ի մոլեկան կիրս մարմնոյն, յան-  
կարգ կերակուրս և յըմակելիս, և ՚ի մար-  
մնական հեշտութիւնս, յորս զառածի  
անհամբերութեամբ և անժուժու-  
թեամբ, չունելով դշափ և զսահման ՚ի  
բաղձանս սրախին, որում և ասի անզուսպ  
և անսանձ վարք. յորմէ ծագին անբերելի  
մեղք մահու չափ, որոյ վասն հուր երկ-  
նատեղաց անկաւ ՚ի Առդոմ, ըստ այնու.  
« Ենժուժկալութիւնն էած ՚ի Առդոմ  
զհրացան բարկութիւն » . Ուիլֆ : Են-  
ժուժկալութեամբ յանցեան նախաս-  
տեղծք ՚ի դրախտին, և արտաքսեցան  
յայս երկիր անիծակուռ : Ենժուժկա-  
լութեամբ կորոյս Եսաւ զանդրանկու-  
թիւն իւր՝ փոխանակեալ ընդ չնշին ու-  
սպեաթանին : Ենժուժկալութեամբ մե-  
զաւ Եմն ՚ի Թամար քոյքն Երեսողումայ,  
և սպանաւ ՚ի նմանէ :

### Եռայդութեամբ :

Եռայդութիւն նոյն է ընդ զեղ-  
խութեան, իմա անչափութեամբ բե-  
րիւ ՚ի կեր և յումպ. և պատճառի շու-  
այտութիւնն ՚ի հեղդութենէ և ՚ի մեղ-  
կութենէ անձին, ըստ Ասկերերանի .

քանզի ոչ եթէ որովայնն է , ասէ , որ  
շուայտի , այլ մերով հեղգութեամբ  
շուայտանամք . յուտելոյ և յըմպելոյ ոչ  
չարիք և ոչ մեղք , այլ 'ի հեղգութենէ  
և յանյագութենէ : Տես , ասէ , զի սա-  
տանայ ոչ եկեր և ոչ արբ , և անկառ ՚ի  
փառաց և յանդունդս էջ . իսկ Պօղոս  
եկեր և արբ , և արժանի եղի երկեային  
փառաց և ՚ի յերկինս ել : Ըուայտու-  
թիւն ծնող է արբեցութեան , յորմէ ա-  
մենայն չարիք , ըստ այնմ . « Չարաչար  
շուայտանօք տափանաց տոգորէր ընդ  
ամենայն մեղս » . ՚ի Շառընկիւ :

Եւ արբեցութեամբ , մեռյ Աւագո-ծոյ :

Արբեցութիւնն է կամաւոր մոլե-  
գնութիւն . քանզի զօրութիւն ոգեաց  
ելանէ յուղեղն , խանգարէ զիմոցակա-  
նութիւնն , սյլայլէ զգէմս և զերեակայ-  
ութիւնն , և խոռվեալ վրդովին ամենայն  
զգայութիւնք : ՚ի կըկին միտս իմանի ար-  
բեցութիւն ՚ի սուրբ Վիրս . առաջին  
զգալի գինեաւ , յորմէ անչափս արբեալ  
ումեք՝ կորուսանէ զբանականութիւն .  
որս զհետ գայ անմտութիւն , ցատումն .  
յանդգնութիւն , սպանութիւն , ծանա-  
կութիւն . որպէս ՚Կոյ արբեալ յիւրա-

տունկ այդւոյն՝ մերկացաւ՝ ի հանգելը-  
ձիցն, և եղի այսպի և կատակ որդւոյ իւ-  
րում։ Ուստի որ չարագոյնն է քան զա-  
մենայն՝ բառնի և երկիւղն Արտուծոյ ՚ի  
սրաեւ արբեցողին, և յամենայն ոճիրս  
լինի ձեռներեց. քանզի երկիւղն Ար-  
տուծոյ սանձ իմն է կրից անզգամաց,  
ըստ այնմ. « Երկիւղիւ Տեառն խորշի  
ամենայն ոք ՚ի չարեւ», Արակ. ԺԵ. 27:  
Ա այ տոյ իմաստունն այնոցիկ՝ որ յամե-  
նըն ՚ի գինւոջ, և պատուիրեւ չարբե-  
նալ գինեաւ և չարձակել զաշս ՚ի բա-  
ժակս, զի մի շրջիցիք, առեւ մերկագոյն  
և քան զանդիտուն. այսինքն մերկո-  
ցեալ յամենայն փառաց և պատուոյ.  
Արակ. ԻԳ. 29—31:

Երկրորդ արբեցու թիւնն է մոլեկան  
կրից և ցանկութեանց աշխարհիս, վասն  
որոյ առեւ Եսայի. « Ա այ որ արբեալքդ  
եք և ոչ ՚ի գինւոյ », ԻՀ. 2: Եւ առա-  
քեալն Պետրոս յասելն. « Արք գնացին գի-  
ջութեամբ, ցանկու թեամբ, գինե հո-  
րու թեամբ, անառակու թեամբ՝ ար-  
բեցու թեամբ », Ա. ՊԵ. Դ. 3. գինե-  
հարու թեամբ իմանայ զարբենոլն զգա-  
լի գինեաւ, իոկ արբեցու թեամբ՝ զայ-  
լոց ախտից զցանկու թիւնն. քանզի ըստ

Ասրդսի, վաւաշոտ ցանկութիւնն ար-  
բեցութիւնէ մտաց և խելագարութիւն  
ողւոյ. արբեցութիւնէ ագահութիւնն  
և ընչիցն ցանկութիւն. արբեցութիւն  
է ցասումն և բարկութիւն, և որ ըստ  
ոսցին ստեղի. Ա. Պիեռ. Ճառ Ու. Կալա բացէ  
՚ի բաց հրաժարիլ պարտէ ՚ի կրկին ար-  
բեցութեանց . և յայնժամ ըստ ասից  
որը ՞օքն մերոյ | ուսաւորչի, ՚ի պա-  
կասել որովայնամոլութեան և արբե-  
ցութեան, ցանկութեան բոցն շիջանի,  
և սրբութիւնն և արդարութիւնն բոր-  
բոքի պահօքն պնդեալ. Յաճանի. Ճառ Ու.

5. ԱՌԵՂՋ ՀԱՐԱԲ ԱՆՈՒԹԵԱՄԲ ԼԵՂՌԻԱ, ԱԳԱ-  
ԽՈՍՈՒԹԵԱՄԲ, ԱՊԵՎ ԵՐԴԱՄԲ, ԵՐԴԻԱՊԱՆԵՐ-  
ԹԵԱՄԲ, ԿԱԽԱՆԱԽԵԱՄԲ, ՎԼՃԱԲ ԱՆՈՒԹԵԱՄԲ,  
ԲԱՆԱԱՐԴԵԱՄԲ, ՀՐԴԻՐԴՈՒԹԵԱՄԲ, ՏԱ-  
ՐԱՐԴԻՐԲԱՆՈՒԹԵԱՄԲ, Լ ՃԱՂՌ-, ՊՐԱԽՈՍՈՒԹԵԱՄԲ,  
ՀԵՐՋԱԽՈԽՈՒԹԵԱՄԲ, Լ ԱՆԻՃԱԲ ԱՆՈՒԹԵԱՄԲ, ԿԸՐ-  
ԳԵԼԸՆ, ՇՃԳԱՆԵԼԸՆ, ԲԱՋԲԱՍԵԼԸՆ, Լ ՀԱՅՀՈՅԵ-  
ԼԸՆ, ԹԵՂՋ ԱՆՊՈՒՑՈՅ :

ԱՌԵՂՋ ՀԱՐԱԲ ԱՆՈՒԹԵԱՄԲ ԼԵՂՌԻԱ :

Չարաբանութիւնէ ամենայն բան  
լեզուի որ ելանէ ՚ի բերանոյ առ ՚ի չարփս

ընկերին . ուստի շարաբանո-թիւն աստէն  
դնի իրք բացայացանալ , և հետագայ  
գոյականքդ բացայացան զնոյն : Եւ զի  
ամենայն խորհուրդը չար ՚ի սրտէ ե-  
լեալ գան ՚ի լեզուն , վասն որոց խրատէ  
սուրբն Յակոբ Ածքնայ հայրապետաց-  
սելն . “ Ո՞ի տար լեզուի քում զամենայն  
խորհուրդս , որ ելանեն ՚ի վերաց սրտի  
քո ” : Եւ Տէրն ասէ . “ Ի բանից քոց  
արդարացիս , և ՚ի բանից քոց պար-  
տաւորեսցիս ո . Առաջ . ձի . 57 : Ապա  
սահմանական պարտ է չարաբան լեզ-  
ուի՝ զլուութիւնն Քրիստոսի , որում ապ-  
տակ ածեալ անարդեցին զնա՝ համբե-  
րեաց . և հայհոյեալ թուք յերեսո ար-  
ձակեցին , և լոեաց . որ սաստէր ալեաց  
ծովու և հանդարտեցուցանէր , և այ-  
սոց չարաց՝ և պապանձեալ կարկեցու-  
ցանէր , այլ յանարդանս և ՚ի չարչարա-  
նըս անդ՝ լուռ և եթ կայր . Առաջ . իջ .  
65 : Առաջ . ձի . 61 :

### Արախօսութեամբ :

Ատախօսութիւնն է ասել և խօսել  
զոր չէ այնպէս և կամ բնաւ իսկ չէ եւ  
զեալ , և այնու հաւանեցուցանել զայլս՝  
արկանելով ՚ի խարէութիւն , յորմէ բա-

զում անդամ ծնանին մեծամեծ վտանգք  
 և վնասը հոգւց և մարմնոց : Հեղինակ  
 ստութեան եղեւ սատանոց , խարելով  
 'ի գրախոտին զիշւա և 'ի ձեռն նորա զիշ  
 դամ , որոց հաւատալով բանիցն ստու-  
 թեան՝ կերան յարգելեալ պաղցն և ան-  
 կան 'ի փառաց . այսպէս և որ խօսի սուտ՝  
 համարի որդի սատանացի , ըստ այնմ՝  
 « Հյորժամ խօսիցի (ոք) սուտ՝ յիւրոց  
 անոնի խօսի , զի սուտ է և հայր նորա » .  
 Ծով . Ը . 44 : « Բանզի սատանայ՝ որ յար-  
 մարապէս ստուգաթանի սուտ է նա , և  
 ստախօսն՝ հաւատարին միմեանց 'ի յշա-  
 նալ և 'ի ծնանելն զստութիւն . վասն  
 որոյ պատուիրէ առաքեալն Պօղոս 'ի  
 բաց մերկանալ զհին մարդն զապակա-  
 նեալն յանկութեամբք խարեւութեանն  
 և զգենու լզնոր մարդն արդարութեամբք  
 և որբութեամբք ճշմարտութեանն , և  
 ասէ . « Ե բաց ընկեցեք զստութիւն .  
 խօսեցարուք զճշմարտութիւն իւրա-  
 քանչիւր ընդ ընկերի իւրումն . Եթե .  
 Դ . 22—25 : Ասլոյ յայտ է թէ որ զստու-  
 խօսի՝ զստանաց յանձին իւրում զգե-  
 ցեալ է և միացեալ ընդ նմա . յորմէ,  
 պարտիմբք հրաժարիլ և յամենայն խա-  
 բէութենէ նորա , և երկինչել յաւէտ 'ի

գոտասասանացն Աստուծոյ, բայ Ասղմուսին . Ե . 7. “ Կորուսանես զամենեսեան որ խօսին զառւտ ” :

### Առաջ Երրութեամբ :

Երդումն սուտյառաջ դայ ՚ի ըընաւորեալ ստախօսութենէ, առ ՚ի հաւատարիմ առնել զառւտ բանս իւր . և պատճառի ՚ի դատարկութենէ արդարութեան և յաներկեղութենէ Աստուծոյ. և է հակառ ակ բարեպաշտութեան, որոյ պառուղն է արդարութիւն և սրբբութիւն առ Աստուծ . և քրիստոսական սուրբ կրօնիցու : Եւ այս մեղք գըմնդակագոյն է քան զատախօսութիւնն . վասն զի կրկնակի մեղանէլ, նախ ստախօսութեամբ, երկրորդ սուտ երդմամբ յանուն Աստուծոյ, և արարածոյ նորա, հրեշտակաց և սրբոց, վասն որոյ Տէրն մեր արդելու բնաւին ՚ի սուտ երդնլոյ, “ Եմենի ին մի սուտ երդնուլ առէ, մի յերկինս, զի աթոռ է Աստուծոյ. և մի յերկիր, զի սրտուանդան է ստից նորա . և մի յԵրաւասաղէմ, զի քաղաք է մեծի աբբայի . Ատքն . Ե . ՅՅ . ԻԳ . 16 : Յակ . Ե . 12 : Ակ . ԻԳ . 9 : “ Այլ եղիցի ձեր բան, առէ, այսն՝ այս, և ոչն՝ ոչ, զի

աւելին քան զայն 'ի չարէն է : Աշ Ոսկեթերան 'ի պատուիրելն ժողովրդեան չերդնուլ սուտ, յաւելու ասել . “ Ոչ ասեմ զյոբներդմնութիւնն միայն , այլ և զնոսին իսկ զըարի երգմունան կարձել պատուիրեմ” . Ճառ Ի՞ւ : Քանզի յոր ինչ և երդնուցու ոք, եթէ յերկինս և եթէ յեկեղեցի և 'ի սեղանն , առ Երտուած վերաբերի ամենայն , որ է ամենայն ուրեք և յամենեսին . վասն որոյ որ երդնու սուտ, 'ի վկայութիւն կոչէ զիստուած , որ է մեղք ծանրագոյն յոյժ և յաւիտենական գատապրտութեան որժանի :

### ԱՐԴԻԱԿԱՆԱԳՐ-ԱՆՎԱՅՐ :

Այն է զանցառութիւն երգմանն՝ զոր երդնու ոք յառաջադոյն 'ի հաստատութիւն բանից իւրոց , վկայ կոչելով զիստուած կամ զատառուած այինս . և կամ գանաւորի ընդ Եստուծոյ կամ ընդ սուրբու և կամ ընդ ընկերին՝ երդուեալ յանձն իւր : Աշ համարի ու խտազանց և ու խտադրուժ նա որ ընդ Եստուծոյ գանաւորեալ երգմամբ , անցանէ զնովու երգմեահարութեամբն , և գտանի պարտաւոր 'ի հատուցումն երգմանն :

Խոկ որ ընդ ընկերին դաշնագիր լետը  
անարդիցէ վերդումնն , համարի խարե-  
բոյ . երկոքեան ևս են յանցանք հակա-  
ռակ կամաց , և զանցառուքն պարտա-  
ւորեալ արդարութեան , և ամբարիչտ  
դատեալ . վասն որոյ դեղեցիկ խրատէ  
իմաստունն (Աիրաք , “ Հանուն սրբոյն  
(Վատուծոյ ) երդմամբ մի սովորիր ասէ ,  
զի որ յաճախէ . երդնուլ՝ ’ի մեղաց ոչ  
աղատի . զի թէ ստիցէ՝ մեղք նորա ’ի  
մերայ նորա , և թէ անցցէ ընդ երդու-  
մըն՝ կրկին վիաս ։ . Աիրաք . ԻԳ . 10—12 :  
Վաղա երդմազանցն , ստերդումնն և  
ստախօսն պարտին խոստովանութեամբ  
և զղջմամբ սրբիլ՝ ’ի մեղացս , և հրա-  
ժարել՝ ’ի չոր ստվորութենէս :

### Հակառակութեամբ :

Հակառակութիւնէ բանիւ և դոր-  
ծով հակառակիլ ընդ ումեք , դիտաւո-  
րութեամբ արդելսյ զնոս յինչ և իցէ  
դործոյ և ’ի կարծեաց մտաց : Եթէ հա-  
կառակութիւնն իցէ ընդդէմբարւոյ և  
ճշմարտութեան , որպէս աստէն իմանի ,  
է մեղք մահու չափ . և է ծնունդ նա-  
խանձու , յորմէ պատճառին պէսպէս  
չարիք , կռիւ , հայհոյութիւն , անէ ծք ,

և ոյլն : Խսկ ըստ սռաքելոյն Յակոբաց՝  
ամենայն հակառակութիւնք յորմէ և  
սրատերազմունք՝ յառաջ գան յախտա-  
ւոր ցանկութեանց մարդոյ . Յակ . Դ . 1 :  
Վ ասն որոյ և Տէրն մեր Յիսուս առ ՚ի  
զառաջն առնուլ ամենայն չարեաց , պա-  
տուիրէ ամենն ին խսկ չկալ հակառակ  
չարին . Մատթ . Ե . ৩9 : Հակառակու-  
թիւնն եթէ ընդդէմ ճշմարտութեան  
իցէ , է հայհոյութիւն զառոգւոյն որբոյ ,  
և է մեղք անթողի . խսկ եթէ առ մար-  
դիկ յի՞նչ և իցէ իրս , համարի այն ՚ի  
բարձմանէ սիրոյն . և զի ՚ի բառնալ սի-  
րոյն և ՚ի տիրել հակառակութեան՝ խա-  
փանին ամենայն դործք բարիք , տեղի  
տան այնուհետեւ ամենայն օրէնք ար-  
դարտութեան , բառնի հնազանդութիւն  
և երկիւզն իշխանութեան , մանաւանդ  
եթէ երկիւզն Մատուծոյ ՚ի սրտէ մարդ-  
կան . որսկէս զլոյրենացեալ և զանընդել  
գաղանս սկսանին խածատել և գիշատել  
զիրեարս . և յայնժամ համարի հակա-  
ռակութիւնն դժնդակ մեղք : Խսկ եթէ  
՚ի ողաշտականութիւն ճշմարտութեան ի-  
ցէ հակառակութիւնն , ներելի է . բայց  
ովարտ է զգուշանալ զի մի՛ ՚ի յաճախել  
հակառակութեան , դարձցի և եղիցի

այն մեղք մահու չտի . այլ անդէն ար-  
ժան է զխաղաղութիւն համբուրել , և  
շտալ տեղի ատելութեան , զի ըստ ի-  
մասանոյն . « Օ ատելութիւն գրգռէ հա-  
կառակութիւն , և զամենեսին որ ոչ հա-  
կառակին՝ ծածկէ սէր ». Իմաստ . ձ . 12 :

### Ա Հճաբանո-Ակամի :

Ա իճաբանութիւնն ըստ մասիննոյն  
է ընդ հակառակութեան . և է երկուս-  
տեք զիմամարտութիւն բանիւ յինչ և  
իցէ առարկութիւնս . և է չար , զի է  
նշան հպարտութեան , յորմէ ծնանի և  
ատելութիւն : Աղա պարտ է մեղ զգու-  
շանալ և հեռի կալ 'ի վիճաբանութե-  
նէ , զի մի օնուսցուք 'ի մեղ զմայրն ա-  
մենայն չարեաց զհպարտութիւն , և  
մի լիցուք առիթ նախանձու այլոց , ըստ  
այնմ . « Շռաւել 'ի վիճաբանութենէն՝  
ամբարտաւանութեան երեսումն , և հաս-  
տատութիւն նախանձուն 'ի հոգիս » .  
Հարսեղ , Ի Գիրս հարցմանց :

### Բանսարիո-Ակամի :

Բանսարկութիւն է գործ սաստ-  
նայական , որով զբանս միոյ արկանէ 'ի  
լսելիս այլոց , և թէ ճշմարիս և եթէ

սուտ : Եշ այր բանսարկու հանապաղ  
չարտիսօնէ զայլոց , և արկանէ թշնա-  
մութիւն 'ի մէջնացա զբարտութեամբ ,  
և զբարտութս յօդելոց ոչ դադարի երբէք ,  
վասն որոց տսէ Ասկեբերան . “ Յոքա որ  
զանձանց բարիս ինչ ոչ գիտեն , զբօսանս  
ինքեանց վարկանին , չարիս կարկատեն  
զայլոց ” . և Լամբրոնացին զբանսարկուն  
իմանայ զնոյն ինքն զոատանայն՝ յասելն .  
“ Շանսարկու և սատանայ անուանեմք  
զնա 'ի գործոյն , զի միշտ զբանս չար խոր-  
հրդոյն արկանէ 'ի սիրաս և 'ի միտս մեր ” :

### Ը գ յ ա գ ո ւ թ ե ա մ բ :

Ը ոգմոգութիւնէ բանսարկութիւն  
շողոմարար , և բան շողոքորթիչ առ որ-  
սալ զոք 'ի հրապոյրս չարութեան . վասն  
որոց և այր շոգմոգ լեզուաւն քաղցրա-  
բանէ , այլ 'ի սրտին ունի զմոյն ատե-  
լութեան . շրթունք իւր մեզրածորեն ,  
այլ սիրտնորա կրէ զիեզի գառնութեան .  
և կամի զմթերեալ թոյն իւր հեղուլ  
գաղտ 'ի մարդիկ , որում ասի և նենդա-  
ւոր . վասն զի ծնունդ է սա նենդու-  
թեան , աչառանօք երեսաց շողոմէ ըդ  
մարդ , թշնամանելով զայլս , զի շարժես-  
ցէ զնա 'ի գործս վնասակար , և կամ

արհամարհելով զոյլ՝ պատուէ զնա և  
մեծարէ , որով և բանսարկէ շողոքոր-  
թութեամբ՝ ասելով . Չէ պարտ իմաս-  
տնոյ համբերել առն տգիտի, և աղնուա-  
կանի՝ տանիլ չնչին և նուաստ արանց .  
դոմի զիրէմինդրութիւն , իբր գործ  
աղնուականի , և ծաղը առնէ զհամբե-  
րութեամբ . զաղբաստ թիւն արհա-  
մարհէ , և զօգուտ զրկողութեան և  
գողութեան գովութեամբ 'ի մէջ բերէ .  
զհեշտութիւն և զհեղդութիւն մարմնոյ  
քարոզէ . քանզի և բառդ շահնշահ՝ ըստ  
բանասիրաց նշանակէ՝ շոգւով բերանոյ  
մոզել զանելիս , այն է կախարդել զք  
բանսարկու լեզուաւ :

### Պատութիւն :

Պատութիւն է գաղտնի չարախոսու-  
թիւն լեզուի զընկերէն , առ 'ի քակտե-  
լոց զհշմարիտ քարեկամութիւնն . և կամ  
քսութիւն է՝ որ գաղտ շնչէ յունկն այ-  
լոց ստութեամբ կամ ստուգութեամբ .  
տարածայնելով մուծանէ զխուախութիւն  
և զթշնամութիւն 'ի մէջ մարդկան , առ  
'ի լուծանել զոէր քարեկամաց , ընտա-  
նեաց , ազդականաց և սիրելեաց , եղ-  
ծանելով զանուն և զհամբաւ , և չա-

բաշար վրդովէ զամենեսին , ուստի առ  
սէ իմաստունն Աթրոք . Իջ . 18 . “ Օքք  
ուն և զերկիսօն առ հասարակ նպամեց  
ցէք , զի զբազումն ՚ի խաղաղութեան  
ստուակեցին . . . զբազաքս հզօրս կորչ  
ծանեաց (քսուն ) և զաղարանս մեւ  
ծամեծս քակեաց ” . . . Քսութիւն տա-  
րագրաբուց քան զմահ չար ” . Ակ .  
Իջ . 6 . Վայ պահեսցուք զանձինս մեր  
՚ի քսութենէ , և խոստովան լիցուք քա-  
հանային՝ եթէ ինչ մի վետեցաք ընկե-  
րին ՚ի ձեռն քսու և փառքուս բանից  
մերոց :

“ Կապարիստանութեամբ ” :

“ Կատարկաբանութիւնն է ամենայն  
խօսք և զբոյցք անիմաստք , անօդուոք  
և անհաստատ խորհուրդք , զար խօսին  
մորդիկ առանց փոյթ ունելց դվախճա-  
նէն , և ծախեն ընդ վայր զժամանակ  
իւրեանց՝ բարբանջելով տառ և անդ .  
և մեղանչեն չարաչար՝ թէ և ոչ ինչ վե-  
նաս կարծիցեն ծնանիլ ՚ի դատարկաբա-  
նութեանց անտի : Եւ որ գատարկա-  
բանն է իրաւամք ունի դատիլ և հար-  
ցափորձիլ և տալ համարս յաւուք աւ-  
հեղին , վասն որոյ առէ ինքն ՚Պրիատու-

“ Ի՞նդ ամենայն դաստիարկ քանի զոր խօս-  
սիցին մարդիկ , տացեն համար յաւու-  
րըն դատաստանի ո . Այսու ։ ՃԲ . 36 :

### Ե- Ծաղը :

Յէպէտ և ծաղըն լստ ինքեան չէ  
ինչ չար , ոակայն անչափ ծաղըն լինի չա-  
րագոյն և առիթ մեղաց , ուստի և ծաղ-  
ըսէրն ոչ դուզնափեայ երկիւղիւ կաց-  
ցէ առաջի ահեղ ատենին Քրիստոսի .  
ապտ յիրաւի ուրեմն ասէ ոմն . “ Ի՞նդ-  
էր ծիծաղիս վայրապար , երկիր , դու-  
ցէ որպէս օձն խաբեաց զլւա՝ խաբի-  
ցիս և դու ։ Քանզի սատանայ ’ի ձեռն  
ծաղու մօւտ գտեալ սպրդի ’ի մարդ ,  
և առեալ ածէ զնա անդ՝ ուր լալ է  
աչաց և կրծել ատամանց : Այսպէս որք  
առ ջրհեղեղաւն ծիծաղէին՝ սատակե-  
ցան . ծիծաղեցաւ և Քամ որդին՝ Նոյի ,  
վասն որոյ կորոյս զորդիութեանն պա-  
տիւ , և եղեւ ծառայ եղբարց : Օ իծա-  
ղեցան և Ասդոմացիք , ուստի և հրակէղ  
այրեցան : Օ իծաղեցաւ Ասուա , վասն  
որոյ և պատուհասեցաւ : Ապա քանի ա-  
ռաւել և մեք քրիստոնեայքս սպատու-  
հասիցիմք վասն տարապարտ ծաղու ,  
փոխանակ արտմելոյ մեր ’ի վերայ մեղաց

մերոց . վասն որոյ վայ տայ մեղ Տէրն մեք  
ասելով . « Ա այ ձեզ որ ծիծաղիքդ այ  
ժըմ , զի սգայցէք և լայցէք » . ' Կ ու կ .  
Զ . 25 : Ի աղում անդամ որ ըստ աշխար-  
հի է ծաղըն , դիտէ ծնանել բանս դար-  
շելիս , և 'ի բանից անտի գործս աղտե-  
ղիս , որոց պատիմն ոչ միայն ժամանա-  
կաւոր , այլ և յաւիտենական . քանզի  
սատանայ զորոգայթս մահու ծածկեալ  
ունի ընդ ծաղու , վասն որոյ 'ի դէակ ու-  
րեմն ասէ ոմն 'ի վարդապետաց . « Ա ասն  
դատարկաբանութեան և ծաղրածու-  
թեան գոյ պատիմ և պատուհաս 'ի  
Տեառնէ ստուգապէս . և զի շատախօ-  
սութեամբ և ծաղրածութեամբ վշտա-  
ցուցանեմք զի ստուած » :

### Օ քափօսութիւններ :

Օ քափօսութիւնն է 'ի զուր և ընդ  
փոյր ասացեալ խօսք , որոյ մի ծայրն ե-  
լանէ 'ի զրապարտութիւն . և համարին  
զրափօսութիւննը ամենայն բանք հերե-  
սիովտայց ընդդէմ խօսեցեալ սուրբ գլ-  
րոց : Օ քափօսութիւննը են և ամենայն  
բաջազանք և կարկատուն բանք զօր ըն-  
ձեռնեն ոմանք զորբոց առաքելոց՝ տա-  
յով նոցա առանձնաշնորհութիւնս ընդ-

դէմ վարդապետութեանց Յիսուսի և  
բանից սուրբ աւետարանին, որպէս հը-  
ռովմէ աղաւանք զՊետրոսէ, որով և ար-  
կանեն հերձուածս 'ի մէջ քրիստոնէից  
դրախոսութեամբը իւրեանց, վասն որոյ  
և մեղանչեն ընդդէմ ամբողջութեան  
սրբոյ հաւատոյս և կաթուղիկէ սուրբ  
Ակեղեցւոյս :

### ՀԵՐՃԱԽՈՍՈՒԹԵԱՆԲ :

Հերձախոսութիւն է խօսելքանս  
հերձուածողականս . ոչ զնոցանէ ասէ  
որք յայտնի հերձուածողը են և հերետի-  
կոսք, և հերքեալ հատեալ 'ի միութե-  
նէ առաքելական սուրբ Ակեղեցւոյս,  
այլ զայնոցիկ ասէ՝ որ յամառեալ մոլորին  
մտօք կամ բանիւ ընդդէմ ծանուցեալ  
Ճշմարիտ բանի ուղղափառ վարդապե-  
տութեան . 'ի հերձամիտ գրոց կամ 'ի  
մոլորամիտ անձանց ընկալեալ զանուղ-  
ղափառ ուսմունս՝ գիտութեամբ կամ  
անդիտութեամբ 'ի նոյնս պինդ կացեալ  
խօսին այլոց 'ի գայթակղութիւն, յո-  
րոց պատուիրէ առաքեալն հեռանալ  
ասելով. « Յառնէ հերձուածողէ՝ յետ  
միանդամ և երկիցս խրատելոյ՝ հրաժա-  
րեսջիր. գիտառջիր՝ զի թիւրեալ է այն»

սղիսին, և մեղանչէ անձամբ զանձն դա-  
տապարտեալ” . Տիգ . Գ . 10 :

Հերձախօսութեամբ իմանին և զր-  
րյցք երկպառակիչք , զոր սերմանեն  
չարասէրք ’ի մէջ ընտանեաց , բարեկա-  
մաց և ժողովրդոց սիրով կապակցելոց ,  
առ ’ի քակտել զնոսա ’ի միմեանց . և փո-  
խանակ ընդ նորա արմատացուցանել  
զհերձումն , զկագ , և զկոիւ . վասն որոյ  
մեղանչն չարաչար :

### ԵՌ անիծաբանութեամբ :

Անիծաբանութիւն է չարիս մաղ-  
թել ումեք կամ անձին բանիւ բերանոյ ,  
զի այլ է և անիծանել զոք սրտիւ , բառ  
ոյնմ . “ Իներանովք իւրեանց օրհնէին ,  
և սրտիւք անիծանէին ” . Այս . ԿԱ . 5 :  
Խակ բանիւ անիծանելն է կարդալ ու-  
մեք նզովս եթէ յիրաւի և եթէ յանի-  
րաւ , և է մեղանչումն ընդդէմ Աստու-  
ծոյ . քանզի մարդն է պատկեր Աստու-  
ծոյ , զոր ’ի թշնամանելն՝ թշնամանի և Աս-  
տուած , և յայնժամ ոչինչ օգնեն օրհ-  
նութիւնք որ ’ի նոյն անիծաբեր բերա-  
նոյն ելանեն . վասն որոյ ասէ շնորհալին  
Ասրդիս . “ Օ ինչ շահ յօրհնութենէն  
քեզ լինիցի սվ մարդ , յորժամ անիծիւք ”

զպատկեր Աստուծոյ թշնամանես ա. Յակովի Դառ ը: Չար է ապա անիծանել ըղմարդիկ և զարարածս ամենայն . վասն որոյ պատուիրէ առաքեալն Պօղոս ասելով . “Օքհնեցէք զանիծիչս ձեր , օքհնեցէք և մի անիծանէք” . Հառավ. ՃԲ. 14: Եւ Տէրն մեր խրատէ նոյնպէս փոխանակ անիծաբանութեան օքհնել զտուող սրն անիծից . “Օքհնեցէք ասէ՝ զանիծիչս ձեր , բարի արարէք ատելեաց ձերոց ա. Ապաֆ. Ե. 44:

### Տըսնջելով:

Տըսունջն է գաղտնի զրոյց զբնկերէն , կամ անսպատճառ գիմախօսութիւն , և կամ մեղադրանք ինչ ընդդէմ հրամանի մեծաւորաց կամ բարեկարգութեան , և ընդդէմ Աստուծոյ իսկ տեսչութեան , որ ոչ գտարի երբէք ’ի հեղուլ աննախանձաբար զարարդես իւր ’ի մարդիկ , վասն որոյ ասէ զտրաբն ջողաց զԱստուծոյ մեկնին կաթուղիկեաց . Յառաւ. Դառ բ. “Ի՞ւրապատիկ երախտիս գտեալ Աստուծոյ և բարիս՝ ապաշնորհ առ երախտաւորն գտանէին՝ տրանջելով զնմանէ ա. Ուստի մեծապէս մեղանչեն ոչ որբ զԱստուծոյ և եթ , այլ

և ոյք զմարդկանէ ևս բառնան տրտունջ,  
 կորուսեալ զհամբերութիւնն՝ որ հիմն  
 է ամենայն առաքինութեանց. վասն որոյ  
 գեղեցիկ իմն սահմանի տրտունջն, այս-  
 ինքն տրտունջն է կորուստ համբերու-  
 թեան: Ապա որբ միանգամ տրտնջեն՝  
 զի՞ստուած ՚ի բարկութիւն ածեն, որ-  
 պէս Խորայէլ զի՞ստուծոյ և զի՞սլիսիսէ  
 յանաղատի անդ, վասն որոյ և չեղեն  
 արժանի Երկրին աւետեաց, այլ և չո-  
 քաշար պատուհասիւք պատուհասեցան.  
 որպէս Երբեմն հուր ՚ի Տեառնէ Ելեալ՝  
 Եկեր զմասն ինչ բանակին, վասն որոյ  
 դիմեաց ժողովուրդն առ Վոլսէս, որոյ  
 միջնորդ լեալ առ Աստուած, շիջու և  
 դադարեաց հուրն. Թառ-ոյ ՃԱ: Այս-  
 պէս պատժին ամենեքեան ոյք տրտնջեն՝  
 զի՞ստուծոյ զտուողէն բարեաց. ուստի  
 սկարտ է համբերել ամենայնի և մի կար-  
 ձամտիլ, զի մի տաղալիցի առաքինու-  
 թեան հիմն, և շարժիցի անբարկանա-  
 լին Աստուած ՚ի բարկութիւն, և գլո-  
 ցուք զիորուստ անձանց մերոց. այլ յա-  
 մենայնի գոհանալով փառաւոր առնել  
 զի՞ստուած և ոչ տժգոհիլ. զի տրտունջ  
 ՚ի տժգոհութենէ անտի ծնանի, վասն  
 որոյ յարէ ասելով.

### Վ.ՃԳՈՀԵԼՎՆ:

Վժգոհութիւն է տրտնջել՝ ի սրախ,  
յորմէ արտունջ՝ ի բերանի . տժգոհի ոք  
զվիճակէ իւրմէ , զդժբաղդութեանց ,  
զընկերաց , զընտանեաց , զհիւանդու-  
թենէն և զանցաջողութենէ , նաև որ  
չարագոյնն է՝ զեախախնամութենէն Վա-  
սուծոյ , որում հետեի և բամբասանք ,  
զոր և զհետ բերէ յասեն .

### Վ.ԱՄԲԱՍԵԼՎՆ:

Վամբասանքն յատելութենէ ծնու-  
նի , զի ոչ բամբասեալ՝ եթէ ոչ նախ ա-  
տեցեալ . Իսկ բամբասանքն է իբր բամբ  
սցինքն դպրուձայն առացուած , և կամ  
եթէ ախորժես՝ ի բեմի առացեալ բանք .  
քանդի որ բամբասէ՝ չամաչէ երբէք ,  
այլ իբր՝ ի հրապարակի չարախօսէ , նա-  
խատէ և մեղադրէ զայլս : Եթէ փոխա-  
նակ ընկալեալ չարեացն ոք բամբասիցէ ,  
լուիցէ զբան առաքելցն Պիետրսի որ  
ասէ զոյդ և համաձայն տէրունեան բա-  
նիցն . « Ո՞ի չար փոխանակ չարի հա-  
տուցանել , կամ բամբասանս ընդ բամ-  
բասանաց » . Ա . Պիետր . Գ . . 9 : Եւ սուրբն  
Պիետրոս գտատապարտ առնէ զբամբա-  
սաղսն և տարագրէ յաբքայութենէն »

ասելով. « Եամբասողը զարքայութիւն  
Ետուծոյ ոչ ժառանգեն», և. Արձն., օ. 10:  
Եպա պարտ է՝ ի բաց փախչիլ՝ ի բամբա-  
սանաց և մի տարապարտ կորուսանելդհո-  
գիս. և փութալ՝ ի խոստովանութի եթէ  
յանգէտս կամ յակամայս զոք բամբասե-  
ցաք, յիրաւի և կամ յանիրաւի. զի զկնի  
բազում բամբասանաց հետեւի և հայհոյ  
անք և յիշոցք անասելիք, ուստի յարէ.

### ԵՇ-ՀԱՅՀՈՅԵԼՆ. ԹԵՂ ԱՆԴԻ-ՃՈՅ :

Եյսու պարտ է մեզ իմանալ զա-  
մենային ախտս և զմոլեկան ունակու-  
թիւնս լեզուին, այն է հայհոյանք, ա-  
նարդանք, զբարտութիւն, թշնամանք,  
և այլն: Եդառնալ իսրայէլի յաստուած-  
պաշտութենէ՝ ի կռապաշտութիւն, և  
յերկրպագանել ձուլեալ պատկերին որ-  
թու, ասէին. « Եյս են աստուածք քո  
իսրայէլ որ հանին զքեզ յէդիստոսէ».  
Ելք. 1բ. 8. և այս համարեցաւ հայ-  
հոյութիւն և անարդանք փառաց Եր-  
տուծոյ, որ ոչ ասց երբէք զփառս իւր  
այլում: Եյսպէս որ միանգամ թողեալ  
զարարիչն բնութեանս՝ պաշտիցէ զկամս  
մարմնոյն և ծառայիցէ ախտից իւրոց,  
համարինմա այն կռապաշտութիւն ըստ

Ա,արեկեան խոստովանութեան ա' Ա,ոյն է  
 սպաս տանել ձուլեալ պատկերի՝ և մե-  
 ղաց ախտի ։ Յան. ԻԱ. որով անարգէ  
 զիառու Աստուծոյ և հայհոյէ, կատարե-  
 լով զատանայի կամսն. քանզի ըստ ասից  
 ուրումն, սատանայ կայ հանապաղ ընդ  
 աջմէ հայհոյչաց. իսկ եթէ դարձցի ոք  
 սրտիւ առ Տէր և ասիցէ ընդ հրեշտա-  
 կապետին Ակքայելի. «Ասսեսցէ ՚ի քեզ  
 Տէր» ։ Յո-Դ. Ա. 7. այսինքն վրէմինդիր  
 լիցի քեզ Աստուծուած ո' ամենաչար՝ որ այդ-  
 պէս յանդգնիս հայհոյել զիառուն Աս-  
 տուծոյ, ամօթապարտ կացուցանէ զնա.  
 և ինքն ազատի ՚ի մեղաց հայհոյութիւնէ.  
 Չարագոյն ևս է հայհոյութիւնն զնո-  
 գւոյն սրբոյ, զոր և անթողլի ասաց լի-  
 նել Քրիստոս, և պարտաւոր յաւիտե-  
 նական տանջանաց. Իսկ որոց զհայր կամ  
 զմայր հայհոյեն, շիջի լոյս նոցա և բիբլ  
 աչացնոցա զիսաւար տեսցեն. Աշակ. Ի. 20:  
 Արդ՝ եթէ այսչափ պատիմք և կորուստ  
 յաւիտենից պահին հայհոյչաց, ապա  
 պարտ է կարձել զիեզուն և դնել պահո-  
 պան շրթանց զերկիւղ գեհենին, և հան-  
 գերձ զզմամբ և խոստովանութեամբ  
 բանալ զերան մեր յօրհնութիւնս և  
 ՚ի փառաբանութիւնս :

6. ԱՌԵՂՋ ԳՐԱ-ԲԵԱՄԲ ՅԵ-ԱՊԱ, ԱԳԱԿԵ-  
ՄԸ ՎԻԵԼԸ. ՀԱՐԻԱՆԵԼԸ. ԱՊԱԼԱՆԵԼԸ. Ե ԸՆԴ  
ԴՐԱ ԱԺԵԼԸ. ԽԵՂՋ ԱՅԹԻ-ՃՈՒ :

ԱՌԵՂՋ ԳՐԱ-ԲԵԱՄԲ ՅԵ-ԱՊԱ :

Գողութիւնէ մեղք գործեալ միջո-  
ցաւ ձեռին, և է գաղտնի յափշտակու-  
թիւն ընչից այլոց, ընդդէմ պատուիրա-  
նացն Աստուծոյ որ հրամացէ չգողանալ.  
Օրին. Ե. 19: Պատճառ գողութեան է  
չափաղանց ագահութիւն, յորմէ և  
զբկողութիւն, սպանութիւն և այլ չա-  
րիք մեծամեծք :

ԱԳԱԿԵԼԸ :

Ագահութիւն է անկարգ յօժարու-  
թիւն սրտի ՚ի ստացումն ընչից . և կից  
է ագահութեան՝ զրկողութիւն, յափշ-  
տակութիւն, գողութիւն, որով ջանաց  
բազմացուցանել զինչն ՚ի կորուստ ան-  
ձին իւրոյ . և զրկելով զայլ ՚ի գոյից՝  
զրկէ զանձն յարքայութենէ, ըստ այնմ.  
“ Ոչ ագահք . . . ոչ յափշտակողք զար-  
քայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգենո.  
Ա. Կրին. Զ. 10: Ապա մի յօժարեսցին  
սիրոք մեր մեծութեան խռիելոյ անիւ-  
րաւութեամբ, խմա ագահութեամբ .

այլ որ աստուածպաշտութեամբ է՝ զայն  
ժողովեսցուք, որ բաղմանայ և ոչ սլա-  
կասէ, և ոչ կապտէ ՚ի մենջ զանկորուստ  
մեծութիւն փառացն արքայութեան .  
Եաւ ։ Ճ.Գ. ։ 11։

### Օ. Ք. Ե. Ը. Հ. :

Օ. Ք. Կ. Ե. Հ. անիրաւիլ՚ի վարձս կամ  
յիրաւունս ուրուք, որոյ պատճառ է  
անգթութիւն և ագահութիւն . վասն  
որոյ և է անիրաւութիւն և մեղք մա-  
հուչտի, որպէս հատանելզվարձոքը բա-  
նաջան մշակաց և ծառայից, զրկելով  
զնոսա յարդար իրաւանց . զրկել զայլ  
քատս և զկարօտեալս ՚ի կարեոր հացէն,  
զոգէտսն և զանուսսն ՚ի գիտութենէ և  
յիմաստութենէ . զորբս և զայրիս ՚ի գոյ-  
ից ժառանգութեանն՝ յորս կայ հաստա-  
տեալ ամենայն յոյս նոյա, որոյ աղա-  
ղակք և հեծութիւնք մինչեւ յերկինս  
համբառնան . վասն որոյ պատուիրէ Եռ-  
տուած զորբն և զայրին ոչ զրկել . Եռ-  
տուարեալն Յակոբոս ասէ . « Օ. Ք. Կ. Ե. Հ.  
՚ի ձենջ աղաղակէ » . Յաւ ։ Ե. ։ 4. »

### Ն. Ա. Ր. Կ. Ա. Ն. Ե. Ը. Հ. :

Կրկին է հարկանելն, բանիւք և գտ-

նիւ . գանիւ՝ այսինքն փայտիւ կամ ձեռամբ հարկանել զոք, կովահարել ապահել, տքացել, և այն : Իսկ բանիւ հարկանելն է, դառնակսկիծ խօսիւք նախատել զոք, ձաղել, այպանել, անփծանել, և հայհոյել . որ առաւել ես աղդե՝ 'ի սիրտ մարդոյ քան զարով և զփայտիւ հարեալն, վասն որոյ և անբուժելի համարին վէրք նորա ըստ առածին . Հարուածք սրոյ դիւրաւ բժշկին, իսկ հարուածք լեզուին մնան անբոյժ : Օնոյն սկասուիրէ և Պօղոս Տիմոթեայ աշակերտի իւրում, մի՛ հարկանող լինել, մի՛ կոռուող, այլ հանդարտ . Ա. Տէմ. Գ. . Յ.

### Աղանանելը :

Ապանութիւնն բազում եղանակաւ կարէ լինել, այսինքն սրով, քարիւ, փայտիւ, թունով, յայտնի և կոմ գաղտ . սպանութիւն համարի նաև չաղատել զոք 'ի մահաբեր վտանգէն ուր անկեալ կոյցէ, եթէ ունիցի 'ի ձեռին առիթ փրկելոյ զկեանս նորա և զանց արացէ . զոր օրինակ թողուլ զոք մեռանել 'ի սովոյ, 'ի հիւանդութենէ, 'ի բանտի, 'ի ծովու, 'ի գաղանաց, և այլն . որոց կարէը հասանել յօդնութիւն և թափել

՚ի մահուանէ , այսպէս ս մարդասպանը համարին քահանայն և զետացին , որոց աեւսեալ զՃանապարհաւ զայրն որ իջաննէր յԱրիքովէ՝ կիսամահ անկեալ , զանց աշարին զնովաւ , զօր ապա սամարացւոյն պատեալ զվէրս նորին և դարմանեալ փրկեաց զնա : Ուստի ասէ Տերուուզիանոս . “ Որ կարէ օգնել և ոչ օգնէ՝ մարդասպան է ” : Վարթէ է սպանանել զոք և բանիւ , և լեզուաւ , թշնամանելով և վաստահամբաւելով և ՚ի հոգի խոցելով , յորմէ ստէպ պատահի յանկարծահաս մահուամբ և կաթուածով մահու զրաւիլ :

Ե- չետ Գորշ ածելով , Ֆլյու Աստո-ծոյ :

Օ ամենայն ազտեղի իրաց շօշափումնն ասէ , զօր չէ արժան յիշել : Քանի զի պարտ է սրբութեամբ պահել զՃեռլս , և զոյդ ընդ մնաց մերոց ամբառնալ ՚ի վեր առ Վաստած , և հայցել ՚ի նմանէ զշնորհս և զոզորմութիւն . և ոչ ընդ գարշելի և ազտեղի իրս ածել , յորմէ ծնանին մեղք :

7. ԱՌԵՂՋ ԱՄԵՆԱՅՆ ՅՈՒՆ-ԱՃ-ԱՎՀ ՀՅԱՆԿ-ԱՃ-ԴՐՅԱ  
Լ ԱՄԵՆԱՅՆ ԱՆԴ-ԱԽԾԱ ՄԱՐՄԻՆՅԱ, ՀՆԳԵ-ԱԿ ՊԳ-ԱՅԱՐ-Ա-  
ՆԾԱ, Լ ՎԵՐԵ-ԻՒ ՀԱՐԺ-ԱԽԾԱ ԲԱ. ՎԵՐԱՄԲ-ԱՐՅ ՌԱ-  
ՀԱՐ-Ա-Ա-Ա-ՄԲ, Լ ՎԵՐԱ-Ա-Ա-ՐԱ Ա-Ե-ՂԻ-Ա-Ա-ՄԲ. յաջ  
Լ յանե-ակ իսպորելը. շա-աջնոցն Ա-ՂԱՆ-Ա-Ե-Լ-Ը.  
Լ ՎԵՐՁՆՈՅՆ ՍԱՐ Ն-ՂԱ-Ա-Կ Գ-Ա-Ը. Ա-ՂՋ Ա-ՄՊ-Ա-Ճ-Դ-Ր-Յ:

ԱՌԵՂՋ ԱՄԵՆԱՅՆ ՅՈՒՆ-ԱՃ-ԱՎՀ ՀՅԱՆԿ-ԱՃ-ԴՐՅԱ :

Ը ԲԻ-ԱՃ ԱՍՈՒԵ-Ն ԻՄԱ ՊԼԱՎՄՈՒԹԻՒՆ  
ՄԱՐՄԻՆՅԱ. ԻՍԿ ՅՈՂՈՒ-ԱՃՔ Ե-Ն ԱՄԵՆԱՅՆ  
ԽԱՂԱԼԻՔ ՚Ի ՄԱՐՄԻՆԾ ՄԱՐԴ-Մ, ՈՐՈՎ ԱՂ-  
ԽԱԽԻԵ-ԱԼ ԸՆԴ ՄԻՄԵ-ԱՆՍ ԱՄԵՆԱՅՆ ԱՆ-  
Դ-ԱՄՔՆ ՀԱՐԺ-ԲՆ և ԽԱՂԱՆ, ըստ այնմ.  
« Ա-ՄԵՆԱՅՆ ՄԱՐՄԻՆՆ ՅՈՂԵ-ԱԼ և պատշտ-  
Ճ-ԱԼ ԱՄԵՆԱՅՆ ԽԱՂԱԼԻ օք (ՅՈՂՈՒ-ԱՃ-ԱՎՔ)  
ՄԱՐԱԲԵՐՈՒԹԵ-ԱՆ . . . ՚Ի շինու-ԱՃ ան-  
Ճին. | Շին. · Դ. 14: | Շւ Ե-Ն ԹՈՒ-ՈՎ իբր  
366 ըստ հասարակ կարծեաց, զօր և  
սուրբ Վ արդապետն յիշէ ՚Ի բանս աղօ-  
թից հագներդութեան իւրոյ. ՚Ի ԽԶ.  
դլուխն, յորում թուէ իբր 360. յա-  
ւելեալ ՚Ի նոյն և հինգ զգայութիւնք,  
բովանդակեն զթիւն 365 զբդ ընդ հա-  
մարոյ աւուրց տարւոյ պսակման: Իսկ  
ըստ նորոգ քննչաց թուին 244, կամ 249,  
և ըստ ոմանց 304:

Եւ ամենայն անդամնու հարհնոյս :

Ենդամն հարհնոյ կոչին իւրաքանչիւր  
մասն մարդկային շինուածոյս , որք ՚ի  
ձեռն յօդուածոյ աղխաղխեալ ընդ մի-  
մեանս ծառայեն ՚ի պիտօյս մարդկան ,  
որովք և գործին ամենայն մեղք և գործք  
բարիք , ըստ իւրաքանչիւր ներդործու-  
թեան՝ հետեւելով կամաց , զորմէ կախ-  
եալ կան ամենայն անդամք՝ ՚ի գործս ար-  
դարութեան և անօրէնութեան . վասն  
որոյ մեծապէս զգուշանալ պարտ և ար-  
ժանէ և մաղթել զօգնութիւնն Եմտու-  
ծոյ ընդ Շնորհալի վարդապետին , և ա-  
սել . « Եմենախնամ Տէ՛ր դիր պահապան  
աշաց իմոց զերկիւղքո սուրբ՝ ոչ ևս հայ-  
ել յարատ » , և այլն :

Հնդեւկ զբայարանօքս :

Հնդեւկին զգայարանք մարդոյ , որ  
և զգայութիւնք կոչին , են սոքա , տե-  
սանելիք , լսելիք , հոտոտելիք , ճաշակե-  
լիք և շօշափելիք . որք են կարողութիւնք  
զգալոյ ճանաչելոյ և ըմբռնելոյ զարտա-  
քին առարկայս , և են ընդունակք բա-  
րւոյ և չարի զգացմանց . վասն որոյ ըդ-  
գուշանալի է մեծապէս , ոչ ՚ի չարիս ՚ի  
կիր արկանել զնոսին , որք զօրեն զմարդ-

սրդիս գեհենի կացուցանել. « Եթէ ա-  
կըն քո, կամ ձեռն քո գայթակղեցու-  
ցանէ զքեզ, հատ զնա և ընկեա 'իքէն.  
զի լաւ է միականի կամ միաձեռանի մը-  
տանել 'ի կեանս, քսն եթէ երկուս ա-  
շըս կամ երկուս ձեռս ունել, և անկա-  
նել 'ի հուրն յաւիտենից ». Ուստ. Ճ. 8, 9:

Ե- Ալյելի շարժմամբ :

Բայ Փիլոնի՝ վեց եղանակք շարժ-  
ման բնաւորեալ է 'ի գործիական մար-  
մի մարդոյն, 'ի վեր և 'ի վայր, յաջ և  
յահեակ, յառաջ և 'ի վերջ, ըստ ո-  
րոց շարժի մարդ 'ի գործ՝ եթէ բարի  
և եթէ չար :

Ա. Ա Երամբարյ ունահարութեամբ :

Այն է 'ի վեր ամբառնալով զտոն  
հարկանել, կամ ընդ ոտիւք ածեալ զոք  
կամ զիր ինչ՝ մեղանչել: Խոկ 'ի բարոյա-  
կան միտս նշանակէ, որ ինչ 'ի վեր յեր-  
կինս կան հրեշտակք և սուրբք, շնորհ  
և իմաստութիւն երկնաւոր և այլ գեր-  
բնական բարութիւնք, զամենայն ար-  
համարհեալ ընդ ոտիւք համարել. այսին  
առնել և առ ոչինչ գրել զամենայն գեր-  
բնական վայելսութիւննեն, զոր ունի ժա-

ռանդեցուցանել մարդկան հաստիչն ըլ-  
նութեան :

բ. Եշ-Հայրաքարը Աղիութեամբ :

Այն է թուլութեամբ մեղկանա-  
լով և երկրաքարշ լինելով մոօք և կա-  
մօք յանցաւոր իրս աշխարհի. զհետ լեալ  
ամենայն գարշ ցանկութեանց և դիւ-  
րաթառամ փառաց կենցաղոյս : Ո՞եղ-  
կութիւն ծնանի յաներկիւղոծութենէ .  
զի ուր երկիւղն է Աստուծոյ , անդ և  
ոչ մի ինչ մեղկութիւն . յորմէ ծնանի և  
ծուլութիւն . զի ուր մեղկութիւն է ,  
անդ և ամենայն հոյլք մեղաց : Քանզի  
և մեղք գեղեցիկ իմն ստուգաբանի 'ի  
սուրբ վարդապետաց . « Ո՞եղք է մեղ-  
կութիւն , և հոսումն մտաց 'ի խոտոր-  
նակ հեշտութիւն » , | ամբ . Անառակ : Հո-  
սումն մտաց ասէ , այն է վայրաքարշ  
զօրութիւն մեղաց , որք քարշեալ վիստո  
մարդկան հոսեցուցանեն ընդ երկիր՝  
խոտորեցուցեալ 'ի ճշմարիտ արդարու-  
թեան շաւզոց , յորում զառաջինն հոս-  
տառեաց Աստուծած զմարդ , ուղղարերձ  
հասակաւ 'ի վեր յերկինս հայեցուցեալ,  
զի 'ի նոյն և զմուացն և զխորհրդոց տե-  
սութիւն յառեցուացէ անարդել :

Գ. Յաջ, Դ. Եւ յահեակ իսուսութելը:

Ամենայն առաքինութեանց կրկին  
են ծայրք, որ երթեալ յանդին 'ի հա-  
կառակ մոլութիւնս, երկոքին ևս պար-  
ատելիք և ծնունդք մեղաց. զոր օրինակ՝  
խոհեմութեան ծայրք են խորամանկու-  
թիւն և անխոհեմութիւն. եթէ ոք ըստ  
չափ խոհեմութեան անցեալ խոտորիցի,  
անկանի կամ 'ի խորամանկութիւն և  
կամ յանխոհեմութիւն; յորոց երկո-  
ցունց ծնանին մեղք. վասն որոց գործ  
է մարդոց շխոտորիլ ոչ յաջ և ոչ յահ-  
եակ, այլ զմիջինն ունել զարքունական  
պողոտաց: Դարձեալ աջիւ խմանամք ըդ-  
հոգեօրն, իսկ ահեկաւ զմարմնաւորն:  
խոտորումն 'ի հոգեօրս՝ իմա միմիլ 'ի  
խորս աստուածային գաղտնեաց, զոր և  
ոչ իսկ աստուածայինն Պօղոս համար-  
ձակեցաւ խօսել 'ի համբառնալ իւրյեր-  
րորդ երկինս. քանզի քննել որ ինչ 'ի վեր  
են քան զմիտոս մարդկան, յանդգնու-  
թիւն է. յորմէ ծնանին մոլորութիւնք՝  
որ ձգեն զմարդ յանդունդս մեղաց:  
Այնպէս խոտորիլ 'ի մարմնաւորս՝ է չա-  
րաչար վարիլ 'ի մարմնաւոր պարգևս  
Աստուծոյ, զհետ լեալ ամենեին մար-  
մնոց հեշտութեանց և թելսդրութեանց

բանսարկութին, զոր ահեկաւն ցուցանէ: Աւստի յերկուց ծայրից ևս խուսափեալ պարտ է զշափաւորն և զմիջինն ունել, յորում պարունակին ամենայն առ աքի նութիւնք:

### Ե. Օւազնոյն Խշնչել:

Այս բան կրկին մեզ իմաստս ընծայեցուցանէ. նախ, նշանակէ զմեզս առաջնոցն մեղանչելով, որք յառաջ քան զմեզ կեցին յաշխարհի. երկրորդ՝ մեղանչել ընդդէմ ամենայն կանոնաց և վճռոց առաջնոց հարց և սրբազնն հայրապետաց, որք 'ի սուրբք Առղովս իւրաքանչիւր սահմանեցին 'ի փրկութիւն հոգւոց և 'ի հաստատութիւն ուղղափառ եկեղեցւոյն Քրիստոսի:

### Հ. Եւ Վերջնոյն Սր Նշանի Գուլ. Խշ Ասպածոյ:

Վ երջինք իմա զապտգայ ծնունդ մարդկան սրբ զինի մեր գայցեն յաշխարհ յիւրաքանչիւր դարս. որոց նշաւակեալ չար գործովքն արհամարհիցի, որպէս որք առ ջրհեղեղաւն կացին մեղաւորք և անօրէնք, նոյնպէս և բնակիչք հինգ քաղաքացն, և այլք բազումք նշաւա-

կեալ համարին մեղ՝ ի պատճառս չոր  
և ամբարիցո գործոց իւրեանց, և նա-  
խատանօք յիշին եթէ՝ ի լեզուս՝ մարդ-  
կան և եթէ՝ ի վեպս պատմութեանց :

Իսկ սուրբն Աթանաս և սուրբն Հիփ-  
րեմ զվեցեկի շարժմունսն իմանան այ-  
լազգ : Այսինքն, Վերանբարձ ոպնահարու-  
թեամբ՝ զհալարտութիւնն, և Վայրատը ը-  
մեղիո-թեամբ զտրտմութիւն և զյուսա-  
հատութիւն : Աջ՝ զհոգեկան մեղսն,  
և ահեիաս զմարմնականսն : Օ առաջնոյն  
մեղսնը՝ զյանդգնութիւնն, և Վերջնոյն  
ըսր նշանակ գոլը՝ զարտմտութիւն և զցա-  
սումնի :

8. Այլ և մեղս Եօնից յանցանօք մահացո-  
թեց : Հպարտո-թեամբ և մասամբ Նորին . նա-  
խանյու և մասամբ Նորին, բարիո-թեամբ և մա-  
սամբ Նորին . Ճուլ-թեամբ և մասամբ Նորին,  
ագահո-թեամբ և մասամբ Նորին, որիրանը-  
թեամբ և մասամբ Նորին, բղջախռհո-թեամբ և  
մասամբ Նորին, մեղս Աստո-ծոյ :

Այլ և մեղս Եօնից յանցանօք մահացո-թեց :  
Համենայն մեղաց որ գործին՝ ի  
մարդկանէ՝ ի բաց որոշեալ զեօթանե-  
աին զայսոսիկ, անուանէ զնոսա մահացուս .

ըստ Յովհաննու՝ որ ասէ . “ Են մեղք  
որ մահու չափ են ո . Ա . Յով . Ե . 17 :  
Եւ կոչին մահացու՝ այնու զի որ միան-  
գամ մեղանչէ զսոսին , և ’ի կենդանու-  
թեան իւրում ոչ խոստովանի և ոչ ա-  
պաշխարէ ’ի սուգ և ’ի մօխիր , մահա-  
ցուցանեն զնա յետ ելանելոյ յաստեա-  
ցըս , դատապարտեալ ’ի մահ յաւիտե-  
նական : Քանզի ամենայն մեղաց ար-  
մատք և մայր համարին եօթանեքին սու-  
քա , յորոց յառաջ դան իւրաքանչիւր  
ըստ տեսակացն ճիւղք և մասունք , որ-  
պէս յարմատոյ մահաբեր ծառոյ ոսաք  
դառնութեան :

Իսկ տեսակք մեղաց յերկուս բա-  
ժանին , ’ի հոգեկան և ’ի մարմնական :  
Հոգւոյն մեղք մտօք և կամօք գործին  
’ի հոգեոր ախորմելիսն , որք անմիջա-  
բար կայանան՝ ’ի հոգւոջ . թէպէտ և  
ըստ գործոյն ’ի մարմին ևս ազդեն եր-  
բեմն , որպիսի է հպարտութիւն , նա-  
խանձ , բարկութիւն և մասունք սոցին :  
Մաղք մարմնոյ են որք ’ի մարմնական ա-  
խորմելիս և մարմնոյ զգայարանօք գոր-  
ծին և անմիջաբար զմարմինն պղծեն ,  
թէպէտ և ըստ արատոյ անցանեն և ’ի  
հոգին . որպիսի է ծուլութիւն , ադա-

հութիւն, որկըտմոլութիւն և բղջախռ  
հութիւն, և որ ընդ սոքօք անկանին .  
Բ. Արք. Ե : Գալ. Ե . 19 :

Հպարտութիւնը և հասանքն նորին :

Հպարտութիւն նախ ՚ի հրեշտակս  
ցուցաւ, որով յերկնից ՚ի վայր անկեալ  
իջին յանդունդս, ոքք և կոչեցան սա-  
տանայ կամ դե, այն է հակառակ Առ-  
տուծոյ . ուստի մեղքս այս կայանայ ՚ի  
հոգւոջ, և ասի մեղք հոգւոյ . որ ապա  
փոխանցեաց ՚ի սատանայէ ՚ի նախամայ-  
րըն Եւա, և անտի ՚ի նախահայրն Ա-  
դամ, որոց խաբեալ ՚ի բանսարկուէն՝  
կամեցան աստուածանալ ճաշակմամբ  
արդելեալ պտղոյն : Այնչափ բնաւո-  
րեալ գտանի ՚ի մարդկային տկար բնու-  
թեան ոգին հպարտութեան, մինչև լի-  
նել նմա իբրու բնաւորութիւն, ցու-  
ցանել յամենայն ընթացս գործոց իւ-  
րոց զնոյն ոգի հպարտութեան, կամ  
գէթ զմասունս նորին . և ոչ բաժանիլ  
՚ի նմանէ՝ եթէ ոչ մահուամբ : Ա ասն ո-  
րս ասէ . “ Ո՞իտք մարդկան հաստա-  
տեալ են ՚ի խնամս չարի ՚ի մանկութե-  
նէ ո . Օ՞ննդ . Ը . 21 . Եւ ոչ այլով իւիք  
սանձահարի մեղքս այս, բայց եթէ կըռ-

փանօք և անարդութեամբ , և այն ՚ի մաւ-  
նուկ հասակի : Եւ զի հպարտութիւնն  
ոչ միայն մեղաւոր առնէ զմարդ՝ այլ և  
սատանայ գլխովին , Ասրդիս . Ի ճառ թ .  
Յակ : Ուստի և անօթն ընտրութեան  
աստուածայինն Պօղոս առանց սպատկա-  
ռելց խոստովան լինի յասել իւրում  
զանձինն սպարծանաց . “Տուաւ ինձ խայթ  
մարմնոյ , հրեշտակ սատան՝ կռփել զիս ,  
զի մի հպարտացայց ո . Բ . Կրն . ԺԲ . 7 :

Արդ՝ այսու մեղօք անկաւ մարդն  
յերեսաց Աստուծոյ , որով և բաղումք  
անկանին թելադրութեամբ սատանայի ,  
հպարտացեալ աշխարհային մեծութե ,  
կամ իշխանութեամբ , և կամ շնորհօք  
և առաքինութեամբ իւիք , ընդ որ փր-  
քացեալ բարձրամտին , վասն որոյ առէ  
Տէրն . “Որ բարձր է առաջի մարդկան ,  
պիղծ է առաջի Աստուծոյ ” . Դ . Յ . Ժ . 15 :  
Եւ թէ՝ “Որ բարձրացուցանէ զանձն  
իւր՝ խոնարհեսցի ո . Անդ . ԺԸ . 14 : Ի հը-  
պարտութենէ ծնանի ինքնահաւանու-  
թիւն , այն է հաւանիլ միայն բանից և  
գործոց անձինն . և որ ինքնահաւանն է ,  
է և զիւրահաւան . զի ոչ միայն զոր էն՝  
հաւատայ , այլ և զոր չէն , միայն զի ՚ի  
գովեստ իւր իցեն ասոցեալքն և արտ-

թեալք . յորմէ ծնանի ախան վառասիւ-  
րութեան , ընդ որով է և ամբարհաւաւ-  
ճութիւնն , այն է արտաքին ձևով և  
կերպարանաւ և բանիւ մեծամեծս ցու-  
ցանել զանձին իւրոյ ղբան և զգործ  
յինչև իցէ իրս , և պարծանօք մեծաբանէ  
զինքենէ , խառնեալ 'ի նոյն և զստութիւն՝  
զայս ինչ առնել և զայն : Վասն համարի  
նորին և յանդգնութիւն , այն է յանդու-  
գըն համարծակութիւն և սանձարծակ  
ձեռներիցութիւն 'ի բանս և 'ի գործո  
չարութեան , որում ասի և լրբութիւն ,  
օրով մեղաւ Յուդայ և կորեաւ :

Ա, ախանյու և մասամբ նորին :

Ա, ախանձն է ծնունդ հպարտու-  
թեան , որ ծնաւ ինքեան ամենաչար զտ-  
ւակ զնախանձն , յորմէ և մահ 'ի բնու-  
թեան մարդկան , ըստ այնմ . Ա, ախան-  
ձու բանսարկուին եմուտ մահ յաշ-  
խարհ . Իմաս . Բ . 29 : Ա, ախանձն է արբո-  
մութիւն ընդ բարիս եղբօրն , ըստ ո-  
րում կարծէ եթէ այնու նուազիցի պա-  
տիւ իւր . և կոչի նախանձ , զի նախ զիւր  
անձն այրէ և խանձէ , տրամելով 'ի վե-  
րայ այլոց բարեաց , և չարաչար մաշեալ  
յանձն իւր հրով նախանձուն :

Վախանձոսն կամի երջանիկ լինել  
թշուառութեամբ այլոց, և ոչ գիտէ զի  
այնու ՚ի յետին թշուառութիւն արկա-  
նէ զանձն իւր։ Վախանձեալ Կայենի ընդ-  
առաքինութիւն և ընդ առտուածպաշ-  
տութիւն անմեղ եղբօր իւրոց Աբելի  
սպան զնոտ, որով մատնեաց զանձն իւր  
՚ի չարիս և յանէծս, և զիսիղճ մտաց իւր-  
ոց ՚ի մշտնջենաւոր տանջանս։ Այս-  
պէս և նախանձոսն սպանանէ զհողի  
իւր, և եթէ անզեղջ և անդարձ մնառ-  
ցէ ՚ի չարիս, կուտէ ՚ի վերայ անձին իւր-  
ոց զԼայենի անէծսն, զդոզդոջ և զտա-  
տանումն նորին ըստ հոգւոյ և ըստ մար-  
մնոյ յաւիտեան։ Կայեն սպանու մար-  
մնով ՚ի Վամեքայ, և ազատ գտաւ յերեր-  
մանէ, այսպէս և նախանձոսն եթէ ոչ  
մեռուցանէ զմարմին իւր առկաշխարու-  
թեամբ, ոչ բարձցի ՚ի հոգւոյ իւրմէ-  
երերումն և առտանումն և պատիճք  
յաւիտենական տանջանաց։

Օսոյն ախտացան և որդիք Յակո-  
բոյ՝ յեղբայրն իւրեանց ՚ի չքնազագե-  
զըն Յովանէփ, զոր ազա իբրու այն թէ  
ինսցելով ՚ի մահ մատնել, վաճառեցին  
Աշխալուս ՚ի ծառոցութիւն հեթանո-  
սաց։ Կայնպէս և Հրեայք առ նախան-

Ճու մասնեցին գլորիստոս Պիղատոսի  
հանել զնա 'ի խաչ, և զհոգիս իւրեանց  
'ի ծառայութիւն սատանայի և 'ի հուր  
գեհենին : Ըստ սոցին օրինակի և բա-  
զումք որ վարին 'ի նախանձ ատելու-  
թեան, ոչ այլ ինչ օդտին, բայց եթէ  
զդատապարտութիւն յաւիտենական և  
զտանջանս անվախճան, զհուրն անշեջ,  
և զորդն անքուն . զորոյ զՃաշակին աստէն  
իսկ 'ի մարմինի իւրեանց կրեն հրով նա-  
խանձուն խանձելով և այրելով զհոգի  
և զմարմին :

'Նախանձ կոյր է առ լոյս միջօրէի .  
իւրեւ լսէ խօսել ուրուք զՃաշարտու-  
թիւն, իսկ և իսկ հակառակի նմա առ  
նախանձու, և արատ եղեալ բանիցն՝  
պարսաւէ և բամբասէ . Ի տեսանելը  
յաջողութիւն ընկերին՝ զրապարտէ և ան-  
դոսնէ զնա . իսկ զշնորհ, զգիտութիւն  
և զհանձար որ փայլի 'ի նմա, բամբա-  
սէ առ նախանձու, և գուն գործէ նը-  
սեմոցուցանելզալոյժառութիւննորին .  
որպէս ոմանք 'ի կորնթացւոց առնեին  
որբոյն Պօղոսի, վասն որոյ և նա առ  
չուալ նոցա տեղի մախանաց, խոնարհե-  
ցուցանելով զանձն գրէ առ նոսա, ոչ  
անձին՝ այլ չնորհաց Հոգւոյն սրբոյ տր-

ւեալ որով գործէր զամենայն , և ճըշ-  
մարտութեանն Վրիստոսի որ ՚ի նմա ,  
որով և պարծէրն . բ . կրտն . ձԱ :

Իսկ չար ծնունդք նախանձուն , որ  
և համարին մասունք նորին , են հեռ ,  
չարակամութիւն , չարակնութիւն , ա-  
տելութիւն , սխակալութիւն , բամբա-  
սանք , թշնամանք , անիրաւութիւն ,  
զբկողութիւն , խռովութիւն , դառնու-  
թիւն , տրտմութիւն , կատաղութիւն ,  
սպանութիւն , տրտունջ , յիշոցք , հայ-  
հոյութիւն , երգիծանք , խստասրտու-  
թիւն , յուսահատութիւն , անձնա-  
սպանութիւն , և այլք բաղումք , որոց  
ոչ գոյ թիւ :

Բարկութեամբ և հասամբ նորին :

Բարկութիւնն է եռանդն արեան  
շուրջ զարտիւ առ ՚ի տրտմեցուցանել  
զոք փոխանակ ընդ այնք՝ որով տրտ-  
մեցաւ ինքն . զի ՚ի լսել ումեք բանս  
նախատանաց և գրգռիչս ՚ի բարկու-  
թիւն , չարժի սիրտ նորա բաղձանօք ՚ի  
վրէմինդրութիւն : Վանդի սիրտն ՚ի  
մարդկային մարմնոջ է իբր թագաւոր ,  
որոյ զամենայն արիւնն ցրուեալ յերակ  
սըն՝ յինքն ամփոփեալ իբրու զօրակար

զգօրս իւր , ընդդեմ զինի թշնամւացն  
իւրոյ :

Ի արկութիւնն է բնակոն ախոտ հո-  
գւոյ . և է իբր մասն և զօրութիւն նո-  
րա , սրում ասի կիրք ցառմնական : Կոյն  
է և օրտմատթիւն , որ է օրտի մաօք 'ի  
վրէ ժխնդրութիւն վառիլ վասն ընկա-  
լեալ թշնամանացն , յատուկ խորհրդով  
վնասելոյ : Ի արկութիւն 'ի մարդիկ իբր  
'ի բազում այսու պատճառու լինի , և  
ոչ յարդար վրէ ժխնդրութենէ 'ի պատ-  
ճել զյանցաւորն , վասն որոյ տոէ Առա-  
քեալն . « Ի արկութիւն մարդոյ ղարդա-  
րութիւն Երտուծոյ ոչ գործէ » . Յակ .  
Ա . 20 :

Երբեմն զի և անբարկանալի բը-  
նութիւնն շարժի 'ի բարկութիւն . այլ  
սկիզբն բարկութեան նորա յարդարու-  
թենէ շարժեալ , առ 'ի յինքն ձգել ըշ-  
մեղ , իսկ մարդոյն՝ յատելութենէ ունի  
սկիզբն , և այն 'ի վնաս ընկերին : Այսու-  
մատթիւն Տեառն 'ի սիրոյն զոր ունի  
առ մարդ , և յօգուտ յաւիտենական կե-  
նաց նորա . իսկ սրումութիւն մարդոյ՝  
պատճառ . և առ իթ մահու : Ի արկանոյ  
Երտուած յեւացմանէ մարդասիրական  
գթոյն՝ վասն արդարութեան , վասն որոյ

ասէ . « Ի արկութեան Տեառն համբերից՝ զի մեղաց նմա ո . Միտիա . Ե . 9 : Իսկ մարդն բարկանաց յեռացմանէ արեան զարտիւն , և յոլովակի յանարդարութենէ , յորմ և բաղում չարիք և մեղք մահացուցիչք հոգւոյ , զոր պարտիմք փութալ ապաքինել դեղով հեղութեան և խոստովանութեամք . և փրկել զհոգիս մեր յարդոր վըէժխնդրութենէ բարկութեան Վասուծոյ :

Օռուլունեամբ և մասամբ նորին :

« Օռուլութիւնն է մեղք հոգւոյն , որում ասի և յուլութիւն և պղերգութիւն , այն է թուլանալ ՚ի հոգեոր և ՚ի մարմնաւոր գործս : Օռուլութիւնն առնէ զմարդն թշուառ աստ և ՚ի հանդերձելումն . աստ զրկէ ՚ի մարմնաւոր վոյելութեանց՝ աղքատութեամք տրուայտեալ , և անդ ՚ի հոգեոր և յերկնուոր փառոց արքայութենէ : Վանդի ըստ ասից սուրբ | ուսաւորչին՝ « Ի ծուլութենէ և յանհնազանդութենէ ամենայն գժնդակութիւնք ծնանին , և ապահուաւորութիւնք առ երախտիս արարչին մերոյ ո . Համախ . Ճ : Վ ասն որոյ յանդիմանէ և իմաստունն հանդերձ

յորդոքանօք յասելն . « Երթ տռ մրջիւն  
ով վատ , և նախանձեաց ընդ ճանա-  
պարհո նորա . . . մինչեւ յերբ անկեալ  
կաս ով վատ , կամ երբ ՚ի քնոյ զարթի-  
ցեսո . Առակ . օ . 6 . 9 : » Բանդի որ բնու-  
թեամբ ծոյլն է , թէ և արթուն կայցէ .  
համարի ՚ի քուն լինել , զի դադարեալ  
կայ յամենայն գործոց բարեաց՝ եթէ հո-  
գեորաց և եթէ մարմնաւորաց . ուստի  
զոր օրինակ որ ննջէ՝ համարի մեռեալ  
այսպէս և ծոյլն և հեղդն մեռեալ է հո-  
գւով . վասն որոյ և ծուլութիւնն կոչի  
մեղք մահացու : Օ ի ոչ եթէ հաւա-  
տովք և եթ փրկիցի մարդ , այլ և գոր-  
ծովք բարեաց , առանց որոյ մեռեալ է  
հաւատք՝ ըստ Առաքելոյն . Առակ . Բ . 26 :

Հակառակ ծուլութեան եղաւ ո-  
րիութիւնն հոգւոյ և մարմնոյ , փոյթ ՚ի  
հոգեորս և աշխատասէր ՚ի մարմնաւորս  
լինելով խափան արկանել տմենայն դը-  
ժընդակութեանց՝ որբ սպրդեալ մտա-  
նեն . ՚ի մարդ ՚ի հեղդութենէ սրտին ,  
ոյն է բամբասանք : Օ ի այր ծոյլ՝ ոչ  
անձին եղեալ մեղս , սկսանի բամբասել  
զարարածոն , ընդ նոսին և զարարիչն .  
Ե ծուլութենէ ծնանին նաև մոլութիւն  
անողատկան խաղուց , հետաքրքրու-

թիւն, անզգուշութիւն, անխոհեմութիւն, և չարախօսութիւն։ Ի խաղամոլութենէ յառաջ գայ անհաւատարմութիւն, խարեւութիւն, գողութիւն, հայհոյութիւն, սպանութիւն և անձնասպանութիւն, և ոյլմեղք չարաչար։ Ի հետաքրքրութենէ ծնանի ստախօսութիւն, բանսարկութիւն, և չարամտութիւն։ Յանզգուշութենէ՝ հակառակութիւն, կռիւք և վնասք մեծամեծք։ Յանխոհեմութենէ և 'ի չարախօսութենէ հետեին բաղում մեղք, զոր չետեղւոյս 'ի մեջ բերել։ Վակազայսոցիկ տմենեցուն զայտաճառն զծուլութիւնն 'ի բայց թողեալ՝ պարտէ բուռն հարկանել զարիութենէ և զհոդողութենէ, և ամենայն ջտնիւ վաստակել 'ի գործ բարութեան, յաղօթս և 'ի հսկմաւնս, զի արժանի լիցուք վայելել 'ի փառս արքայութեան։

### Ագահութեամբ և հասամբ նորին։

Ագահութիւն է անկարգյօժարութիւն սրտի 'ի ստացումն ընչից, որում հետեի, զրկանք, զրպարտութիւն, որտութիւն, խարեւութիւն, և սիմոնականութիւն, այն է մարմնաւորօք ըզ-

Հոգեւոր շնորհս պտանալ . յորմէ ըդ-  
գուշացուցանէ զմեղ Տէրն ասելով ,  
“ Օ դժշ լերուք յամենայն ագահու-  
թենէ ” . Դ ու կ . Ժ մ . 13 . և թէ Ա լ չ  
կարէք Աստուծոյ ծառայել և մամն-  
այի ” . անդ . Ժ մ . 13 : Եւ Պօղոս ՚ի  
բաց մերժէ զամենայն ագահս յորբոյ-  
ութենէ Աստուծոյ յասելն . և Ագահք  
զարբայութիւնն Աստուծոյ ոչ ժառան-  
գեն ” . Ա . Կ րէն . Զ . 10 : Վասն որոյ կո-  
չի մահացու մեղք . բայ այնմ և Աս-  
կերերան , և Արագէս հաւաքումն աւե-  
լորդ և ինաստակար հիւթոցն ՚ի մարմնի ,  
բաղում չարիս առնէ , ուռուցանէ զան-  
դամս , և ծնանի բաղում ախտա հիւան-  
դութեանց , այսպէս և ագահութիւնն  
ծնանի ՚ի մարմնի և ՚ի հոգւոջ վէրս ու-  
ռուցետլս անբուժելիս զհալարտութիւն  
այլովքն հանդերձ ” :

Արդ՝ ՚ի բաց հեռացուք յագահու-  
թենէ իրրե ՚ի կռապաշտութենէ , որ-  
պէս անուանէ առաքեալն Պօղոս , Կ ր .  
Գ . 5 : Օ ի սէր ագահին յինչո աշխար-  
հիս կապեալ , ՚ի մառացօնս տայ արկա-  
նել նմա զԱստուծած . և զոր Աստուծոյ  
տալ հարկ էր զալաշտօն , մատուցանէ  
նոր ոսկւոյն և արծաթոյն , վասն որոյ և

համարի կռապաշտ , ուստի և ընդ կը-  
ռապաշտիցն ընկալցի զգատաստան յու-  
տուրն բարկութեան , մեռանելով ոյա-  
խոենական մահն . ուստի ասէ և Ոի-  
րաք Էէ . ծ4 . « Յագահութենէ բա-  
զումք մեռան . իսկ որ զգաց լինի անձին  
իւրոյ՝ յաւելու ՚ի կեանս » :

Ալլամայլ-Եւամբ և հասամբ նորին :

Որկրամնոլութիւն է մոլութիւն որ-  
կորոյ , որ է անկարգ ցանկութիւն ու-  
տելոյ և ըմպելոյ : Ենկարգ ցանկութիւն  
զայն ասէ , որ ինչ աւելորդ է քան ըդ-  
հարկաւոր պէտան ՚ի սնունդ մարմնոյ ,  
և ՚ի պահպանութիւն կենաց : Քանզի  
պարտ է առնուլ զկերակուրն իբրև ըզ-  
դեղ ինչ ՚ի բժշկութիւն մարմնոյ և ՚ի  
զօրութիւն ջղաց և սոկերաց , և ՚ի փա-  
րատումն նօթութեան և սովուն . զի մի  
առ առողջ զմարմինն պահելոյ՝ անչափո-  
րէն հատեալ ՚ի բաղձանս կերակրոյ ,  
ակարասցի հոգւոյն զօրութիւն . վասն  
զի ըստ Օգոստինոսի , « Հեշտութիւն  
բերանոյն նշան է հիւանդութեան հո-  
գւոյ , սկարութեան մոաց և թիւրու-  
թեան կամաց » . յորմէ ծնանին շուայ-  
տութիւնք և զեղլսութիւնք և սյլ բա-

շում չարիք . յորմէ զգուշացուցանել ըդ  
մեզ Տէր ասելով . “ Օ գոյշ լեռուք ան  
ձանց , գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր  
շուստութեամբ . և արբեցութեամբ .  
” Եռի . ԻԱ . ՅԱ . յորմէ և բաղումք կոր  
եան , որպէս մեծատունն խորտկաձաշ ,  
և որք առ ‘ Եոյիւն ուտիշին և ըմպէին  
զեղխութեամբ , որով թշնամացեալ յա  
շու Աստուծոյ բնաջինջ կորեան ջրհե-  
ղեղաւ . վասն որոյ ասէ Պօղոս զորկրա-  
մոլից . “ Որոց Աստուծած որովայնն իւր  
եանց է ” . Փիլ . Գ . 19 : Եւ Տէրն վայ  
կարդայ նոցա . “ Վ այ ձեզ՝ որ յագեալդ  
էք այժմ , զի քաղցիցիք ” . Եռի . Զ . 25 :  
Ապա լու է շնորհօք հաստատել զսիրտս  
և ոչ կերակրովք , ըստ առաքելցյն . ԵՒ .  
Ժ.Գ . 9 :

Աղջականութեամբ և հասամբ նորին , Թշո  
Աշտուծոյ :

Աղջախոհութիւն է անկարգ սէր  
հեշտութեան ըստ շօշափականին , որ-  
պէս որկրամոլութիւնն ըստ ճաշակե-  
լեաց . և ընդհանրապէս առեալ՝ նշա-  
նակէ զամենայն ազգ զեղխութեան ՚ի  
կերակուրս և յըմպէլիս և յամենայն հեշ-  
տաւթիւնս մարմնոյ բաղձանաց . և ըստ

այսմամենայն մեղք կոչին բղջախոհութիւն կամ պոռնկութիւն . քանզի ամենայն մեղք գործին հեշտութեամբ եղդայական բաղձանօք . և բաժանի ՚ի հոգեոր և ՚ի մարմնաւոր :

Ի՞ղջախոհութեամբ որդին անտառակ վասնեաց զամենայն ինչս իւր՝ իմա ըգ պարդես Աստուծոյ՝ ՚ի հեշտութիւնս . բղջախոհութեամբ որդիքն Հեղեայ Ափնի և Փենեհէս մեղան առաջի Աստուծոյ ՚ի դստերս Խորայելի , և սատակեցան ընդ երեսուն հաղարաց , և տասկանակին Աստուծոյ վարեցաւ ՚ի գերութիւն . Ա . Թագ . Դ . Ի՞ղջախոհութեամբ համայնաջինջ կորեաւ երկիր առ ջրհեղեղաւ . նորին վասն և Ասդոմայեցիք երկնառեղաց հրով կիղեալ սլատժեցան : Ա ասն այնորիկ և ՚Կաւիթ ընկալաւ ՚ի Տետրնէ զվճիռն մահագոյժ , թէ « Ո՞ի հեռացի սուր ՚ի տանէ քումմէ մինչեցաւիտեան » . Բ . Թագ . ՃԲ . 10 : Առ այս և առաքեալն Պօղոս գոչէ մեղ ազդաբար փողովն ասելով . « Ո՞չ շունք , ոչ պոռնիկք , ոչ իգացեալք և ոչ արուագէտք զարբայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն ո . Ա . Կրն . Զ . 9 : Արով զգուշացուցանէ զմեղ ՚ի բղջախոհութենէ , և

զօրութեամբ բանիցն կոչէ 'ի խռատովալս-  
նութիւն և յաղաշխարութիւն , որով  
և եթ որբին ամենայն մեղք մարդո :

Իսկ բժշկապետն հոգւոց մերոց փըր-  
կիչն Յիսուս ընդդեմ եօթանց մահա-  
ցու և գիւտշունչ մեղոցս այսոցիկ կար-  
գադրեաց սպեզանի զօրաւոր զերկուս  
զայսոսիկ՝ պահք և ազօթք , որովք և եթ  
կարեմք հանդերձ շնորհօք Հոգւոյն որր-  
քայ հալածել 'ի մենջ զշար ողին հպար-  
տութեան , զնախանձու և զորոց ըստ  
կարգի . վասն որոյ ասաց աշակերտաց  
իւրոց . « Այս ազգ ոչ իւիք ելոնեւ , ե-  
թե ոչ ազօթիւք և պահովք ո . » Առա-  
ջե . 20 . Եզօթիւք ազատիմք յացոյն  
հպարտութեան , նախանձու , բարկու-  
թեան , ծուլութեան և ադահութեան ,  
և սպահովք յօրկրամոլութեան և 'ի բըդ-  
ջախոհութեան դիւեն . ապաւինեալ  
միանդամայն յարգարութիւն և 'ի զօ-  
րութիւն փրկարար շնորհաց Կատուծոց ,  
որ պարզ և ի մեղ 'ի ձեռն հաւատաց , ըստ  
այնմ . « Օ ի շնորհօք նորա էք փրկեալք  
'ի ձեռն հաւատացն ո . Եթե . Բ . 8 :

9. Այլ մեղաց ամենայն պատուիրանայն Աս-  
տ-ծոյ, յանյնառելվաց և հրաժարելվացն . չէ  
ու շանյնառական կարարեցի և ու ՚ի հրաժա-  
րելվացն հեռացայ . զօրենս առի և յօրինացն հեղ-  
գացայ . ՚ի իսրայ չըխառնէութեան հրահիրեցայ  
և գործով անարժան գացայ . Գիտելով շարու իս-  
ման կրացայ , և ՚ի բարեաց գործոյ և ինյեն  
հեռացայ . վա՛յ ինյ . վա՛յ ինյ . վա՛յ ինյ . տ՛ըն ա-  
մեմ, իսմ շա՞ր իսուսովանիմ զի անթի- են յանցանք  
իմ, անասելի են անօրէնութեանք իմ, աներելի  
են յառա իմ, և անբժշկելի են վերա իմ, մեղա-  
Աստուծոյ :

Այլ մեղաց ամենայն պատուիրանայն Աստո-  
ծոյ, յանյնառելվաց և հրաժարելվացն . չէ ու  
շանյնառական կարարեցի , և ու ՚ի հրաժարե-  
լվացն հեռացայ :

Պատուիրանկը Աստուծոյ են թուով  
տասն, որ և կոչին Տամնաբանեայ պատ-  
ուէքք . և բովանդակին յերկուս յայսո-  
սիկ, ՚ի յանձնառական և ՚ի հրաժարա-  
կան, կամ ՚ի ստորասական և ՚ի բացա-  
սական : Յանձնառականկը կամ ստորա-  
սականկը են այս . “ Աիրեսցես զՏէր Ա-  
ստուած քո յամենայն սրտէ քումիէ . և  
յամենայն անձնէ քումիէ , և յամենայն

մտաց քոց . . . սիրեսցես զընկեր քո իբ-  
րև զանձն քո ո՞ւ Յայս երկուս պատուի-  
րանս բովանդակին ամենայն օրէնք և  
բանք մարգարէականք. Այստ. Իբ. 37—40.  
Ելլ. Ի. (Օլին. Ե.:

Իսկ հրաժարականք կամ բացասա-  
կանք են այսոքիկ. « Ո՞ի շնար. մի սպո-  
նաներ. մի գողանար. մի սուտ վկայեր  
զընկերէ քումմէ . մի ցանկանար կնոջ  
ընկերի քո ». Ելլ. Ի. (Օլին. Ե. Ի սոսին  
տկնարկէ և բան Դաւթի . « Խոտորեա  
՚ի չարէ , և արա զբարի ». Առաջ. ԼԳ. 14.  
Եւ այս պատուիրանք են հիմն օրինաց  
՚ի բնականէն հեղեալ ՚ի գրաւորն , և ՚ի  
գրաւորականէն՝ ՚ի շնորհական օրէնս ՚ի  
ձեռն Յիսուսի Քրիստոսի . « Օ ի օ-  
րէնքն ՚ի ձեռն Առվլոխի տուան , շնորհ-  
քըն և ճշմարտութիւնն ՚ի ձեռն Յի-  
սուսի Քրիստոսի եղեն ». Յակ. Ա. 17.

Վաղա պարտ է ամենայն քրիստոնէի  
պահելև կատարել զյանձնառական պա-  
տուիրանսն , և հեռանալ ՚ի հրաժարա-  
կանաց , և ՚ի բաց արկանել ՚ի խորհրդոց  
՚ի բանից և ՚ի գործոց . և եթէ կամիցիմք  
չիմնել երբէք պարտական և ոչ միում  
օրինաց , զՓրկչին կացուք զմեծն և զա-  
ռաջինն , որով ամենայն օրինացն գտաւ

Նիմք արարողք , զի ըստ առաքելցն ,  
“ | ըումն օրինացն սէր է ” . Հայկ .  
ԺԳ . 10 :

Օ օրէնս առի և յօրէնացն հեղինացայ :

Օ շնորհական օրէնսն ասէ , որ տը-  
ւաւ մեղ Քրիստոսիւ ՚ի ձեռն հաւա-  
տոց , գնեալ զմեղ յօրինաց մեղաց ա-  
րեամբն իւրով , զի մեք զորդէգրութիւն  
ընկալցուք . Գալ . Դ . 3 : Իսկ որդէգ-  
րութեան սղարտք՝ հնազանդութիւն առ  
հոյր , պահել զամենայն պատուիրանս  
նորա , և զհաճոյս առաջի նորա առնել  
հանապաղ . սիրել զնա և զընկերս իւր .  
զորովք զանց առնել հեղդութեամբ և  
ծուլութեամբ՝ է մեղանչել ընդգէմօ-  
րինաց և արդարութեան Յիսուսի Քր-  
իստոսի , և արհամարհել զնոսա :

Կպա որ ընդ օրինօք շնորհաց Աս-  
տուծոյ կայցէ , և ՚ի հաւատս Փրկչին ,  
պարտէ նմա ունել յանձին արիութիւն ,  
գործովք իւրովք ցուցանել զհաւատոցն  
հանդէս . “ Քանզի ՚ի գործոց արդարա-  
նաց մարդ և ոչ ՚ի հաւատոց միայն ” ,  
ասէ Յակոբոս . Բ . 24 : Արիաբար վաս-  
տակեալ յաստի կեանս ՚ի գործս բար-  
եաց , արդիւնաւորիմք զանտի կեանս

անվախճան երանութեան՝ վայելել ըստ  
հոգւոյ և ըստ մարմնոյ . հոգւոյ՝ ըստ  
հաւատոցն , և մարմնոյ՝ ըստ գործոցն .  
Իսկ եթէ գործքն ոչ պատասխանիցեն  
օրինացն Աստուծոյ ըստ արդարութեան .  
այլ օրինաց՝ որ յանդամն մեր կայցէ՝ հե-  
անիցիմք գործովք անարժանութեան .  
արդիւնաւորիմք զյաւիտենից գատա-  
պարտութիւնն , վասն որոյ ասէ .

Ի իարդս Տրիստոնեան հրա-իրեշայ , և  
Գործով անարժան գտայ :

Կարդ քրիստոնեութեան է նոյն ին-  
քըն օրէնքն քրիստոսական , որ է յատուկ  
կարդ և պատիւ , զօր ընդունի իւրա-  
քանչիւր քրիստոնեայ 'ի ժամ մլրտու-  
թեան , հրաւիրեալ 'ի նոյն 'ի յատուկ  
շնորհացն Աստուծոյ , ըստ այնմ . « Օ ի  
շնորհօք նորա էք փրկեալք 'ի ձեռն հա-  
ւատոցն . և այս ոչ 'ի ձէնջ , այլ Աստու-  
ծոյ պարդև է ո . Եփես . Բ . 8 : Եւ Տէրն  
ասէ . « Ոչ ոք կարէ գալ առ իս , եթէ  
ոչ հայրն ձգեացէ ղնա » . Յով . օ . 44 .  
ուստի ասէ հրա-իրեշայ և ոչ եթէ ընկա-  
լոյ , կամ մտի . զի ցուցցէ թէ ոչ յանձ-  
նէ իւրմէ ինչ է հրաւէրն կամ կոչումն ,  
այլ 'ի տեառնէ հարսանեացն , որ հրա-

ւիրէ կամ կոչէ ըստ իւր յատուկ շնորհ  
 հաց յառաջադոյն պատրաստեալ զնոսա,  
 վսսն որոյ յարէ Առաքեալն . և Օ ի նորա  
 տրարած եմք , հաստատեալք Քրիստո-  
 սիւ Յիսուսիւ 'ի գործս բարութեան ,  
 յորս յառաջադոյն պատրաստեաց Առ-  
 տուած , զի 'ի նոյն գնասցուք ու Օ ոք  
 օրինակ՝ որ 'ի հարսանիս ոք հրաւիրի ,  
 անհրաժեշտ պարտք են նմա պատկառ  
 կալ ամենայն կարգաց և արարողու-  
 թեանց , և զդենուլ զանձամբ զեռ հան-  
 գերձ հարսանեկան . այսպէս՝ որք միան-  
 գամ կոչին 'ի կարգ կամ 'ի կրօնս քրիս-  
 տոնէութեան , պարտաւորին զամենայն  
 հարկաւորեալսն առ այն կատարել ան-  
 թերի , և զպատուէրան լնուլ , այն է գր-  
 նալով 'ի գործս բարութեան : Ապա թէ  
 ոք հակառակ գործովք իւրովք անար-  
 ժան կացուցանէ զանձն քրիստոսական  
 կարգին , դատապարտի ըստ օրինակի այ-  
 նըմ որ զուրկ գոլով 'ի հարսանեկան հան-  
 գերձից արտաքս մերժեցաւ 'ի տեառ-  
 նէն՝ իբրու անարժան այնմ փառաւոր  
 հանդիսին :

Ապա պարտ է ամենայն քրիստոնէի  
 ըստ ներքին մարդոյն լինել սուրբ և ըստ  
 արտաքնոյն՝ պարկեշտ և մայրուր վա-

բուք, իբրու ՚ի զգեստս պայծառս զարդարիլ գործովքն բարեաց, որով փառաւորեսցի Աստուած առաջի մարդկան: Իսկ որ չիցէ այնպէս, չէ նա ճըշմարիտ քրիստոնեաց, այլ առաւել վէմ գայթակղութեան է եղբարց իւրոց ան պարկեցո գնացիւքն:

Դիտելով շւրջն՝ իւմաւ իրացայ:

Արդարեւ գիտել զչարիս և ամենայն յօժարութեամբ կամաց ՚ի նոյն անկանիլ, է դժնդակագոյն քան զամենայն չուրիս, և է մեղք ընդդէմ Հոգւոյն սրբբոց: Տկարութեամբ մեղանչել չէ ինչ ծանր քան եթէ ոք անգիտութեամբ մեղիցէ. իսկ անգիտութեամբ մեղանչել թեթեագոյն է յոյժ քան զգիտութեամբ մեղսն. զի գիտութեամբ մեղանչել գործ է սատանայի. իսկ տկարութեամբ և անգիտութեամբ մեղանչել է գործ սխալական բնութեան մարդոց: Ա ասն որոց պարտ է խոստովանութեամբ և կատարեալ զղջմամբ որբել զգիտութեամբ յանցուցեալ մեղսն:

Եւ ՚ի բարեաց Գործոց եւ ինյեն հետացայ:

Այն է կամու լքանիլ և հրաժա

րիւ՝ ի բարեգործութենէ , ոչ զոք ունելով պատճառ և գրդոիչ անձին , որով առաւել և ո ծանրանայ ՚ի վերայ նորադատաստանն Աստուծոյ :

Ա այ ինչ , վայ ինչ , վայ ինչ . ը՞ն ասեմ իւմ ը՞ն իսպավանիմ :

Երիցս կրկնութիւն վայի՝ ցուցանէ ղերից յաւիտենից զեղկելի թշուառութիւնսն . առաջին՝ տատի կենացս մինչե ՚ի մահ . երկրորդ՝ ՚ի մահուանէ մինչեցդալուստ Փըկչին ՚ի դատաստան . երրորդ՝ յետ դատաստանի ՚ի յաւիտենականութիւնն անվախճան : Վանզի այր մեղաւոր ցորչափ ՚ի մեղս կայ՝ համարի թշուառ և եղկելի և բիւր վայից արժանաւոր , գոլով զրկեալ ՚ի շնորհաց Հոգւոյն սրբոյ . սոյնակէս և ՚ի մահուան իւրում դնոյն թշուառութիւն ածցէ ընդիւր յաշխարհն անկետ յաւիտենից , ուր լոլէ աչաց և կրծել ատամանոց : Ուստի լու է տատէն դառնապէս ողբալ զանթիւ բազմութիւն մեղացն , ասել բանիւ բերանոյ և խոստովանիլ կատարեալ սրտիւ՝ ՚ի ծունը խոնարհեալ առաջիքահանային , ցուցանելով նմա զանձն իւրհիւանդացեալ մեղօք , ըստ բանի Տեա

ուըն որ տաէր ցբորոտն . “ Լիքթ ցոյց  
զտնձն քո քահանային ո . Այսդեմ . Ը . 4 :

Օ ի անլիւ են յանշանս իմ , անասէլլ են  
անօրէնութիւնս իմ , աններէլլ են յառա իմ , և  
անբժշկէլլ են վէրս իմ , Թղայ Աստո-ծոյ :

Օ որ օրինակ չէ հնար մարդոյ թըր-  
ւել զաւաղ ծովու և ոչ զաստեղո եր-  
կնից , նոյնպէս անհնար է ու մեք ’ի հա-  
մար արկանելլ զբազմութիւն մեղացն զոր  
գործեմք յամենայն աւուր , յամենայն  
ժամու և յամենայն վայրկենի , եթէ  
գործով , եթէ բանիւ , և եթէ խորհըր-  
դով , յորս բազում այնք են՝ զի և ոչ ’ի  
համարի մեղաց ունիմք . և համարձա-  
կադոյնս իսկ ասացից , բովանդակ կեանիք  
մարդոյ շարունակութիւն իմն է մեղաց ,  
ըստ այնմ . “ Ո՞իտք մարդկան հաստատ-  
եալ են ’ի խնամք շարի ’ի մանկութենէ  
իւրմէ ” . Օ նոր . Ը . 21 : Օ այս ցուցանէ  
յասելն անլիւ են յանշանս իմ : Իսկ անասէլլ  
ասել անօրէնութեանց և աններէլլ ցա-  
ւոց , տայ իմանալ զծանրութիւն մեղացն  
զազիր գործոց , զոր չէ արժան յիշել :  
Եւ յասելն անբժշկէլլ են վէրս իմ , զյոյս իւր  
դնէ յիստուած , հաւաստալով եթէ նա  
միայն է կտրող բժշկել զվերս և զցաւու

հոգւսյն՝ սուրբ խորհրդովն՝ ի ձեռն քաշանային :

Ապա յետ կատարման խոստովանութեանս և թափելոյ զամենայն մեղս յոտս քահանային հանդերձ արտասուօք և հեծութեամբ և կատարեալ զղջմամբ, խնդրէ ՚ի նմանէ զարձակումն ՚ի մեղացիւրոց իբր ՚ի դիմաց Աստուծոյ, և ասէ .

Հայր սուրբ շնել ունիմ միջնորդ հաշութեան և բարեխօս առ մասնին Որդին Աստուծոյ, ոչ էլանութեամբն որ պուեալ է ժել. արյակեացես ոչս ՚ի իտպանաց մեղաց իմոց, աղաւմ ոչել:

Հայր կոչէ զքահանայն վասն դոլոյ նորա փոխանորդ Հօր Աստուծոյ ՚ի թողուլ զմեղս մեղաւորին. որպէս և Հայր անուանեմբ զԱստուծած վասն հայրաբար գթոյն՝ զոր ցուցանէ առ մեղաւորն յապաշաւել նորա և ՚ի դառնալ ՚ի չար ճանապարհաց իւրոց : Իսկ սուրբ կոչի վասն քահանայական և սրբազնն կարգին զորունի ընկալեալ, որով և իբր միջնորդ խաղաղութեան լեալ ընդ Աստուծած և ընդ մարդ մեղաւոր, ըստ օրինակի նա-

խամարգարելին Վավսիսի , արձակել զնա  
'ի կապից մեղացն զօրութեամբ իշխա-  
նութեանն տուելոյ նմա 'ի Քրիստոսէ .  
և բարեխօս լինի առ Աստուած ներեւ  
նորին յանցանաց . որպէս երբեմն երա-  
նելի նահատակն Աստուծոյ Յամիք , բա-  
րեխօսէր առ Աստուած վասն երից բա-  
րեկամաց իւրոց , թողուլ նոցա զանօ-  
րէնութիւնսն . Յով . ԽԲ :

Տեսեալ քահանային զկատարեալ և  
զհաստատ զզջումն նոցա , արձակել զնո-  
սա 'ի կատանաց մեղացն , ասելով .

Ուրմեցի ժեղ ճարդասէրն Աստուած , և լո-  
ւ-կի-ն շնորհեցի ամենայն յանցանաց չոց , խոս-  
ուվանեցելոց և ճոռացելոց . և ես կարդաս-  
անկանացական իշխանութեան և հրամանաւոն աս-  
տուածային՝ լեռ պը արյակիցեւ յերկրի՝ եղիշի ար-  
յակիւլ յերկինս . Նովին բանի-ն արյակից զեղ  
յամենայն ճառակական-լեռն Ա-լոց չոց՝ 'ի խորհր-  
դոց . 'ի բանից , և 'ի գործոց , յանուն Հօր և  
Ուրմեց և Հոգուն Աբու . և Շարյեւլ առաջ ըն-  
ժել 'ի խորհրդու սուրբ Եկեղեցոց , չե ըս ինչ  
գործիցեւ բարեւ . եղիշի ժեղ 'ի բարեգործու-  
թի-ն և 'ի գործու հանդերձեւլ կենացն . ամեն :

Վեղեցիկ իմն է սյս խորհուրդ հառ  
 տառեալ 'ի սուբք Ակեղեցւոջ կոչել  
 'ի վերայ մեղաւորին զաղորմութիւնն  
 Կստուծոյ, առանց որոյ անհնար է մար-  
 դոյ գործովք իւրովիք լոկովք արդարա-  
 նալ թէ և զամենայն կեանս իւր ապաշ-  
 խարիցէ . վասն որոյ ասէ Կստուած .  
 "Ողորմեցայց՝ որում ողորմեցայց, և գը-  
 թացայց՝ յորս գթացայց ։ Ալլ. 19. 19:  
 Ուստի 'ի վերայ բերէ և առաքեալն ա-  
 սելով . "Ոչ ըստ այնմ ինչ է՝ որ կամի-  
 ցին, և ոչ ըստ այնմ՝ որ լնթանայցէ ,  
 այլ ըստ Կստուծոյ որ ողորմի ։ Հովհ.  
 Թ. 16: Իսկ քահանային միջնորդ և քա-  
 րեխօս լինելով յանձն առնէ զյանցու-  
 ցեալն յողորմութիւնն Կստուծոյ՝ ներել  
 յանցանաց նորա մարդասիրութեամբ  
 իւրով, տեսեալ զարտասուս և զկատա-  
 րեալ դարձ սրտի նորա . և թողու ըդ-  
 մեղսն միջնորդութեամբ քահանային և  
 զօրութեամբ քանիցն արձակման , թէ  
 "զոր արձակիցէք յերկրի եղիցի արձա-  
 կեալ յերկինս ։ Անպի. Ճ. 18. և թէ  
 "Աթէ ումեք թողուցուք զմեղս , թո-  
 ղեալ լիցի նոցա ։ Յով. Ի. 25:

Այսպէս կատարեալ խոստովանու-  
 թեամբ 'ի զլջումն սրտի եկեալ առաջի


քահանսցին իբրու փոխանորդի Աստուծոյ, վասն ամենայն մեղացն զոր մեղաւ 'ի խորհուրդս, 'ի բանս և 'ի գործս իւր, ընդունի զլթողութիւն 'ի դիմաց Աստուծոյ, եթէ զմեղացն խոստովանելոց և եթէ զներելի մեղացն մոռացելոց : Խակ եթէ ոք ոչ զզջացեալ 'ի վերաց չարեացն գործելոց, և ոչ հաստատ առաջորդութեամբ որոշեալ ընդ միտս իւր 'ի բաց կալ այնուհետեւ 'ի մեղաց, այլ իբր յօրինաց բռնադատեալ եկեսցէ 'ի խոստովանութիւնն, ոչ է պարտ այնպիսւոյն տալ զարձակումն և ասել զՊՄՐ մեսցին : Օ 'ի թէպէտ և քահանսցին անփոյթ արարեալ զայնու՝ արձակիցէ ըդնա, այլ ոչ ընդունիցի թողութիւն ԱՌ տուծոյ, արձանացեալ ունելով 'ի սրտի զամենայն զմեղսն . զի ոչ եթէ քահանսցին՝ այլ Աստուծոյ միայն է իշխանութիւն ներել յանցուցելոյն, ըստ այնմ. « Ես եմ, ես եմ նոյն որ ջնջեմ զանօրէնութիւնս քո վասն իմ, և զմեղս քո այլ ոչ ես յիշեցից ո . Եսայ . ԽԳ . 25 :

Արդ՝ տեսանեմք զբաղումս զի առանց կատարեալ զզջման սրտի և առանց Ճրշմարիտ բանի խոստովանութեան փութացեալ առ քահանսցին՝ խնդրեն 'ի նը-

մանէ զարձակումն, յուսալով եթէ այ-  
նու քաւեսցին մեղքիւր: Իսկ որ տղէան  
է խորհրդոց բանին, վաղվազակի զձեռն  
՚ի վերայ եղեալ ասէ նմա զողորմեսցին:  
Ով անմտութեանս: Օ իա՞րդ ոք արձա-  
կիցէ ՚ի մեղաց, չե լուեալ ՚ի բերանոյ  
մեղուցելոյն զխոսառվանութիւնն: քան-  
զի ասէ մեղաւ որին Տէր, “Ասա դու նախ  
զանօրէնութիւնսքո՛ զի արդարասցիս”:  
ԸՆԴ. 26: Վպա որ ոչ կամի, կամ ամաչէ-  
յայտնելզյանցանս իւրքահանային, կոյ  
մնայ պարաւանգեալ ՚ի տոռունս մեղաց:

Օ իա՞րդ թուի քեզ, եթէ ոք վիրո-  
յանձին ունիցի, և դիմեալ առ վիրա-  
բոյմն ստէպ խնդրիցէ ՚ի նմանէ սպեղու-  
նի ՚ի բուժումն վիրացն, միթէ տայցէ:  
նմա վիրաբոյմն զխնդրելին, և մատուցա-  
նիցէ նմա սպեղանիս մինչը տեսեալ և  
քննեալ զվերսն: և կամ առողջանայցէ:  
հիւանդն ՚ի վիրաց անտի առանց ճար-  
տար խորհրդոց և կարգադրութեանց  
բժշկին: ոչ. այսպէս իմա և զմեղուցե-  
լոյն: Վպա իմաստուն քահանայի է, լսել  
նախ զամենայն մեղս ՚ի բերանոյ խոստո-  
վանօրդւոյն, քննել և կըռել զծանրու-  
թիւննոցին և զչափ, դնել ՚ի վերայ սպե-  
ղանի առողջարար զապաշխարութիւն

ըստ մեղացն . և յետ կատարելոց զայն  
մեղուցելոյն , ասկա տալ զարձակումն և  
ընդունել զնա դարձեալ 'ի խորհուրդս  
սուրբ Ա;կեղեցւոյ , յորմէ անջատեալ էր  
'ի պատճառս մեղացն , ըստ այնմ . « Վեղք  
ձեր որոշեն 'ի մէջ ձեր՝ և 'ի մէջ լսու-  
ծոյ ո . Եսայ . Ծ.Թ. . Զ . Քանդի հեռանալ  
յեկեղեցւոյ կամ 'ի սուրբ խորհրդոց ե-  
կեղեցւոյն՝ է հեռանալ լուսուծոյ : Առ  
որ մատուցեալ կրկին մեղաւորի 'ի ձեռն  
խոստովանութեան և զղջման՝ ըստ օրի-  
նակի անառակ որդւոյն , և արձակեալ  
'ի կապանաց մեղաց իւրոց , ընդունի ըդ-  
կատարեալ ներումն 'ի մարդասէր Հօ-  
րէն , և շնորհս փրկութեան մատակա-  
րարութեամբ սրբազան խորհրդոց ուղ-  
ղափառ Ա;կեղեցւոյս :



# ԲԵՅԱՏՐՈՒԹԻՒՆ

ՅԻՇԵՍՑՈՒՔ ԵՐԳՈՑՆ

ՍՐԲՈՑՆ ՆԵՐՍԵՍԻ ՇՆՈՐՀԱԼՎՈՑՆ

=====

Յիշեսցուք ՚ի Գիշեր լանուն ո՞ Տէր :

**Յ**ԻՇԵԼՆ է զանցեալսն և զմուաշեալսն ՚ի միտո բերել և ՚ի յուշ ածել, թէ իմանալի իցեն այնք և թէ զգալի, թէ հոգեռը և թէ մարմնաւոր . բայց աստին դնէ յիշել զանիմանալի և զահաւոր անունն Կատուծոյ, զոր մոռացեալ լինիմք զանազան կերպիւ : Յայնժամ մոռանամք զանուն նորա, մինչ ոչ առնեմք զկամս նորա . “ Ո՞չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մոցէ յարքայութիւն երկնից . այլ որ առնէ զկամս հօր իմոյ, որ յերկինս է ո. ԱՌԱՊԻ. Ե. 21. Յայնժամ մոռանամք, յորժամ զգածեալ լինիմք պէսպէս ախտիւք : Յայնժամ յիշեմք, մինչ զգաստացեալ ՚ի բայց ընկենումք ՚ի մէնջ զամենայն ախտս : Առուանամք ըդ-

նա ՚ի յաջողութեան , և յիշեմք ՚ի ձաւ  
խորդութեան , ՚ի վիշտս և ՚ի նեղու-  
թիւնս առ ահի՝ ըստ օրինակի առաքե-  
լոյն Պետրոսի , որ յընկղմիլն գոչեր ա-  
հիւ մեծաւ . « Տէր փրկեա զիսո . Անտէ .  
ԺԴ . 50 : Ետ և ՚ի գիշերի յալեկոծիլ նա-  
ւուն՝ աշակերտքն ահաբեկ լեալ աղա-  
ղոկեին . « Տէր փրկեա զմեզ , զի կորըն-  
չիմք » . Անտէ . Ը . 25 : Եւ ՚ի գիշերի եր՝  
մինչ Պետրոս երիցս ուրացաւ զՏէրն  
՚ի տան Լայիափայ . իսկ յակնարկելն Յի-  
սուսի ՚ի նա , անդէն յիշելով զբան մար-  
գարեութեան ընդ նմին և զամենագութ  
ողորմութիւնն , ելեալ արտաքս՝ ելաց  
գառնապէս » . ՚ի ուն . ԻԲ . 62 :

Ի գիշերի յիշեցու ասէ , միթէ ՚ի գի-  
շերին և եթ արժան է յիշել զանուն նո-  
րա , և ՚ի տունջեան ոչ , քաւ մի լիցի .  
՚ի գիշերի և ՚ի տունջեան և յամենայն  
ժամու պարտիմք յիշել զանունն Կատու-  
ծոյ , և փառաւորել : Եւ զոր անուն ար-  
դեօք , քանզի ըստ անձառ շնորհաց և  
տէրութեան և մարդասիրութեանն և  
նախախնտմութեանն Կատուծոյ եղան  
՚ի սրբոց հարց և յաստուածարեալ մար-  
գարեից յատուկ անուանս ստորոգեալս  
զԿատուծոյ , որպէս յայտ է :

‘Ա,ախ՝ պարու Ե՛ յիշել գոհութեամբ  
զսուրբ անունն պահպանողական տէրու-  
թեան, և այս կարի յիրաւունս, զի հա-  
նապաղ հսկէ ’ի վերայ մեր գնալ ան-  
սայթաք ’ի գնացս մեր: Երկրորդ՝ յիշել  
զգերտգոյն մարդասիրութեանն նորա  
զանուն, և զանբաւ երախտիսն՝ որ առ  
մեզ, և զապիրատ երախտամոռացու-  
թիւնն մեր՝ առ նա. և ոչ միայն յիշել  
զանուն նորա, այլ և զզջալ ’ի սրտի, և  
խոստովան լինիլ զմեզս, և յառաջադրել  
մի ևս այլ դառնալ ’ի նոյն չարիս: Եր-  
րորդ՝ յիշել զանոխակալութիւն նորա և  
զամենողորմ գթութիւնն, որովք ոչ տո-  
նէ զմեզ անտես, այլ յաւէտ պահպանէ-  
ընդ հովանեաւ ամենախնամ թեոյ ան-  
սահման տէրութեան իւրոյ:

‘Դիշը մարթ է իմանալ և զխաւա-  
րային գնացս և զխորհուրդս խաւարի-  
նըս, որով զգածետ՝ հակառակ ընթա-  
նամբ լուսոյ աւետարանին, որպէս որք  
’ի սառւերական օրէնս կային՝ զուրկ է-  
ին ’ի լուսատու շնորհաց Հոգւոյն սրբ-  
բոյ. վասն որոյ ասէ առաքեալն. “ Դի-  
շերն մերժեցաւ, և աիւն մերձեցաւ.  
’ի բաց արասցուք այսուհեաև զգործս  
խաւարի, և զգեցցուք զգէնն լուսոյ ”.

Հ-ում. ՃԳ. 12: Այսու տայ յիշել զիւ-  
րաքանչիւրոց մեղաց զդմնդակ մթու-  
թիւնն և զխաւար, յորմե պարտիմք ե-  
լանել և դիմել առ լոյն առաւօտու-  
արդարութեանն արեգական, որ առաջ  
նորդէ ՚ի կեանսն յաւիտենականս:

Եւ դարձեալ՝ գիշերն ցուցանէ ըլ-  
լուութիւն ամենայն ստեղծեալ էակաց  
երկրաւորաց և զհանդարաւութիւն զայ-  
րութի կրից, յորում չի՞ք ինչ ամբոխու-  
մըն մտաց. վասն որոյ յորդորէ անզրօս  
մտօք յիշել զանուն Կատուծոյ, մինչ ըլ-  
բազանիք աւուրն և հոգք տակաւին չեն  
պաշարեալ զմիտս մեր. և այսու յիշմամբ  
ահաւոր անուանն Կատուծոյ, արձակի  
՚ի մեզ չնորհն զօրավիգ. զօրանայ ՚ի մեզ  
և սրբարարն, որով և մաքրութիւն և  
սրբութիւն ընդունիմք մեղաց մերոց:  
Որոյ վասն բորբոքեալ եւայ ՚ի սրտի  
մերում աշխոյմն օրհներդութեան, և  
մատչիմք ՚ի դով սրանչելեաց Կատուծոյ,  
որսկէս և բնութիւնն իսկ ճարտար վար-  
դապետէ, ուստի և յարէ յասելն.

Ա-շետայեն սիրահ մեր զբան բարի, և կը ըստ-  
մեր պատմեայեն զդործու երիւաւոր լադաւորի:

Արդ՝ աւադիկ աստէն զպատճառ

յիշմանն մակաբերէ . զի յիշելով մեր՝ ա-  
 սէ , զտհաւոր անուն քո սուրբ , մեր-  
 ժեալ հալածեալ և անհետ լեալ կորի-  
 ցեն իսպառ . ՚ի սրտից և ՚ի մտաց մերոց  
 ամենակերակ խորհուրդք չարութեան :  
 Եղիսեսցի , աղբերասցի բան բարի , այս-  
 ինքն խորհուրդ բարի : Եւ պատմես-  
 ցուք զգալի լեզուաւ զմեծամեծս և  
 զբանչելիս թագաւորին երկնաւորի :  
 Քանզի լեզուն է դործի ազդեցութեան  
 խորհրդոցն սրտի , կամ դուռն և թարդ-  
 ման մտացն իմաստից : Ապաբէն զօր դործ  
 կամ զօր սբանչելիսն Աստուծոյ ունիցի  
 լեզուն խօսիլ և պատմել : Թուի թէ՝  
 զարարչագործութեան համայն իմանալի  
 և զգալի է ակաց , ևս և զխորհուրդ ան-  
 ձառելի մարդեղութեան և փրկառիթ  
 տնօրէնութեան միածնի որդւոյն Աս-  
 տուծոյ Յիսուսի ՚իրիստոսի , որ է եր-  
 կրորդ արարչութիւն , նաև մեծագոյն  
 իսկ քան զառաջինն և սբանչելի : Եւ  
 զայս յիշէին մինչև ՚ի վեցեակ դարս՝ աս-  
 տուածարեալ նահապետաց և մարդա-  
 րէիցն դասք , և առ նոյն յիշատակութիւն  
 յորդորէ սուրբ ՞այրապետս զեկեղեցին  
 ՚իրիստոսի յիշատակել զխորհուրդ ամե-  
 նահրաշ տնօրէնութեանն Աստուծոյ : Ե

սոցին սակի են և այլ ամենայն ստեղծագործութիւնք՝ որբ վերաբերին առ սոյն կըկին գործս Աստուծոյ :

Ի Իշխան Գիշերի յարուցեալ իսպանվանեացու-  
չել Տէր :

Ուշ Գիշերի ցուցանէ զխոր մթութի  
խաւարի, յորում պարտիմք անձամք ան-  
ձին սթափեալ 'ի խոր քնոյն՝ յառնել 'ի  
խոստովանութի, ըստ Աաղմասին . « Ի մէջ  
գիշերի յառնէի խոստովան լինել առքեղ  
Տէր ». ՃՔԸ. 62. Ի օկբառս իսպանվանեացու-  
ասուն ոչ զդաւանութիւն խոստովանու-  
թեան նշանակէ, այլ զդոհանալ և զերկր-  
պագանելն . զի որպէս 'ի յառնելն ումեք  
'ի մարմնական քնոյ, ըստ քնութեանն ըս-  
տէ պ ստէ սկ գոհանայ զարարչէն իւրմէ,  
նաև սրանչացեալ հիանայ ընդ գերիմաստ  
ճարտարապետութի տիսրաբեր գիշերոյ  
յօրինողին , և զուարթացուցիչ տուըն-  
ջեան հաստողին . սոյնապէս և մեք պար-  
տիմք ըստ հսդւոյ յառնել 'ի խոր խաւարէ  
քնոյ մեղաց , և գետնամած երկրալագու-  
թեամք գոհանալ զնմանէ , և փառաւու-  
րել զամենասուրբ անուն նորա : Ի այց  
ուր արդեօք պարտ իցէ կատարել զայս  
պաշտօն , ցուցանէ հետագայ բանիւս :

Օ աղջին մեր բայսուս շել Տէր , ՚ի գուհի-  
լը և ՚ի մէջ նոր Երուսաղէմ :

Դաւիթն է նիւթական Ակեղեցին  
և տունն Եստուծոյ , ուր ՚ի մի ժողովեալ  
գումարին հաւատացեալք՝ մատուցանել  
նմա զբանաւոր պատարագս , այսինքն  
զաղօթս և զահաւոր խորհուրդն՝ որ-  
պէս ասէ Դաւիթ . « Եռէք պատարագս  
և մտէք ՚ի սրահս նորա . երկիրակագէք  
Տեառն ՚ի գաւիթս սրբութեան նորա » .  
Առաջ . ԱԵ . 8 . յորմէ վերելակեն աղօթք  
մաքուր մտացն առ Եստուած , և ՚ի տը-  
րիտուր փոխարինի իսկ և իսկ իջեալ  
ժամանէ ցող շնորհաբեր աստուածային  
անսպառ ողորմութեանն ՚ի վերայ ջեր-  
մեռանդ անձին հաւատացելոյ , և կա-  
տարին խնդրուածք սրտին :

Իսկ նոր Արուսաղէմէ նորածին ե-  
կեղեցին Քրիստոսի հիմնեալ ՚ի վերայ  
հնոյն , որոյ վէմ անկեան է նոյն ինքն  
Քրիստոս , որ ընդունի զամենայն աղօ-  
թը՝ որք մատչին հաւատով ՚ի ժողովոց  
հաւատացելոց . զայն աղօթէր և ՚Դա-  
ւիթ յասելն . « Օ աղօթս իմ Տեառն տաց  
առաջի ամենայն ժողովրդեան նորա , և  
՚ի գաւիթս տան Տեառն և ՚ի մէջ քո  
Արուսաղէմ » . Առաջ . ՃՃԵ . 18 :

Ի ԳԻՆԵԼԻ ՀԱՅԲԱՐՁՐՈՒՄ ՂՅԵՌԱ ԽԵՐ ԱՐԲՈՒ-  
ՐԵԱՅԲ ԱՎ ՏԵՂ ՏԵՐ :

Ըստ որում սովորութիւն է մանա-  
ւանդ յարեւելս՝ զձեռս 'ի վեր համբառ-  
նալով աղօթել զոր և այժմ գրեթէ յա-  
մենայն ազգս է տեսանել. որով նշանա-  
կի նախ՝ հեռի առնել զձեռս յամենայն  
գործոց անօրէնութեան. Երկրորդ՝ նո-  
վիմք խոստովան լինել զանիմանալի և  
զանհաս բարձրութիւն փառացն Աս-  
տուծոյ, որ 'ի վեր է քան զամենայն մի-  
տըս և զխորհուրդս բանական արարա-  
ծոցս՝ հրեշտակաց և մարդկան. Երրորդ՝  
նշանակէ՝ թէ պարտ է բարեգործու-  
թեամբ ձեռաց փառաւորել զամենա-  
սուրբ զԵրրորդութիւն, ըստ այնմ. « Կա-  
միմ զի արք կայցեն յաղօթս յամենայն  
տեղիս. բառնայցեն զաւրբ ձեռս 'ի վեր  
առանց բարկութե և երկմտութեան ».  
Ա. Տիմ. Բ. 8: Եւ ոմն 'ի սրբոց ասէ. լո-  
ւագոյն է համբարձմամբ ձեռաց աղօ-  
թել, բայց առաւել կարեորագոյն է 'ի  
վեր ամբառնալ զմիտս առ Աստուած :  
Աւստի ցուցանի, եթէ ձեռքն նշանա-  
կեն զմիտս, զի միտքն է կարողութիւն  
և զօրութիւն բանական հոգւոյ, որ է  
նմա իբր ձեռք, որով ձգաի 'ի բարին և

՚ի չարն , այլ նա ղբարւոյն ասէ , ուստի  
 յարէ , սընութեամբ : Կամի ասել . պարու  
 է նախ սրբել և մաքրել զմիտս և զխոր-  
 հուրդս ՚ի գիշերային խտւարէ չարաց ,  
 և ապա արժանապէս համբառնալ զձե-  
 ռըս մեր առ Աստուած , ըստ այնմ .  
 « Համբարձուք զսուրբ ձեռս մաքուր  
 մաղթանօք առ Աստուած , և անզըս  
 մտօք , և այլն ու : Եւ ՚ի քարոզն ասի . « Ամե-  
 նեքեան համբառնալով զձեռս մեր փա-  
 ռաւորեմք զքեզ տէր Աստուած մեր ու :  
 Քանզի և սահման աղօթիցն է , վերա-  
 ցումն սուրբ մտաց առ Աստուած . զի  
 սուրբ է Աստուած , և խնդրէ սրբու-  
 թեամբ մատուցանելնմա զերկրապու-  
 թիւն հոգւոյ և մարմնոյ : Ուրեմն ՚ի  
 համբառնալն զձեռս ՚ի վեր , պարտ է  
 ընդ նմին ՚ի վեր համբառնալ և զմիտս :  
 Համբարձումն ձեռաց բնական իմն  
 է աղերսարկուաց , բայց յորդորէ սուրբ  
 վարդապետն՝ լինել սրբութեամբ վա-  
 րուց և մաքրութեամբ լուացման . այս-  
 պէս սովոր էին առնել յամենայն ժամու  
 աղօթից ՚ի նախնի գարս քրիստոնեայք ,  
 որպէս յիշէ Տերտուղիանոս :

Ի յայն գոհութեան ամենայն հոգիս օրհնեց  
յէս շՏեր :

Այսու բանիւ խրախոյս տայ մեղ  
ամենեցուն, իբրու ասել, օ՛ն արիք՝ հա-  
ւատացեալք և պաշտօնեայք Վրիսառոսի  
Ճշմարտութեան, և միամօր մանկունք  
նորով Աիօնի, գոհաբանական ձայնիւ օրհ-  
նութեամբ երգեցէք զերգս փրկողին  
մերոյ . և անդադար գոհութեամբ բա-  
րեբանեցէք զուէրութիւն նորա հանա-  
պաղ : Խսկ հոգիս ասելով տայ իմանալ  
եթէ ըստ որում Աստուած հոգի է ,  
պարտիմբ և մեք հոգւով օրհնել և գո-  
վիլ զԱստուած , ըստ այնմ . « Հոգի է  
Աստուած , և երկրպագուաց նորա հո-  
գւով և Ճշմարտութեամբ պարտ է եր-  
կիրպագանել » . Յով . Դ . 24 :

Օ արլի՛ս Քառս իմ, շարլի՛ս Լ եւ շարլեայց  
սպառ-ց . ալէլու-իս :

Փառսն ըստ ոմանց են զօրութիւնք  
հոգւոյն , այն է՝ միտք և կամք . որք են  
դործարան կամ գործի , և պատճառ փա-  
ռաւորութեան կամ անարգութեան ,  
որովք ոչ միայն աստեն՝ այլ և 'ի հան-  
դերձեալն իւրաքանչիւր գործովք փա-  
ռաւորի կամ անարգի : Վանզի 'ի միտք

խորհի ամենայն ոք զամենայն և ճանաչէ, և անձնիշխան կամօք ընտրէ և առնէ. ուստի իւրաքանչիւր հաւատացեալ մաղթէ, զի զգաստասցին միտք առ ՚ի ճանաչել և գիտել զարարչին իւրոյ զանքաւ մարդասիրութեան զերախորիսն և զփրկութիւն իւր : Խոկ կամքն սիրելով զստեղծիչն իւր՝ առնէ զկամս նորա.քանեզի ճանաչելն է՝ գործ մտոց, և առնելն կամոց : Ահա ըստ այնմ բարւոքապէս խորհելով, ճանաչելով և առնելով զբարիս, փառաւորի Աստուած, որով փառաւորի և նոյն ինքն մարդն յաւիտեանս յաւիտենից : Եւս՝ ՚ի զարթնուլն և ՚ի զգաստանալն մտոց և կամոց՝ պարտ է կանխել ՚ի ժամ տռաւօտու ՚ի փառաբանութիւն ամենասուրբ անուան նորա : Ապա եթէ բայս զարթի՞չ գնէր եզակի, միտ բանին լինէր այս . զարթիր ո՛ Տէր իմ, զարթիր այց առնել ինձ, զի գու միայն ես փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ խմոյ, այսինքն հոգւոյ : Քանզի յայցելութեան քում անդէն առ նըմին ծագեսցի և առաւօտ շնորհաց քոց ՚ի սիրտ իմ, որով զարթուցեալ ՚ի նիրհմանէ, բովանդակ կամք իմ և խորհուրդ սրտիս ուղղեսցին առ քեզ՝ որպէս խունկ

բոլորապտուղ ըղձից . և գոհութեամբ  
փառաւորեցից զանուն քո յաւիտենա-  
կան ՚ի յաւիտեանս՝ ասելով, ալէլուիա :

Ալէլուիա է բառ եբրայական և նշա-  
նակել ըստ Հերոնիմոսի՝ գովեցէք զտէր .  
քանզի ալէլու իմանի՝ գովեցէք, և իս՝ ըդ-  
տէր : Ըստ Ամբրոսիոսի՝ ալէ է լոյս, ը-  
զօրութիւն, իս՝ կեանք : Ըստ Օգոստի-  
նոսի՝ ալէ փրկեամ, ը՝ զիս, իս՝ տէր :  
Ըստ Գրիգորի՝ Յիւսացւոյ՝ յարմարաբար  
ցուցանէ զլորորդութիւնն, ալէ՝ Հոյր,  
ը՝ Արդի, իս՝ Հոգի :

Օ արդի՛ք ընդ ըստընան՝ մանիունս վէրինն  
Սիօնի . ալէլուիա :

Կամի ասել, զարթիք մաքուր հո-  
գւով ով մանկունք՝ լուսաւորեալք մը-  
կրտութեամբ սուրբ աւաղանին, որ էք  
որդիք վերնոյն Ախօնի . զարթիք ըստ նմա-  
նութեան երկնային զուարթնոց, որք կան  
միշտ յանդադար փառաբանութեան Առ-  
տուծոյ . և գուք ընդ նոսին օրհնեցէք և  
գովեցէք ասելով, ալէլուիա :

Օ արդի՛ք որդի՛ք ըստընան ՚ի յօհնութեան Հօդն  
ըստընան . ալէլուիա :

Այսինքն՝ զարթիք ո՛ լուսաւորեալ

որդիք մարդացելոյն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է Ճշմարիտ լոյս Հօրն լուսոյ Երկնաւորի: Քանզի ծնընդեամբ սուրբ աւազանին լինիմք որդեպիր Հօր Աստուծոյ, որով կոչիմք որդիք լուսոյ. ոյր վասն ՚ի յորդոր մատչի ասելով, ապաքէն դուք՝ որ Եղէք որդիք լուսոյ, և հանգերձեալ էք ընդ որդիս լուսոյ՝ այն է ընդ հրեշտակս լինել փառաբանիչը Աստուծոյ. ահա ժամ է զարթնուլ, զարթիք և արիք օրհնել և փառաւորել զայրն լուսոյ՝ իմա՛ Արդւոյն միածնի՝ ասելով, ալէլուիա:

**Օ արլի՛ս Քրիեալ արեամբ, Լ պոտ զիւառա Քրիոնն. ալէլուիա:**

Վկ Քրիստոսի Աստուծոյ արեամբ փրկեալ ժողովուրդք, զարթիք ոչ միայն ՚ի ննջմանէ և ՚ի մարմնական քնոյ, այլ և ՚ի քնոյ մեղաց. որով արժանապէս տաշեք փառս փրկողին մերոյ Յիսուսի, որ փրկեացն զմեզ ՚ի գերութենէ սատանայի անապական և սուրբ արեամբ իւրով, զորմէ գոհանալով ասասցուք՝ ալէլուիա:

Օ արնի՞ս նոր ծոված-լուս, նոր երդու առեւլ  
նոր գողին. ալւ-իս :

Ով նոր ժողովուրդք՝ որք նորոգե-  
ցայք ՚ի հնութենէ մեղաց, եկայք նոր  
օրհնութեամբ նոր երդս ՚ի բերան ա-  
ռեալ երգեսցուք զիառս նորոգողին տի-  
եզերաց, որ նորոգեաց զմեղ ՚ի հնութե-  
նէ մեղաց հնոյն Աղամայ : Եւ կամ տե-  
սանելով մեր վերստին զիրկութիւն քո,  
նոր իմն գոհանալով նոր երդս երգես-  
ցուք քեզ Քրիստոսի նորոգողիդ, որ  
նորոգեցեր զմեղ հոգւով . քանզի փըր-  
կութիւնն է առիթ գոհութեան և շը-  
նորհակալութեան :

Օ արնի՞ս հարսունս հոգով սպասեալ գալ-  
սուրը իւսային . ալւ-իս :

Ո՛հաւատացեալք Քրիստոսի, որք  
հոգւով հարսնացեալ էք Աստուծոյ,  
սպատրաստ և արթուն լերուք ՚ի հոգիս,  
և ակնունելով սպասեցէք ամենազգաստ  
արթնութեամբ գալստեան անմահ փե-  
սային Քրիստոսի . զի ՚ի գալն իւր՝ ու-  
նի միանալ ընդ հոգւոց ձերոց՝ որում  
երգեսցուք ալշլուիս :

Օ արքի՛ վասեալ ըստ կմասնան  
առըն իրաւանացն . ալէլուի :

Կազմ և պատրաստ պահեցէք իս-  
պառ զլապաերս հաւատոց ձերոց , այս-  
ինքն զարդարեալ տմենայն մասամբ ա-  
ռաքինութեան , և լցեալ իւղով առառ  
ողորմութեան՝ հանգոյն իմաստունսուրբ  
կուսանացն . որք վառեալ լապտերօք ե-  
լեալ ընդ առաջ անմահ և երկնաւոր փե-  
սոյին Քրիստոսի , մոխին ՚ի յառագաստն  
լուսոյ՝ ասելով , ալէլուի :

Օ արքի՛ պապրաստեցէ՛ ի-շ լողութեաց ջերմ  
արքանուն . ալէլուի :

Օ որ ՚ի վեր կոչեաց լցո , ասո ի-շ  
անսուանէ . այլ թէ որպիսի իւղ իցէ այն  
զոր պարտ է պատրաստել , յայտ տռնէ  
ասելով ջերմ արքանուն : Բայց ՚ի կրկին  
նիւթոյ իմանի կազմել զլապտերս հոգ-  
ւոյ , նախ՝ ապաշաւողական ջերմ արտա-  
սուօք , որով լուսցեալ մաքրին հոգիք  
մեր յամենայն աղտոեղութենէ մեղաց .  
Երկրորդ՝ իւղով առաքինութեան , որով  
լուսաւորեալ մտանեմբ ՚ի յառագաստն  
լուսեղէն՝ ասելով , ալէլուի :

Օ արլեի՞ս և դ' ննջէ՞ս , նման յիմար կուսից  
նիւհէ՞ս . ալէլ-իս :

Օ արթիք ասէ , և մի ննջէք զքուն  
մեղաց՝ ըստ յիմարացն , որք անպատրոսոտ  
մնացին գալստեան սուրբ Փեսային . և  
ոչ իսկ ժամանեցին մոտել ընդ նմա ՚ի  
ցանկալի տռագաստն վերին , զի փակե-  
ցաւ դուռն ընդդէմ նոցա , և լուան  
զրարբառն զայն՝ թէ ոչ գիտեմ զձեզ :  
Առաջ . ԻԵ . 12 : Խւրեմն զնոսա օրինակ  
տռեալ մեզ՝ մի մնասցուք արտաքս ըստ  
նոցա . և լուիցուք զահաւոր և զսոսկա-  
լի բարբառն զայն . այլ արթուն լիցուք  
հոգւով , որպէս զի արժանասցուք մը-  
տանել ըստ իմաստնոյն՝ ասելով , ալէ-  
յուիս :

Օ արլեի՞ս երկրպահուստ , և արդասոս զայն  
ասասցուս . ալէլ-իս :

Օ արթիք ասէ , արիք և կացէք յա-  
զօթս սրտի մտօք , ՚ի ծունը խոնարհեալ  
երկիրպագցուք ՚ի վերայ երեսաց ըստհո-  
գենուագ երգողին . « Լըրկրպագէք պա-  
տռանդանի ոտից նորա՝ զի սուրբ է » .  
Առաջ . Դ.Բ . 5 : Քանզի երկիրն է պա-  
տռանդան ոտից Աթոռոյ աստուածու-

թեանն, ըստ մարդարէին Եսայեայ. «Երկինք աթոռ իմ էն, և երկիր պատուանդան ոտից իմոց» . Եսայ. ԿԶ. 1. Լացէք ուրեմն զջերմ արտասուս, և 'ի վեր մատուսջիք ըղձալի հոգւով զմաղթանս ձեր ասելով, ալէլուիա :

Օ արքե՛ր ընտէ՛ր ննջես, Տէր՝ Դ' Արքե՛ր  
շնէլ իսպանուս :

Եթէ առ մարդն տկնարկէ միտ բանին՝ նշանակէ . զարթիր 'ի քնոյ մեղաց ովլ մարդ, ընդէր ննջես անհոգութեամբ. արի կաց և թօթափեա 'ի քէն զքուն մտհուան : Եթէ առ Աստուած՝ ննջեն նշանակէ զթոյլտուութիւն իւր, կամ զանց առնելն զնախախնամութեամբ իւրով յաղագս բազում յանցանաց մերոց. յորժամ բարձի թողի առնէ զմեզ. յորժամ ոչ փութայ 'ի փրկել և աղտանել զմեզ 'ի բազմավիշտ նեղութեանց . յորժամ ոչ լոէ ձայնի աղտանաց մերոց, և ոչ կատարէ զխնդրուածս սրտից մերոց. Հառն. Ը. 26. Ուստի հոյցէ եկեղեցին, զի մի ննջեսցէ, այսինքն՝ զի մի ղանց արացցէ զիրկութեամբ իւրով ասելով. զարթիր ընդէր ննջես, Տէր մի մերյեք

զմեղ իսպառ . Անդի . ը . 23 : Պանզի յա-  
լէկոծելն մեր մեղօք՝ ննջէ , զի և մեք ըդ-  
գաստացեալ զարթուցուք վնա . և այն  
ինչ զառնամք առ նա , յայնժամ իբրու  
զարթուցեալ ՚ի քնոյ՝ ոչ առնէ զմեղ  
անտես , և չտայ թոյլ երբէք ընկվմիլ ՚ի  
խորս մեղաց ծովու , այլ սաստէ նմա ,  
և հանդարտեցուցանէ զմբրիկ խուռվու-  
թեան ոգւոց մերոց : Տէր ՚ի մէժեր ըս-  
մէլ իսպառ : Այսինքն՝ մի խոտութեամք  
և մի բարկութեամք քով անարգեր ըդ-  
մեղ իսպառ յաւիտեան , և մի անտես  
առներ զմեօք :

Երե՛ Տէր օդնեա՛ մէլ . այցուտ անուան-  
չում շիտառ :

Ի՞առ զ արի՝ նշանակէ զյառնելն ՚ի  
տեղւոջէ և կալ յոտին , որով ցուցանէ  
զաստուած ային ամենակար փրկութեա-  
նքն այցելութիւն , զպաշտպանութիւնն  
և զնտիսախնամական ողորմութեան գր-  
թութիւնն : Տէ՛ս , զի յորժամ անկանի  
ոք յանտանելի նեղութիւնս և ՚ի վիշտու-  
տառապի յոյժ և նեղի . յայնժամ կար-  
կառեալ զձեռս ՚ի վեր՝ ողոքանօք աղա-  
չէ զմ' ոք և իցէ՝ գտլ հասանել յօդնու-

թիւն . այլ այն ամենայն սնոտի է և ընդունայն , ըստ այնմ . « Անստի է այն՝ որ յուսայ ՚ի մարդ և յարարածս » : Քանզի ստոյդ օգնութիւն և փրկութիւն յիշառութոյ է մեզ , զի տռանց նորա չիք հրանար փրկութեան , բայց եթէ՝ « շնորհօքն Կոտութոյ ՚ի ձեռն Յիսուսի Քըրիստոսի տեառն մերոյ » . Հայով . է . 23 : « Օգնութիւն ինձ ՚ի Տեառնէ եկեղեցէ » . Այով . Ճի . 2 : Ուստի ասել կամի , յայց ելեալ օգնեա մեզ Տէր , և փրկեա զմեզ՝ յամենայն նեղութեանց հոգւոյ և մարմնոյ . և կամ թէ՝ տուր մեզ զօգնութիւն քո , այն է՝ զշնորհս , որով կարասցուք անվտանգ անցուցաննել զամենաթշուառ կենցաղս զայս : Տայուած անուան չուն զիտաւա . քանզի անունն Կոտութոյ միշտ փառաւորեալ է նախ քան զյաւիտեանս . Հայր յԱրդւոյ , և Որդի ՚ի Հօրէ , և Հոգին սուրբ ՚ի նոցունց , և նոքա ՚ի նմանէ , և փառաւորի անուն ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից :

Այլ մեք արարաք ՚ի նմանէ զի լիցուք փառաբանիչք անուան նորա . և կամակատար սուրբ հրամանացն , որով և անձառ փառացն հաղորդս դացուք .

Հայում. Ե. 21. Փառաւորելն զիստուած, է գոհանալ զնմանէ, և զկամօնորա առնել, ուստի ունիմք մեծապէս պարտաւորութիւն այսմ պարտուցս ճշմարտութեան։ Ուրեմն մի ծուլացեալ հեղագասցուք և մի անհոգ լիցուք, այլ արիացեալ ջանասցուք հատուցանել ըզ պարտս մեր, ըստ այնմ. « զոր պարտ է աք առնել արարաք», և այլն. Դ. 10.

Այժմ և յա-էր հօր և Որդոյ և սուրբ Հոդոյն, ամէն։

Վակբայս այժմ, ոչ միայն ցուցանէ զներկայ ժամն, յորումքաղցրածայն երգով փառս մատուցանեմք Աստուծոյ, այլ զբոլոր կեանս մեր. ուստի յարէ և յա-էր՝ որով ցուցանէ զմշտնջենաւորութիւնն, ըստ այնմ. « Դովիեսցէ մինչև ՚ի մահ անձն իմ զՏէր ո. Այրաւ. ծԱ. 8. Կամի ասել. եթէ ՚ի ժամ գիշերային պաշտամանս յայսմիկ, և եթէ յամենայն ընթացս կենաց մերոց՝ պարտիմք աստէն արժանաւորութեամք պատրաստ գըտանել ՚ի փառաբանութիւն ամենասուրբ Արքունիքութեանդ Նօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որով և անդէն ար-

Ժանի լիցուք երդել զերդս հոգեռոս  
յաւիտեանս յաւիտենից :

Օ պըլույշեալս ՚ի զբաղմանէ Գիշեային հան-  
գըստենէ :

Վեք որք ննջեաք զմարմնական քուն  
յանկողնի , և էսք մարմնով և եթ ՚ի  
հանգստեան , արդ զարթեաք ՚ի քնոյ և  
յարեաք շնորհիւ ողորմութեան քո . և  
զերծաք յազդի ազդի կորստական զբաղ-  
մանց , զոր պատճառէ գիշերային մար-  
մնական հանգստութիւնն . և կանիսեալ  
ներկայացաք ՚ի փառատրութիւն ան-  
ուանդ քում սրբոյ . ուրեմն զերծ ՚ի ներ-  
քին զբաղմանց խորհրդոց մասց : Թէ-  
պէտ արտաքին զբաղմունք ոչ են զորո-  
տիւ , այլ զմարմնով . քանզի սիրո մեր  
ազատէ յարտաքին զբաղմանց . բայց ան-  
կարդ մտածմունքն՝ են զբաղմունք ներ-  
քին շուրջ զսրտիւ , յոր միտս ասէ սուրբ  
վարդապետն . « ՚ի զբաղմանց ՚ի քո ատե-  
լի յիշատակաց ... փրկեամ » . Եւար . ԴԱ :

Ը նորհեացէ մեղ հարդասէր Տէր Թիլարու-  
թեն և ՚ի սովորանս եկեղեցոյ :

Յայսմիկ խնդրէ միսիթարութիւն  
ամենայն անձանց հաւատացելոց . զի

կացցեն հանապաղ՝ ի միսիթարութիւնս  
 հոգեորս, ժողովեալ՝ ի մի՝ հաւատով,  
 'ի մի Քրիստոսի Աստուծոյ ծառայու-  
 թիւն և 'ի սկաշտօն, որով սփոփեացի  
 և միսիթարեացի եկեղեցին Քրիստոսի  
 զանազան սլարդեօք շնորհաց, ոմանք  
 արդարութեամբ՝ ի մեղաց, ոմանք շնոր-  
 հօք, ոմանք մաքրութեամբ վարուց, և  
 ոմանք այլ իմն մասամբք առաքինու-  
 թեանց։ Քանիզ օրակէս քունն տչաց՝ է  
 միսիթարութիւն և սփոփութիւն մար-  
 մաց, սոյնակէս և արթնութիւն մտաց՝  
 է զուարթնութիւն սրտի և ոգւց։ Աեր-  
 հակ այսմ, թմրութիւն և քուն մտաց՝  
 է տրտմաւթիւն և սուդ յաւիտենական.  
 բայց սթափիլն ՚ի քնոյ մեղաց և կալ  
 յարթնութեան հոգւոյն՝ ՚ի ձեռն օ-  
 ժանդակութեան Աստուծոյն մերոյ Յի-  
 սուսի Քրիստոսի, է ստուգապէս և տի-  
 րապէս միսիթարութիւն և սփոփութիւն  
 հոգւց։ Ուստի մաղթէ զօդնութիւն  
 մեզ՝ զի լիցուք նախ մեք միսիթարեալք  
 և սփոփեալք յԱստուծոյ, և ապա կա-  
 րասցուք այնու լինել միսիթարիչ և սփո-  
 փիչ եկեղեցւոյ իւրում, շնորհօք Տեառն  
 մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ամիւ և Շահ-Ալեքսանդր կողյունք ՚ի յաշըն :

Այսու բանիւ զգուշացուցանէ ըդ  
մեզ, թէ մինչ կամիմք ներկայանալ ա-  
ռաջի Աստուծոյ առ ՚ի կալ յաղօթս,  
պարտէ մեզ յառաջագոյն ամօթխածու-  
թեամք և պատկառանօք սքողիլ, զահ  
և զերկիւղն Աստուծոյ ՚ի սիրտս և ՚ի  
հոգիս մեր բեեռել, երկնչիլ և սար-  
սիլ և դողալ ՚ի նմանէ՝ ըստ օրինակի  
մուերիմ ծառայից երկրաւոր թագաւո-  
րի։ Քանզի տեսանեմք, զի նոքա ահիւ  
մեծաւ և դողութեամք հանդիսանան  
առաջի. տպա եթէ ոք ՚ի նոցանէ խուն  
ինչ ժալրհեալ յանդդնաբար վստահաս-  
ցի, կրէ վազվազակի զպատիժ պատու-  
հասի, և անկեալ ՚ի պատուոյն զրկի ՚ի  
փառացն։ Ապա քանի առաւել պարտ է  
մեզ կալ պատկառ ահիւ և դողութեամք  
առաջի երկնաւոր թագաւորին անմա-  
հի, որ հասակիչն է ամենայնի և տէր  
համայնից եղելոց՝ երեելեաց և անե-  
րեութից։

Եկեղեւ խոստովանեսյուն զանցան :

Այսու բանիւ ամենայն հաւա-  
տացեալքս Քրիստոսի ՚ի յորդոր մատ-  
չիմք՝ դալ և անկանիլ առ աջի Աստուծոյ,

և խոստովան լինել զմեղս մեր խղճի մը-  
տօք, որթւմ ասի խոստովանութիւն խո-  
նարհական։ Իսկ խորհրդականն է իւրա-  
քանչիւր ումեք անկեալ ՚ի ծունք առա-  
ջի Աստուծոյ՝ խոստովանելքահանային՝  
իբր փոխանորդի Աստուծոյ, և ասել մի  
ըստ միոջէ ծածկաբար զամենայն մեղս  
յունկն նորա, և ապա յանձն առնուլ  
զապաշխարութիւն՝ յօժարակամ սիրով  
վճարել զայն. ըստ այսմ կարեմք ճշմար-  
տութեամք գտանել յԱստուծոյ զողոր-  
մութիւն, և յանցտնաց մերոց զթողու-  
թիւն, զորմե ասացաւ ՚ի բացատրու-  
թեան ողորմեսցիին, և այլն. ուստի յա-  
րէ ապա տսելով.

Եւ Գոյր-Տ ՚ի Քրիստոսէ ըստ-Եկեղ և  
շնծ ըստ-Եկեղ։

Վեծ ողորմութիւնն Աստուծոյ՝ է  
թողուլ զմեղս և քաւել զյանցանս մեր.  
զի մինչ մեղաւորն կայ մնայ տակաւին ՚ի  
մեղս և անզեզջ ՚ի չարիս, ոչ լոէ երբէք  
Աստուծած աղաչանաց նորին, և ոչ ըն-  
դունի զաղօթան, և ոչ կատարէ զինդ-  
րուածս սրտի նորա, և ոչ իսկ ինքն կտ-  
րէ երբէք գտանել զողորմութիւն յԱս-  
տուծոյ, այլ յուրժամ զզջացեալ սրտիւ-

ո իմեսցէ առ նա , և ստուգապէս խոս-  
տովան լինիցի զմեղս իւր , յայնժամ լսէ  
և ընդունի զիսնդրուածս և զաղաչանս  
սրափ նորա : Որ և ընկալեալ զողորմու-  
թիւն ՚ի Վրիստոսէ , գտանէ զթողու-  
թիւն մեղաց և զբաւութիւն յանցա-  
նաց , և արդարանայ շնորհօք նորա :  
Որում մատուսցի վառք և պատիւ .  
Յա-իտեանս յա-իտենից . ամէն :  
Ալէլ-էա , ալէլ-էա , ալէլ-էա :





# ԲԵՅԵՏՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ

ԵՐԳՈՅՆ

ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԵՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Աշխարհ ամենայն, առ իս նայեցեալ, ակտովից  
լէրուս :

|| ՏԵՌԱ բնակչաց զբնակութիւնն  
գնէ, և կոչէ զնոսա յունկնդրութիւն,  
այսինքն զամենայն մարդիկ յամենայն  
աշխարհաց՝ ոքք ’ի ներքոյ երկնից՝ առ  
’ի ցաւակից լինել ինքեան : Բայց մարթ  
է աստ իմանալ զօրութեամբ և զվերին  
աշխարհն, այն է զհրեշտակս, իբր ասել.  
ով աշխարհ ամենայն, կամ ամենայն բա  
նական արարածք, այսինքն հրեշտակք  
և մարդիկ, դարձարուք հայեցարուք  
առ իս, և ցաւակցաբար ունկնդիր լե  
րուք բանիցս՝ զոր ունիմ աւասիկ պատ  
մել ձեզ զամենայն զաղէտս հոգւոյ և

մարմնոյ իմս, և ամբաստան լինել զանձնէս՝ թէ զիարդ ՚ի ձեռն անպատշաճ խորհրդոց բանից և գործոց ապախտաւոր գտայ առ ամենաբարի կամս արարշին իմս : Եւ կամ այսպէս . բնութիւն մարդկան՝ որ է բանական արարած Աստածոյ, մեղանչելով յԱստուած, յախտակցութիւն կոչէ զամենայն արարածս . Այսու իբր զղջականաբար խոստովան լինի առաջի ամենեցուն զմեծագոյն աղերախտութիւնն իւր՝ որ առ Աստուած, զգառնայն յետս ՚ի սիրոյն Աստուծոյ, և զհետեւ ին կամաց չարին . զթափուր մընալն ՚ի գործոց բարեաց, և զլինել իւր գող և գողակից տիրապէս գողոյն ամենաչարի, զորս կարգաւ պատմէ՝ ասելով.

Բանամ շշնդուն, բարբարիմ լեռնաս . բաղսէմ զանյնէս :

Յայտ առնէ, թէ ՚ի բանալ շըրթանց, և ՚ի խօսել լեզուաւն՝ ոչ կամի խնդրելինչ յԱստուծոյ, կամ գոհանալ զնմանէ, կամ օրհնել զնա, որոց ամենեցուն բոլորովին զանձն իւր անարժան համարեալ, միայն և եթ բողոք բարձեալ ամբաստան լինի զինքենէ յաղագս անօրինակ յանցաւորութեան և

ապերախտութեանն իւրոյ, որով ընդ ու-  
 տիւք է հար զամենայն բարութիւնս տ-  
 րաբչին, և զարդիւնս չարչարանաց փրկ-  
 չին իւրոյ. ոյր աղադաւ ողբայ զղջմամբ  
 'ի վերայ չարեացն, որպէս զի 'ի գութ  
 շարժեալ ողորմեսցի ամենաբարին Առ-  
 տուած : Բանզի գթալն Աստուծոյ 'ի  
 մարդ և ողորմելն նմա՝ է թողուլ զմեղս,  
 և արմատախիլ առնել զամենայն անօրէ-  
 նութիւնս : Ի՞այց թուի ինձ թէ՝ ոչ  
 զմարմնական և զարտաքին շրթանցն տ-  
 աէ, այլ զներքնոյն և զհոգեորէն, որք  
 են միտք և կամք, զի միտքն է իբր վե-  
 րին շուրթն հոգւոյն, և կամքն՝ ստո-  
 րին : Իսկ կամքն զօրութեամբ յերկուս  
 բաժանի յիմաստնոց, վերին և ստորին:  
 Վերինն է բաղձանքն բանական, իսկ ըս-  
 տորինն՝ բաղձանքն զգայական : Աստէն  
 իմանի բանական բաղձանքն, որ միաւո-  
 րեալ ընդ մտաց՝ իբր կրկնակի շրթամբք  
 դատախազէ զանձնէն, անձնիշխան կա-  
 մօք յայտնի առնել ամենեցուն զաղի-  
 բատ ապախտաւորութիւն իւր՝ զօր ու-  
 նի առ բաղմապատիկ բարերարութիւնս  
 Աստուծոյ, զոր ցուցանէ յամենայն ժա-  
 մանակի :

Վաշելք Խշոյ, Գրօլիբստեան, Գուբ ին  
Դուեցի :

Վողեմ ասէ, ոչ ընչից և ապրա-  
նաց, կամ ոսկւոյ և արծաթոյ, և կամ  
ական հատանելոյ, զորոց 'ի լսելն դա-  
տաւորաց և 'ի քննելն՝ փութան 'ի վը-  
րէ մինդրութիւն, 'ի բանստ արկանել,  
դանել, տուժել, չարչարել, և ազգի ազ-  
գի տանջանօք կտտամահ առնել. 'ի սուր-  
սուսերի մաշել, և կամ կախել զփայտէ :  
Այլ բազմատեսակ անօրէնութեանց և  
մեղաց դողեղէ ասէ. որով դտանէ ըզ  
կորուստ հոգւոյն, և զառիթ մահու յա-  
ւիտենական դատապարտութեան :

Եթէ գողութիւն ընչից ընկերին՝ է  
մեղք մահու չափ, իսկ մեղացն գողու-  
թիւն քանի առաւել, մեղաց՝ զոր խա-  
չիւն դատապարտեաց. Վրիստոս 'ի մար-  
միի իւրում և յանդունդս դժոխոց ծած-  
կեաց. իսկ մեղսասէրն ձեռամբ իւրով  
արտաքս կորզեալ զնոյն գողութեամբ,  
արհամարհէ զխաչիւն՝ որալ ազատեցաք  
'ի նոցին դատապարտութենէ, և զդուք  
մեղաց փորելով անձամբ զանձն իւր 'ի  
դժոխոս մատնէ :

Դաստիարակության հմայական է, դաստիարակության հմայական է, դաստիարակության հմայական է:

Այսինքն՝ աներեցիթ և սպատրոզական իմմ նենդութեամբ հնարս մահու հնարեցի հոգւոյս, որով կապտեցաւ անձը իմ՝ ի շնորհաց, զոր ընկալեալ էի յաւաղանեն, որով և անհաշտ թշնամի լեալ Այսուծոյ՝ դաւեցի ջանիւք և պէս պէս հնարիւք կորուսանել զանձն իմ։ Օքր օրինակ դաւեցին տիրասպան Հրեցայք չարաչար մահուամբ սպանանել և կորուսանել զՊօղոս՝ զանօթն շնորհաց։ Գործ. ԻԳ. 12. Ի սոյն միտ ասէ և սուրբ Ա արդապետն նարեկեան՝ կոչելով զանձն « կամաւոր անձնամատն » . Ի՞ն. ԽԸ. Այսինքն՝ կամաւ մատնեցի զհոգի իմ աներեցիթ թշնամւոյն՝ ի ձեռն բազմօրինակ մեղաց։ Այսնպէս և ես ասէ. անձամբ անձին որոդայթս լարեցի, խորս հատի, և գուբս յաւիտենականս փորեցի յաղագս տիրականին պատկերի, այն է՝ հոգւոյն բանականի, որ է անօթ շնորհաց, կամաւ մատնելով զանձն ՚ի նոյն. յորմէ չիք հնար զերծանել առանց մեծամեծ տուժից և տուգանաց, գոնէ վճարմամբ յաստիս ըստ մարմնայ, ըստ այնմ թէ, « Եւ դատաւորն մատնիցէ

դահճի, և դահճն արկանիցէ ՚ի բանդ .  
տսեմքեզ, ոչ ելանիցես անտի՝ մինչև  
հատուցանիցես զյետին բնիսննո. Առա.  
Ե. 26:

Արբեմ էի ըս, եւ այժմ էմ իսուր, եւ  
սուրել մահու :

Ոինչ էի յանմեղութեան և յար-  
դարութեան, զոր ընկալեալ էի ՚ի սուրբ  
տւաղանէն, որով կոչեցայ Ճշմարիտ հա-  
ւատացեալ. և լոյսն անքննին Յիսուս  
գերբնական իմն շնորհօք բնակեալ ՚ի  
յիս, և ես ՚ի նմա հաւատով, մաքուր  
մտօք, սուրբ սրտիւ և անաղտ հոգւով.  
այլ ընկղմելով զիս ՚ի խորս չարեաց, մեր-  
կացայ յինէն զլոյսն շնորհաց և զտուիչն  
լուսոյն. և կամ մնամ խաւարեալ և ան-  
կեալ ՚ի ստուերս մահու, այսինքն ՚ի  
մեղս, որ է ոպատկեր յաւիտենական կո-  
րրստեան :

Օ յա՞ր պատմեցից, զի՞ւ Խլոյ իմց, Շ  
բաղամ էն յոյժ :

Վոլշութեամբ և տարակուսանօք ՚ի  
մեջ բերէ զյաձախութիւն մեղաց իւ-  
րոց, ստղտանելով զանձն, որով խոնար-  
հարար առաջի արկանէ զնոսսա ամենա-

գութ արարչին ըստ օրինակի ապոշխա-  
րող թագաւորին Անասեայ, որ ցու-  
ցաներ զմեղս իւր առաւել լինելքան  
զաւաղ ծովու . Ապա առաջի դնէ զան-  
ձին իւրոյ զթշուառութիւնն, որ ող-  
բալի է քան զամենայն ինչ :

Երիկն և Երիկը, Եկայք ողբացէր, Եւիլք  
լանին իմ :

Յառաջնում տանն կոչեաց ՚ի ցա-  
ւակցութիւն սննձին իւրոյ . իսկ աստ դը-  
նէ զհետեւութիւն նորին, որ է լալումն՝  
ողբումն և աշխարումն : Իբր զի՞ տեսա-  
նելով զինքն յոյնպիսի դառնաղէտ և յո-  
դորմելի վիճակի, ողբակից լինիցին ՚ի մը-  
խիթարութիւն անձին իւրոյ : Աւ կոչէ  
՚ի լաց և յարտասուս զերկինս և զեր-  
կիր, և այլն : Փոխանունաբար խօսի աս-  
տեն, զանուն պարունակողին եղեալ փո-  
խանակ պարունակելոյն, կամ զբնակու-  
թիւն՝ փոխանակ բնակչաց : Կամի ասէլ.  
ով երկնայինք և երկրաւորք, այսինքն  
հրեշտակք և մարդիկ, արդ ժամ է ար-  
դէն ողբերգութեան, մինչչև ելեալ իմ  
յաշխարհէս՝ եկայք հայեցարուք և տե-  
սէք, թէ որպիսի թշուառութիւնք ա-  
նօրինակք և անհամեմատք եկին հասին

ինձ, և ախտակցաբար ցաւակցելով ողը  
բըս յօրինեալ լացէք զիս : Վանդի եղէ  
կութիւն անձինս ոչ առժամանակեայ  
է, այլ յաւիտենական և անվախճան :  
Օորոյ զգատճառն յարէ զինի, և այն  
ոչ եթէ ակամայ, կամ յայլմէ իմեքէ ա-  
րարածոց առթեալ, այլ կամաւ ասէ  
ստացայ զթշուառութիւնս զայս . ուս-  
տի և յարէ .

Ի՞նորեցէ շւրջ, ընկալոյ իւմա—, ըշոյլ մելոյ :

Երարիչն ընութեան՝ անձնիշխան  
կամս ես մարդոյ . որոյ առաջի եդ ըլ-  
հուր և զջուր, այսինքն զչար և զբարի,  
զի զնըն և կամիցի՝ զայն ընտրեացէ ին-  
քեան : Իսկ ես ասէ, կամաւ իմով ըստ  
զգայական բաղձանացս սրտի՝ ընտրեցի  
վասն իմ զհուրն, այն է զչարն, յորմէ ա-  
ռի զնիւթ դառնութեան զբաղմութիւն  
մեղաց, 'ի յաւիտենական այրումն հո-  
գւոյ, և յեղծումն մասանց համօրէն  
առաքինական գործոց :

Խաղաղի ողմով, լաւալի ՚ի մել, լոկո-  
միւ չիւրեմ :

Կամաւ ընդունելով յանձն իմ ըլ-  
խումբ բաղմութեան մեղաց՝ թաթա-

ւիմ ասէ տղմով . ոչ ՚ի մեջ տղմց ըստ  
 օրինակի խողից , յորմէ դիւրին է ՚ի բաց  
 թօթափել զանձն , և կամ ջուրբ լուա-  
 ցեալ սրբիլ և մաքրիլ , այլ ՚ի տիղմ մե-  
 ղաց և անօրէնութեան . յորս դիւրա-  
 գոյն է անկեալ թաթաւիլ և շաղտիսիլ ,  
 այլ դժուարին թօթափիլ անտի լուա-  
 նալ և մաքրիլ . ՚Քանզի որպէս կամաւ  
 ասէ ընտրեցի , այսպէս և կամաւ թա-  
 ւալիմ . Այլ յայսմանէ ոչ է հնար ու-  
 մեք ազատ մնալ , և ոչ թաթաւիլ երբէք  
 ՚ի տիղմս գարշութեան մեղաց : ՚Քանզի  
 սկզբնահայրն չարեաց սատանայ սերմա-  
 նեաց զորոմն չարութեան ՚ի բնութեան  
 մեր , յորմէ և կամակար վնասեալ ուրուք  
 օգնութեամբ չարագրգիռ կամաց մար-  
 մնոյն , որչափ և ջանայցէ ազատիլ և սըր-  
 բիլ , չկարէ այլով իւիք թօթափել յին-  
 քենէ ՚ի բաց , եթէ ոչ՝ կատարեալ զըզն-  
 մամբ և ճշմարիտ խոստովանութեամբ  
 որով միայն մաքրեալ ընդունիք զշնորհս  
 ներողութեան յլ սառւծոյ , ըստ այնմ .  
 «Ո՞րչափ գլորիս՝ կանգնեամ , որչափ մե-  
 ղանչես՝ ապաշխարեամ » : Յանակէլ չիարէմ .  
 վասն զի մեղքն մի զկնի միոյ ըստ օրինա-  
 կի ալեաց ծովու եկեալ յարձակին ՚ի  
 վերայ , յորոց ոչ այլով իւիք մարթ է

պլրծանիլ անվտանգ, եթէ ոչ բուռն հարկանելով զժայռից խոստովանութեան և ապաշխարութեան :

Յանդակական լուսաւոր է լուսաւոր է լուսաւոր է լուսաւոր է լուսաւոր :

Յանդակական է ցաւ մահառիթ, որ և ասի ժանտամահ, ըստ ռամկաց՝ մահցաւ, գրօղ, կամ շտիկ. բայց աստեն յատկապէս իմանի մեղքն, որ է չարագոյն ժանտամահ բանական հոգւոյ. Օ ի որպէս ժանտախտն կամ ժանտամահն՝ է մահացուցիչ մարմնոյ, և բարձող կենաց, սոյնալէս և մեղքն է մահառիթ հոգւոյ, և բարձող յաւիտենական կենաց: Ճանտախտն բերէ մարդոյ զժամանակաւոր մահն. և այն՝ ըստ մարմնոյ և եթ. իսկ մեղքն՝ զմահն յաւիտենական, ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ: Ասի թէ՝ հարեալն՝ ի ժանտախտէ. առաւել գարշահոտի քան զախտացեալն, այլով ախտիւ և որդունք յամենայն ծակոտիս մարմնոյն եռան: ուստի և բազումք՝ ի զազրալի հոտոյն վեասին. և վարակեալ նովին ախտիւն մեռ անին. այսպէս և հարեալն՝ ի չարագոյն ժանտախտէ մեղաց և անօրէնութեանց, բուրէ

յինքենէ հանապաղ զզուելի և զգարշա-  
հոսութիւն իւր 'ի բազում ժամանակս ,  
մինչև է զզջացեալ 'ի մեղոց , ոչ միայն  
ժահահոսութիւնն իւր բուրէ առ մար-  
դիկ . այլ և՝ առ ամենայն սուրբս , և առ  
հրեշտակս , և առ Առտուած : Վանդի  
բուրէ առ մարդիկ , 'ի զգուշացուցա-  
նել զնոսա դարշիլ 'ի նոցանէ , և հեռա-  
նալ և ոչ լինել մեղսակից նոցա և կրել  
զզատիժ 'ի մարմնի : Իսկ առ սուրբս ,  
առ հրեշտակս , և առ Առտուած բու-  
րէ զհոտ առ 'ի բարկութիւն և 'ի վը-  
րէժինդրութիւն ածել զնոսա հոգւոյ  
և մարմնոյ , աստ և 'ի հանդերձելումն :  
Այլիբրե զզջացի բոլորով սրտիւ , յայն-  
ճամ բարձցի իսպառ հոտն դարշու-  
թեան : Եւ փրկեսցի 'ի յաւիտենական  
մահուանէ , և եղիցի հոտ անոյշ առ  
մարդիկ , և առ ամենայն սուրբս , և հր-  
եշտակս և առ Վրիստոս Առտուած մեր ,  
որում փառք յաւիտեան :

Ե բայ Աւելեցայ 'ի սուրբ Խորհրդոյ 'ի բա-  
րեայ Գուծոյ :

Ե բայ մեկնիլն է թողուլ զմին՝ և  
պնդիլ զհետ միւսոյն , կամ զատանիլ և  
որոշիլ 'ի նմանէ : Եւ որչափ պատուա-

կանագոյն իցել իրն, յորմէ մեկնի ոք, այն  
շափ մեծագոյն լինի և վիշտն իւր . ա-  
պա քանիօն առաւել չվշտանայցէ նա  
որ կամաւ իւրով ՚ի բաց թողու զամե-  
նաբարի արարիչն իւր, որ է պատճառ  
ամենայն բարութեանց . և մեկնեալ ՚ի  
նմանէ զհետ երթայ բանսարկուին՝ յոր-  
մէ ամենայն չարիք : Օ սոյն օրինակ և ես  
ասէ . մեկնեալ հեռացայ ՚ի մաքուր և  
՚ի սուրբ խորհրդոց սրտի, որ է մայր և  
ծնող ամենայն գործոց բարեաց յորում  
և Աստուած բնակի . և հետեւապէս ըդ-  
կնի չարին միտեցայ . այն է՝ խորհելով  
զարիս առ ՚ի լնուլ զտենչանս մարմնոյ :

Լ ա՛ - Հարիս - անյն իմ, լուսոյն հեռանել,  
չնիւ ընտ իստու :

Արդարեւ զարմանիք մեծ բերէ ինձ  
այս . սիրտ իմ զահի հարկանի, և սոս-  
կայ անձն իմ, թէ զիանդ ոք լաւ հա-  
մարիցի ինքեան չտեսանել զլոյս, և չը-  
լայելել երբէք զքաղցրութիւն նորա,  
այլ զրկեալ ՚ի նմանէ՝ ախորմէ մնալ ՚ի  
խաւարի, ընտելանալ ընդ նմա, և բը-  
նակիլ ՚ի նմա . զի այդ ոչ է գործ մար-  
դոյ բանսականի, այլ յաւետ չարասիրի .  
վասն որոյ ինքն Տէրն մեր ասէ . « Ամենայն

որ զչար գործէ՝ ատեայ զլոյս, զի մի յան-  
դիմանեցին գործք նորան. և թէ՝ « Ախ-  
րեցին մարդիկ զխաւար առաւելքան  
զլոյս ». և յետոյ յարէ զպատճառն. « Օ ի-  
էին գործք իւրեանց չարութեանն. Յանձ.  
գ. 19, 20 :

Եայց թուի ինձ թէ անյն ասելովին-  
մանի ստորին մասն կամաց, որ է բաղ-  
ձանքն զդայական. ըստ որում մարմինն  
առաւել միտէ ՚ի կոտարել զկամն իւր,  
և ընուլ զանկարգ բազմանսն, որով և  
հեռանայ յլուսուծոյ, զրկի ՚ի լուսոյն  
շնորհաց և մերկանայ ՚ի հոգեոր բար-  
եաց, և տիսորժէ յաւէտ բնակիլ ՚ի խա-  
ւարի՝ քան եթէ ՚ի լոյս, յուսալով գը-  
տանել անդ անձին տպաստանարան. այլ  
պատահին նմա և անդ ամենայն չարիք,  
որում ակն չունէր երբէք. և փոխանակ  
միսիթարութեան հոգւոյ և սփոխանաց  
որտի՝ գտանէ զանփարատելի տրտմու-  
թիւնն և զխայթ մտացն խղճի : Ահա  
պտուղ հեռանալոյ ՚ի սուրբ խորհրդոց,  
և դատարկանալոյն ՚ի գործոց բարեաց,  
որով դատարկանայ և ՚ի ճշմարիտ հա-  
ւատոցն, և հետեալիս ՚ի Վրիստոսէ  
Աստուծոյ, որ է լոյս ճշմարիտ, ըստ այնմ.  
« Ես եմ լոյս աշխարհի . որ զայ զինի իմ

ընդ խառար մի գնասցէ . այլ ընկալցի  
պոյտն կենաց » . Յով . ը . 12 .

Խորհուրդն արքին՝ խոբեն շնորհիս , խորասոյն  
օռունին :

Այսինքն՝ ամենայն չար խորհուրդք,  
որք յառաջ գան . ՚ի ներդործութենէ դիւ-  
աց . և ՚ի թիւրեալ մտաց , զարտաքին  
առարկայս զառիթու մեղաց . որք են կատ-  
տիչ և կողոստիչ հոգեւոր բարեաց , իբ-  
րև զմշտնջենաւոր իմն բարիս ներկայա-  
ցուցանեն մտաց խմոց . առ ՚ի թիւրել  
զկամս իմ հակիլ ՚ի չարիս , որով ընկըզ-  
մեալ սուզանի և անձն իմ ՚ի գուբն յա-  
ւ խոենական , այն է՝ ՚ի մեղս , զի յանկա-  
նիլն ՚ի մեղս , անկանի յայնժամ ՚ի խորս  
և ՚ի յատակս դժոխոց . յորոց փրկեսցէ  
զմեզ զամենեսեան՝ Քրիստոս Առտուած  
մեր այժմ և միշտ : Ապա յետ ընկըզմե-  
րայն՝ զի՞նչ ինչ առնեն հոգւոյն , յարէ  
զկնի ասելով .

(Օ ածիւն անդնդօս , ծիծաղին գլուխամբ .  
ծանակ զիս առնին :

Եւ յետ խարելոյ և որսալոյ սատա-  
նայի և դիւաց՝ զմարդն , և արկանելոյ  
՚ի վիհն յաւիտենական կորստեան , այն է

՚ի մեղս , յայնժամ կափաւ ցանէ և փակէ  
 զդրունս ընդդէմ նորա , այսինքն պէտ-  
 պէտ հնարիւք ջանաց ածել՝ ՚ի վերոյ նո-  
 րա զիստասրտութիւնն և զյուսահա-  
 տութիւնն . և յայնժամ իբրու շուրջ պա-  
 տեալ զեռվաւ՝ սկսանի ծաղը և ծանակ  
 առնել զնա , և վա՛շ վա՛շ կարդալ , և ծա-  
 նակելով զերգս կատականաց յօրինեն  
 այսինքն չարութեան ըստ օրինակի որ-  
 սորդաց , որք բազում հնարիւք , լարեալ  
 զորոգայթո իւրեանց , յանկանիլ անդ որ-  
 սոց ՚ի ծուղակս , սկսանին նուադել նր-  
 ւադս ուրախալիցս : Այնդունակ ասէ ,  
 առնեն և դեք մարդկան . որք իբրև տե-  
 սանել տեսանեն զզօրաւ որադոյնն ՚ի մէջ  
 յաստուածպաշտութեան , զարիագոյնն  
 ՚ի յաղօթս , զջերմեռանդն ՚ի սէր , և ըշ-  
 յօժարամիտն ՚ի գործս բարեաց . հնա-  
 րին լարել նմա զորոգայթո մեղաց , առ  
 ՚ի որսալ զնա և ձգել ՚ի նոյն . և յետոյ ու-  
 րեմն յիշեցուցանեն նմա անդ զբարիոն  
 զորս ունէր նա յարդարութեան և յան-  
 մեղութեանն և ծանակեալ ծաղը առ-  
 նեն զառաքինութեամբն . և զսուրբ կըօ-  
 նիւքն , որով պարծէր երբեմն : Վ ասն այ-  
 սորիկ աղերսանօք հոյցեսցուք ՚ի Տեառ-  
 նէ . զի մի լքեալ թողցէ զմեղ ՚ի ինա-

մոց իւրոց , և լիցուք ծաղը և ծանակ  
ամենաչափին . այլ ասասցուք ընդ հոգեւ-  
նուագ սուրբ Վարդարէին . « Վի ընկրտ  
ցեն զիս պառոյտք ջուրց . և մի ընկրտու-  
ցեն զիս անդունդք խորոց , և ջրհոր մի  
կափուսցէ զրերան իւր 'ի վերայ իմ » .  
Առաջ . Կը . 16 :

Լուսաւ կորացայ , կարկանդալ անյամբ , կան-  
գուկ ու կարեմ :

Լուսաւ է՝ հակիլ , և թեքիլ , 'ի խո-  
նարհ գլխակոր , զի որպէս բեռնակիր ոք  
որ ընդ ծանրագոյն բեռամբ կորացեալ  
անհնարին լինի նմա կանգուն կալ և հայ-  
ել 'ի վեր . սոյնպէս և ես ասէ , միշտ մը-  
տօքս 'ի յերկիր պշնուլ . և 'ի զգալիսս և  
եթ հայիլ ախորժեցի , ըստ օրինակի ան-  
բանից , որք ըստ պահանջելոյ բնութեան  
իւրեանց՝ զգայութեամբ վարին , նման  
սոցին և ես ասէ . կամաւ իմով կորացայ  
'ի մեղս , որով կաշկանդեալ կարկամեալ  
դնիմ հոգեալէս : Ուստի ներքին զգայ-  
ութիւնք իմ , որք են միտք և կամք , չը-  
կարեն երբէք ուղղիլ . և 'ի վեր հայիլ  
առ Վստուած , ըստ ապաշխարող արքայ-  
ին Վանասէի , թէ « կորացեալ եմ ես  
'ի բռնութենէ կապանաց երկաթից ,

(այսինքն մեղաց .) և ոչ գոյ ինձ հանգիստ ու վայց բազմապատիկ ծանրադաշնեն. այսինքն անթուելի և անկշռելի են մեղք իմ քան զերկաթ . և քան զաւթուտասանամեայ , և զերեսունեռութամեայ ախտացեալսն՝ առաւել ևս կամ կարկամեալ անձամբ , որոց որպէս հնարչէր ամենեին բժշկիլ , եթէ ոչ էր հայեցեալ Յիսուսի գթութեամբ 'ի նոսա , և հարցեալ զփափագ առողջութեան . ոչ բժշկէին . հանգոյն սոցին ասէ , և ես կորացեալ կարկամեալ կամ անձամբ առաջի ամենատես արարչիդ , և ոչ իսկ համարձակիմ խնդրել թողութիւն մեղաց . որպէս զի ուղղեսցի և ողջասցի անձն իմ . այսինքն՝ հոգի իմ . ապա դնէ զպատճառ կորանալոյն , և զինասն մեղաց՝ ասելով .

Հում Խշոց Ալեք Կրտեհեայ ո՛ր Հիւ , Հոգւոր Բարիւ :

Աստէն իմանալապէս և փոխաբերաբար խօսի , զի որպէս զգալի և նիւթական հուրն կիզիչ է բնութեամբ , զոր ինչ և գտանէ զիւրե զապականացու նիւթական իրա՝ հրդեհեալ ծախէ և սպառէ . սապէս և մեղքն է կիզիչ

և այրեցող՝ ըստ իւրում յատկութեան, զոր ինչ և գտանէ՝ ՚ի հոգեռոր բարեաց ՚ի մարդումն, կիզեալ հրդեհէ և սպառէ զամենայն, և ոչ թողու ինչ ՚ի նոցանէ, և ոչ մի ։ Աւստի կամի առել թէ զամենայն հոգեռոր բարիս՝ որ էին ամբարեալ յիս շնորհօքն Յիսուսի Քրիստոսի, և զորս բազում ճգամբք և առաքինական վաստակօք ժողովեալ էի, զայն ամենայն հուրն մեղաց՝ իմա զօրութիւն նորին կիզեալ հրդեհեաց, և սպառեալ ոչընչացոց, թողեալ զհոգի իմ անատառ և խոպան յամենայն բարեաց։ Օ որ օրինակ է տեսանել զերկիր այրեցեալ հրովարմանգամ ոչ ևս բուռուցանէ բոյս բարիս, եթէ ոչ նախ վարելով հերկիցի և շրջիցի հողն։ Ե յօպէս և հոգին և սիրումարդոց եթէ ոչ վերստին շնորհօքն Եստուծոց ՚ի ձեռն զզման և ասլաշխարութեան կակլասցի, ոչ ևս բուռուցանէ զբոյս առաքինութեան։

Հաղիեցայ ՁԵ՛Ս, Յաղեցին աԵսո՛՛, յանյրաց հոգին։

Հաղիելն է՝ հարկանիլ յումեքէ ձաղկօք. որ երբեմն լինի իրաւամբ, և երբեմն յանիրաւի, այլ աստանօր իմանի

յանիրաւի, և ոչ իրաւամբ : Ակամի ա-  
 սել ձաղկեցայ յոյժ շարաչար, ոչ՝ ի մար-  
 դոյ, կամ յարտաքին երեելի թշնամւոյ,  
 այլ՝ ի ներքուստ և՝ ի ներքին խղճէ մասց  
 և յաներեւոյթ թշնամւոյ ՚ի ձեռն մե-  
 ղաց իբր գաւազանաւ : ‘Չաղեցին պեսովն  
 ասէ, նախ՝ նոյն ինքն խիղճ մասոյն ամե-  
 նայն իրաց մարդկան տեսողէ և քննող,  
 որ գրեթէ բազում անդամ մինչև ցելս  
 շնչոյն անարգեալ արհամարհէ զմարդն՝  
 յաղագս անպատկան գործոցն . և ծի-  
 ծաղի զնովաւ այսկն արարեալ, փոխա-  
 նակ զի չանսաց բարի բարի հրահանգաց  
 և ազդեցութեանց : Երկրորդ՝ տեսօղը  
 քըն են իմանալի զօրութիւնք երկնից .  
 այն է՝ հրեշտակք, զի յորժամ ՚ի ձեռն  
 չար գործոց վշտացուցանէ ոք զարարիչն,  
 արհամարհելով և անարդելով զանբաւ  
 երախտիո նորա, անդէն գրեթէ գատա-  
 պարտեալ պատմի և ծաղր լինի նոցա :  
 Երրորդ՝ տեսօղքն են գեք . զի ՚ի ձաղ-  
 կելնոցա զմարդն մեղօք, հիւանդացեալ  
 նորա հօգւով և մոօք անկեալ գնի ՚ի  
 մահիճս մեղաց , և յայնժամ սկսանին  
 խնդալնդ կորուստ նորա, և վաշ վաշ  
 կարդան անձանց իւրեանց պարելով,  
 ըստ այնմ . և վաշ վաշ անձանց մերոց .

զի ընկվուղաք զնա՞ . Ասդմ . ԼԴ . 25 . Կպա  
յարէ , յանյրացաւ հռդիս . բանզի 'ի հարկա-  
նիլ և 'ի ծաղը լինիլ մարդոյ մեղաւորի ,  
ուստանայ և գեք ուրախանան ընդ յաղ-  
թիւն իւրեանց . իսկ մարդն՝ այսինքն  
հոգի մարդոյ ձանձրանայ և տագնապի .  
ըստ այնմ , թէ և Ոչ ինչ գտանեմ ուրեք  
հանդիստ 'ի մարմնի , յոր թագիցիմ վայ-  
րիկ մի առանց գանելոյ ու . 'Չորրորդ՝ յոր-  
ժամ յայտնեցին մեղքն և մերկապա-  
րանոց լինին յանցանքն . յայնժամ ձաղ-  
կեն զնա մարդիկ բանիւք և իրօք :

' Ի է՛շ Շահան-Բեան ջոշեալ ' ի սիրտ իմ .  
Հմբար իմ վլաւ :

Վստանօր իմանի շաղկապ իմն զօ-  
րութեամբ՝ վասն որոյ , կամ յորմէ . որ-  
պէս թէ ասէր , դառնութիւն լեզւոյ  
թագուցեալ կայ 'ի սրտի իմում , յորմէ  
կամ վասն որոյ շիջաւ լապտեր իմ այս-  
ինքն լուսաւորութիւն մտացս : Այլ աստ  
ոչ զնիւթական աման դառնութեանն  
ասէ , յոր ժողովի հեղուկ ինչ կանաչ ո-  
րում ասի լեզի , որպէս է տեսանել 'ի  
կենդանիս , և 'ի մարդն . այլ զիմանալի  
դառնութեան լեզին ասէ . որ է խոր-  
հաւրդ շարութեան և մեղաց , որ մնայ

զողեալ և ծածկեալ՝ ի սրտի, և օք ըստ  
օրէ, ժամէ՝ ՚ի ժամ՝ և յամենայն վայր-  
կենի ժողովեալ շտեմարանի՝ ՚ի նմա որ-  
շափ և տեղի տասցէ օք ընտրողութեամբ  
մտացն. ուստի լինի առիթ և պատճառ  
շիջման լապտերի, այն է՝ խաւարման լու-  
սոյն շնորհաց, օք է զամբար և լապտեր  
բանական հոգւոյն, յորմէ և լուսաւո-  
րութիւն մտաց: Ի՞նականաբար՝ ՚ի դառ-  
նութենէ մեղաց գրեթէ համարի շի-  
ջանել սրտին, օք բարոյական լապտեր  
է մարմնոյն:

Ճաշակամբ մեղաց, ճաշեցի չմահ, ճոխ աղ-  
ապացայ:

Անընտրողաբար զերդ առն քաղցե-  
լոյ ցանկութեամբ սրտի, երբ զհետե-  
ղէ յօժարութեանց մարմնոյս կատար-  
ման, իբրու թէ ճաշակելով զմեղս, այն  
է՝ խորհելով, խօսելով և գործելովը ըզ-  
չարիս, ճաշեցի յայնժամ և զմահն յա-  
ւիտենական, որպէս նախաստեղծք՝ ՚ի  
դրախտին ճաշակմամբ պտղոյն. ոյք վասն  
և թշուառացայ հոգւով, վատնելով զա-  
մենայն գործս բարեաց՝ ըստ անառակ  
որգւոյն. ՚Կ ու ՚ ԺԵ ՚ ԱՆ: ՚Բանզի՝ ՚ի խոր-  
հիլն, ՚ի խօսիլն, և ՚ի գործելն զչար՝ վատ-

նին ամենայն բարութիւնք մարդոց . իսկ  
եթէ զղջացեալ սրտիւ դարձցի կրկին առ  
Առտուած , ստանայ վերստին զմեծու-  
թիւն և զհարստութիւն հոգեոր բա-  
րեաց . ապա թէ ոչ կայ մեայ իբրև ըգ-  
մեծատունն այն . որ ուներ յաշխարհի  
աստ զամենայն ինչ , իսկ յելանելն յաս-  
տի կենաց՝ ոչ ինչ տարաւ ընկ ինքեան ,  
բայց միայն զթշուառութիւնն յաւի-  
տենտկան . ՚ ՚ ՚ . Ճ. Ձ. 19 : Ուստի յարէ  
զկնի , ճոխ աղջադայ . ըստ օրինակի մե-  
ծատանն . ոչ մարմնով ասէ , այլ հոգւով .  
քանզի զմարմնայն՝ օրտաքին թշնամիք և  
եթ կարեն կապաել կողոպտել զարտաքին  
ինչս . իսկ զհոգւոյն՝ ներքին և աներե-  
ւոյթ թշնամիք կապտեն , զամենայն բա-  
րիսն ասեմ և զմթերեալ ճոխութիւն  
հոգւոյն , և զմարդն առնեն յաւիտենտ-  
կան ողորմելի և թշուառ . ՚ ՚ ՚ . Ճ. Ձ. 19 :

Եպա մի ախտրժեսցուք ճաշակել ըդ-  
մեզս , զի մի ըստ մեծատանն ճաշակես-  
ցուք զմահն յաւիտենական . և աղքա-  
տացեալ և ծարաւեալ կարօտասցուք  
կաթի միոյ ջրոյ , խնդրել ծագիւ մատին  
առ ՚ի զրվանաւ ՚ի տապոյ անշիջանելի  
հրցյն . որում և ոչ իսկ հնարէ հանգի-  
պել , զի փակեալէ դուռն զթութեան ,

և բարձեալ ժամանակն ողորմութեան :

Ո՞ւեւալ է հոգովը , Տուրեալ հոօսն . Թ-  
այն իամ Տարհնովը :

Ո՞ւեւալ է ասէ , ոչ մարմնով այլ  
հոգով . իսկ հոգին բանական անմահ  
գոլովի ոչ կարէ մեռանիլ տիրատպէս , այլ  
բարոյապէս բարձմամբ շնորհացն : Քան-  
զի առիթ կենդանութեան հոգւոյ և  
յաւիտենական կենացն է շնորհն աս-  
տուածային : Իսկ ՚ի մեղանչելն մարդոյ  
մահացու մեղօք , մեկնեալ հեռանայ ՚ի  
նմանէ շնորհն , յայնժամ մոլորի միտքն  
իշխանական , և տատանեալ վարանի .  
յայնմհետէ չղօրէ բնաւին առնել ինչ  
ուղիղ ըստ կամացն Աստուծոյ : Քանզի  
բաղձանիքն զգայական պաշարէ զբանա-  
կանութիւնն յամենայն ուստեք , վասն  
որոյ չկարէ անսալ պատուիրանացն Ա-  
ստուծոյ . և չկամի երբէք ընթանալ ըշ-  
հետ կամացն Վրիստոսի , և զհաճոյս  
նորա առնել . այլ միայն և եթ մարմնով  
կայ մեայ յաշխարհի՝ ըստ նմանութեան  
քառոտանեաց , վասն որոյ և հաւասարի  
նոցին գործովք իւրովք , ըստ այնմ թէ՝  
և Հաւասարեցաւ անասնոց անբանից ,  
և նմանեցաւ նոցա ։ Ասդ . Խը . 12 .

Ասել կամի . ազատ կամք իմ՝ որ է զօրութիւն հոգւոյ իմոյ , և օթարան շնորհացն Աստուծոյ , անկեալ կայ ընդ կամօք մարմնոյս . ուստի ցանկայ հնազանդել զկամս մարմնոյն ընդ կամօք հոգւոյն : Արակես յայս միտ տափ և ՚ի Շարականին . « Տուր զօրութիւն հոգւոյս կամոց՝ հնազանդել զկամս մարմնոյս » :

Յորդայլ ճակու , յորսովն անկայ , յաշեւ-  
ցայ յախիշ :

Թէպէտ և որոգայթք սատանոյի բազում են՝ որովք որսացաւ զմարդիկ , բայց յատկապէս գլխաւորքն են եօթն . զոմանս որսայ որոգայթիւք հպարտութեան , զոմանս՝ նախանձու , զոմանս՝ բարկութեան , զոմանս՝ ծուլութեան , զոմանս՝ ագահութեան , զոմանս՝ որկրամոլութեան , և զոմանս՝ բղջախոհութեան . ուստի կոչէ որդայլ ճակու . և զի սոքա են մեղք մահացու , որովք մահացեալ հոգին՝ մեռանի բարսյապէս : Եա մանաւանդ ՚ի ժամանակիս յայսմիկ տեսանեմք ՚ի մեղք զբազումս , որք կամաւ անկանին յորոգայթս բամբասանաց , զբարտանաց , բառութեան և ատելութեան , ոչ ինչ մեղս անձանց վարկանե-

լով. և այնչափ ախորժելով ընթանան  
զնոցին Ճանապարհ, մինչ զի համարել  
եթէ այնոքիկ իցեն դրունք արքոյու-  
թեանն երկնից, ընդ որս մտանեն առ Առ-  
տուած: Այլ ըստ իմաստնոյ, « Են Ճա-  
նապարհը որ թուին մարդկան թէ ու-  
ղեղ իցեն, բայց կատարած նոցա երթայ  
յատակօ դժոխոց » . Եռակ. ձԴ. 12: Եւ  
կամ այսպէս . ՚ի յաղթիլ մարդոյ ՚ի կը-  
րից ցանկութեան և յախտից բռնու-  
թեան, անկանի յայնժամ յանելանելի  
որոգայթ մահու, ոչ ժամանակուորի  
այլ յաւիտենականին :

Եւակյ Աշամ-ոյն, Նշանակ Եղէ, Նոր Թլւ  
իոյսովիմ:

Կատ փոխաքերութեամբ խօսի, ոչ  
զմարմնոյ նետն ասէ, որ զմարմինն խո-  
ցոտեալ վիրաւորէ զգալապէս, այլ ըդ-  
հոգւոյն՝ որով խոցեալ վիրաւորի հո-  
գին իմանալապէս . և հասանէ մինչ ՚ի  
դրունս յաւիտենական մահու, յորմէ  
չիք հնար փրկութեան առանց զզման  
խոստովանութեան . վասն որոյ իւրա-  
քանչիւր անձն հաւատացեալ դիմէ առ  
Կատուած բազմաղերս հայցուածովք,  
յայտնել նմա զիսոցուածս նետից բան-

ապրկուին, որպէս զի հայեսցի գլուխ  
թեամբ իւրով յանքուժելի վերս հո-  
դւոյն, ծագելով ընդ նմին և զոյս շնոր-  
հաց իւրոց ՚ի սիրտս. և հաշտեսցի ընդ  
ինքեան, որով լինիցի առ ողջութիւն ցա-  
ւոց և բժշկութիւն վերաց : Աշա և՝  
հաստատեալ ամրացուսցէ ՚ի շնորհս իւր,  
զի մի դարձեալ վերստին ընկալցի զվերս  
հոգւոյ ՚ի նետից աներեւոյթ թշնամւոյն:

Ըստ պատեալ վել, շնորհ բարեմբ ե-  
ւել, շառիին արեամբ :

Այսինքն՝ պատեցան զինեւ գեք,  
և պատեն միշտ զանազան այլանդակ խոր-  
հրդով որպէս զիատաղի շունս, որք պա-  
տեալ պաշարեն զմարդ ՚ի խածանել, և  
գիշատելով չարաչար պատառել. բայց  
շունք զմարմինն, իսկ գեք զհոդին շա-  
ղախեն արեամբ : Արեամբ իմանի մեղքն,  
որով կերակրիլ և պարարիլ ախորժեն  
միշտ շունք : Զի որպէս տղրուկը՝ որք  
արեամբ պարարին, կամ որպէս խոզք՝  
որք ՚ի յաղտեղիս, և ՚ի գարշելի տիղմն  
թաւալին . բ. Պետ. բ. 22. նոցին նման  
և գեք ջանան հանապաղ ասէ, թաւա-  
լիլ ՚ի մեղս իմ : Ամանագոյնս այսմ բար-  
բառի և ՚Կաւիթ ՚ի սաղմոսարանի իւ-

բում, յասելն. և Եւ լեզուք շանցքոց յա-  
րենէ թշնամեաց քոց ո. Ասլվ. ԿԵ. 24.  
Այլաբանօրէն առեալ սրբոյ մարդարէ-  
ին, շուն կոչէ զգես գաղանացեալս :

Ուր եղէ լարին, ու կանու մեռց, ու ու-  
շու լանյն իմ :

Ակզբնահայրն չարեաց ստոպանայ  
արկանէ յաւէտ զուռկանս իւր ՚ի խորս  
ծովու, այսինքն՝ զչարիորհուրդս ՚ի սիրու  
մարդոյ, առ ՚ի որսալ զհոգին. զոր առ-  
նէ ինքեան որս հաճոյական և կեր ա-  
խորժելի՝ ըստ ձկնորսաց, որք արկանեն  
զուռկանս ՚ի խորս ծովու՝ առ որսալց  
զձկունս բարեհամս, առ ՚ի լինել ին-  
քեանց կերակուր : Եւ որպէս ձկնորսք  
որսան զձկունս ՚ի ձեռն խայծի, զոր ցան-  
կալով ճաշակել անդէն ըմբռնին ՚ի կար-  
թըն . այսպէս և ամենաչար որսորդն  
մարդկան սատանայ՝ ՚ի ձեռն ուռկանի  
չար հրապուրանաց իւրոց արկեալ զմե-  
ղացն մտհաբեր քաղցրութիւն ՚ի քիմս  
հեշտութեան ոգւոց մարդկան, իսկ և  
իսկ ըմբռնեն զնոսա և առնեն ինքեանց  
կերտկուր : Եւ զոր օրինակ՝ սակաւք ո-  
մանք ՚ի ձկանց անտի կարեն փրկիլ և ու-  
զուոիլ յուռ կանէ որսորդաց, նմանապէս

և ռակաւք ոմանքը՝ ի մարդ կանէ յոյժ գը-  
տուարաւ և հաղիւ կարեն փրկիլ և ա-  
զատիլ՝ ի գիւական ուռկանէ մեղաց .  
ուստի աղերսէ , զի մի թոյլ տայցէ ան-  
կանիլ յուռկանս մեղաց . յորոց փրկեսցէ  
և ազատեսցէ զմեզ . Քրիստոս Կոտուած :

Չորաչար կլոծ , չորչը անյն իմ , չո-նիմ  
բարերուն :

Տիրապէս վիշտ կամցաւ այնմ ա-  
սի , որ անվախճան է և յաւիտենական .  
իսկ որ անցաւոր է և առժամանակեայ՝  
ոչ է տիրապէս վիշտ . ուստի ասէ , այն-  
պիսի չարաչար ցաւովք և վշտօք չարչա-  
րի անձն իմ , այսինքն՝ հոդի իմ , որ չու-  
նի երբէք մեղմանալ և զկոյ առնուլ  
՚ի ցաւոց և հանդարոիլ՝ ի վշտաց անտի :

Եայց գիտել պարտ է թէ ո՞ք ար-  
դեօք իցեն այս ցաւք՝ որով չարաչար  
վշտանայ անձն : Ա, ախ՝ մոտացն խղճի , ո-  
րով տագնապի հոդին՝ ոչ միայն աստ ,  
ոյլ և ՚ի հանդերձելու մն . զի յիշելով ըգ-  
մեղսն իւր՝ համարի զինքն գոլ տրժանի  
յաւիտենական պատժոց և դատապար-  
տութեան : Երկրորդ՝ վշտանայ հոդին ՚ի  
գիւաց , որոց կամովին անձնամատն լեալ  
և կարթիւ մեղացն որսացեալ ՚ի նո-

յունց, տասլակի անձն նորա, աստեն ընկալեալ զգբաւական հանդերձեալ տանցաց, զոր ունի տանջիլ ընդ նոսա անշէջ հրով, անքուն որդամբ և սառնամանեօք, և աղջամուղջ խաւարաւ : Քանչ զի ամենաբարին Կստուած զջերմ սէր հաստատեաց 'ի մարդն, զի զստեղծիչ և զտէր իւր սիրիցէ . բայց նա առաւել հաճեցաւ սիրել զարարածս՝ քան զարարիչն, և ոչինչ փոյթ եղեւ զտեառնէ իւրմէ . վասն որոյ իրաւամբ և արդարութեամբ բարձի թողի լեալ 'ի նըմանէ՝ վշտանայ հոգին իւր չարաչար վըշտօք յաւիտեանս յաւիտենից :

Պարբապան Գոյայ, պարբուց յանցանաց, պարեւալ ՚ի մեղաց :

Պարտիլն է՝ յաղթիլ, ոչ 'ի մարդոյ ասէ՝ այլ 'ի մեղաց, որ դառն է քան զտենայն պարտութիւնս . որում հետեւի լինել պարտասլան յաւիտենական դատապարտութեան . զի պարտականն՝ է մեղաւորն, և վճարումն պարտուց յանցանաց և մեղաց՝ է պատիմն յաւիտենական . և եթէ ոչ աստեն ապաշխարութեամբ վճարեալ հատուցանիցէ բզ պարտս յանցանաց, անդէն ունի անպա-

կաս հատուցանել մինչև ցյետին բնիունըն . Դ Հ - ի . ԺԲ . 89 : Ա յլ զայս բանիւն եթ ասել՝ չառնէ ինչ օգուտ . զոր օրինակ՝ եթէ ոք առեալ իցէ յումեմնէ հարիւր դահեկան , որում պարտական գտանի հատուցանել , ամբողջապէս երբ և իցէ . ապա եթէ բանիւն եթ ասիցէ նմա , յորմէ էառն զհարիւր դահեկանսն , և ոչ տայցէ զայն իրօք , և ոչ հատուցանիցէ , զի՞նչ օգուտ լինիցի նրմա բանիւն միայն ասելն . այլ կայ մնայ յաւիտեան 'ի ներբայ պարտուցն , մինչեւ վճարիցէ անպակաս զհարիւր դահեկանն . զսոյն է խմանալ և զպարաւուց մեղաց :

Պ անամ շնչառաւ ջերանիմ տարյեաւ ջեռանում  
Հրավ Խեղա :

Ի ազում ջանիւն ջանամասէ , և փութամ զղջալ յայնոցիկ ամենայն մեղանչական գործոց , զորս գործեցի ընդդէմ կամաց Աստուծոյ իմոյ , բայց 'ի դերեւ ելանեն ամենայն ջանք իմ . քանզի 'ի խորհելն և յառաջարկել ընդ միտս իմ զոյս խորհուրդ գովելի , գայ հասանէ երագ 'ի վերայ ջերմութիւն իմն տապոյ խորշակի դիւտկան շնչոյ , որ է թառամեւ

ցուցիչ նորաբողբոջ ծաղկանցն արմատոյ  
զղջման իմոյ ՚ի սրտի . Այլ թէ որպիսիք  
ջերմութիւն իցէ . յայտ առնէ ՚ի յետին  
հատուած բանիս , ջեռում ասէ հրով Ձ-  
ղայ . ոչ զնիւթական և զարտաքին հուրն  
ասէ , որով մարմինն և եթ այրեալ և կի-  
զեալ տոչորի , ոյլ զջերմութիւն հրոյն  
մեղաց , որով հոգին կիզեալ տոչորի , ըստ  
սրբոյն . « Օ ուր հանդիսանամ , և իրա-  
ւամբ տոչորիմո » . Եալ . ՀԱ :

Ուրեմն փութասցուք ջանալ սիրելիք ,  
կաթիւ միով արտասուաց զղջման շիջու-  
ցանել զզօրութի հրոյն մեղաց մերոց , և  
ջեռուալսուրը սրտիւ խորհրդովքանիւ  
և գործով բարեաց . և զջերմութիւն սի-  
րոյն Կատուծոյ և ընկերին թագուցեալ  
պահեսցուք ընդ մոխրով խղճի մտաց ,  
զի մի շիջանիցի ՚ի շնչելոյ խորշակի ամե-  
նաշարին , որպէս զի՝ ՚ի ժամանակին վե-  
րըստին արծարծեալ բորբոքեալ աարա-  
ծեսցի ՚ի սիրտս մեր , ըստ սրբազան հր-  
ոյն հին սղջակիզին , զոր թագուցին ըր-  
բեսցք ՚ի յատակս մեծի ջրհորոյն ՚ի ժա-  
մանակս գերութեան . յորմէ ապա յետ  
դարձին իւրեանց եկեալ գտին զնոյն ան-  
շեջ պահեալ , որով և մատուցին զող-  
ջակէզ իւրեանց . Բ . Այս . Ա . 22 . Այս .

պես և մեք հրով սիրոյն Աստուծոյ թագուցելոյ ՚ի խորս սրտից մերոց, մատուռցուց պատարագ Աստուծոյ զհոդի խոնարհ և զապաշխարութեան, որով և մաքրեսցուք ՚ի մեղաց :

Ուսբբի իշխայ, առկայ անռանիմ, առմիան վարուս :

Աստ որում անուն իրին ՚ի մէջ բերէ զնշանակեալ իրն . զի ուր յիշի անուն ուրուք, անդ նշանակեալ լինի և անձն . զոր օրինակ՝ անուն այս ինչ արքայի, կամ իշխանի և կոմմենտատուն՝ փառաւորի ՚ի քաղաքին, նշանակի այնու՝ եթէ արքայն, իշխանն և մեծատունն փառաւորին : Իսկ այս փառաւորութիւն ՚ի գործոց անտի լինի, և ոչ ՚ի սոսկ անուանակոչութենէն . սոյնապէս իմա և զհոդե որական զղերց եկեղեցւոյ, եթէ դպիր իցէ, եթէ սարկուագ, և եթէ վարդապէտ, և եպիսկոպոս կամ հայրապէտ : Ուստի ասէ՝ աբբի իշխայ, առկայ անռանիմ . այսինքն՝ ՚ի մարդկանէ կոչեցայ և կոչիմ ուսուցիչ և վարդապէտ ըստ պահանջելոյ հոգ և որական կոջմանս յայն աստիճան, բայց անիմաստ և տղէտ գոլով, սոսկ անուն իմ միայն ունի զպատիւն, ըստ բանի

Տեառն. Ալիրեն կոչիւ իմարդ կանէ՝ ու աք-  
րի ու ամբարի, և զոր ասեն ոչ առնեն ո.  
Մատթ. 19. 7. Քանիդի յատկութիւն վար-  
դապետի է, նախ՝ ու սանիւ քաջ, և ա-  
պա զայլս ու սուցանել, և քարոզել հա-  
ւատացելոց զըանն կենաց : Աւստի յա-  
ղագու գուեհիկ վարուցս և անոպայ բա-  
րուցս ասէ՝ անուանեալ կոչմ ու ակայ,  
այսինքն՝ անմիտ կամ յիմար, զի զվարս  
զոր ունիմ՝ ոչ է վարդապետի կամ քա-  
հանացի, այլ անմոփ և գուեհիկ, որ ոչ  
գիտէ զօրինացն Եստուծոյ, և զնորին  
հանգամանացն. այսպէս և ես միայն քա-  
զաքականութեամբ, և ծերոց աւան-  
դութեամբք սկանծացեալ եմ, և զմարդ-  
կան պատուիրեալս և եթ ունիմ իրրե  
զօրէնս Եստուծոյ, անփոյթ արարեալ  
զԵստուծոյսն : Արկրորդ, յատկութիւն  
վարդապետի է որբութիւն անձին և բա-  
րի վարքն առ օրինակ լինելոյ հաւատա-  
ցելոց . զի առաւել օրինակաւ գրաւին  
սիրտք նոցա՝ քան քարոզութեամբ :

Ալլավ շանկութեան, ասոյի բարին-թեան,  
ուրա իմ իսցեալէ :

Խոյեալ է սիրո իմ ասէ, այսինքն՝  
հոգի իմ. ոչ հոգեառ սիրով, քան մի լի

ցե՞ , զի սէրն հոգեոր ոչ խացէ կամ վերաւորէ , այլ զխոցեալն և զվիրաւորեալն բժշկէ . ուստի զմարմնական զհեշտալի և զառփական սիրոյն է իմանալ , որ անքուժելի եղանակաւ խացէ , սրով և լինի կորուստ անձին : Ա ասն որպ յարէ և սիրով շանկութեան , այն է՝ աշխարհային բաղձանաց : Օ սաստկութիւն խոցուածոյ սրախն յայտնել բառիւս սաստիկ բարիութեան , որով իբր երկսայրի սրով ցանկութեան և բարկութեան՝ անողջանալի վերն գործի , մինչև 'ի խստութենէ սաստիկ ցաւոյն՝ ելանէ շունչն 'ի բանական հոգւոյն , այն է՝ շնորհն , և մեռանի բարցապէս անմահ հոգին : Աւստի ազաշեմ զձեզ եղբարք , մի՛ բարկութեամբ և մի՛ սիրով մարմնաւորաւ վարեսցուք ըշեկեանս մեր , որով սիրտ և հոգի մեր խոցեալ վիրաւորի յաւիտեան . այլ հոգեւոր սիրով կենցաղավարեսցուք , որով և լիցի բժշկութիւն սրախ և հոգւոց . և արժանի եղիցուք միաւորիլ ընդ Քըրիստոսի որդւոյն միաձնի , և ընդ սիրուարք Հոգւոյն ճշմարտի , և ընդ Հօրոմենակալի , որում փառք և պատիւ :

Ա իրաք յանցանց , վշտանց հոգի , վշտանց լըլիմ :

Այսինքն՝ նեղեալ վշտանց հոգի իմ ,  
ոչ արտաքին վիրօք հրաղինուց , տիգաց ,  
վաղակաց կամ սրոյ , այլ մեղաց և յան-  
ցանց վիրօք , որ է զէն և սուսեր և նետ  
սատանայի , որպէս և յառաջադոյն ա-  
սացաւ : Օ ի արտաքինքն զմարմինն և  
եթ կարեն վիրաւորել , իսկ մեղքն որ  
՚ի մարդն՝ չարաշար խոցէ և վիրաւո-  
րէ զհոգին . և ՚ի յուսահատութիւն և ս  
արկանելով վարանեալ ՚ի միտս շրջեցու-  
ցանէ : Ուստի ասէ , վարանեալ լըլիմ . զի  
եթէ վէրք բանից են անբուժելի , ըստ  
առածին , ասլա քանի առաւել վէրքն  
մեղաց , որում չիք յայլ ուստեքէ բժը-  
կութիւն , բաց յլատուծոյ տեառնէ ,  
ըստ այնմ . “ Ոչ ուստեք է ինձ օգնու-  
թիւն , ոչ սփոփութիւն հոգւոյս վշտա-  
ցելոյ , և ոչ սպեղանի խոցուածոյս վի-  
րաց , եթէ ոչ ՚ի քէն տէր Յիսուս ” :

Տիրեցին ինչ լորս , առըգիր հանին , (Դ )  
ուրական գրիաց :

Չարք են մեղք և անօրէնութիւնք ,  
զոր գործէ ոք . և չիք ինչ չարագոյն քան  
զայնս , որք առնեն զմարդն յաւիտեան

ոզորմելի և թշուառ : Քանզի ՚ի տիրել  
մեղաց ՚ի վերայ մարդոյ , տիրեն նմա  
յայնժամ և գեք . և հանեալ զնա ՚ի  
գրկաց Հօր Աստուծոյ , տան ծառայել  
յոտս իւրեանց ՚ի զանազան ախտս , ըստ  
բանի սուրբ վարդապետին . և ՚ի գրկա-  
ցըն Աստուծոյ հանեալ ՚ի յոտս ստամ-  
բակին գթեցոյց ո . Եար . Խը : Քանզի  
Ասղոմնն , որ երբեմն սիրովին տատուա-  
ծային գգուեալ կայր ՚ի գիրկո խնամոցն  
Աստուծոյ , ՚ի տիրել նմա չարեաց , այն  
է սիրոյ և հեշտութեան աշխարհիս ,  
անկաւ ՚ի գրկաց Աստուծոյ . և գթե-  
ցուցեալ , այսինքն՝ ուժգին գլորեցու-  
ցեալ արկ զնա բանսարկու թշնամին ՚ի  
ներքոյ ստից իւրոց : Ըստ այսմ օրինակի  
տիրեցին ասէ՝ ՚ի վերայ իմ չարքն , և հա-  
նին ՚ի գրկացն Աստուծոյ՝ տարագիր զօր-  
կեալ յորդիութենէ , և վտարեալ ՚ի տար-  
աշխարհ՝ այն է ՚ի դժոխս :

Տաբունոյ Բարոյ , ըսկամական յայնին , ըս-  
տին ու ըստոյ :

Այս բան պարտ է յառաջադաս լի-  
նել նախորնթաց տան , որպես թէ ասիցէ .  
ոչ լսելով իմ ուրախական կենարար բա-  
նից բարի վարդապետիդ , տիրեցին ինձ

շարք, և հանին՝ ՚ի գրկաց Աստուծոյ։ Կամի  
 տսել, զմշտնջենաւոր զբերկրավի և զու-  
 բախական լուրն աւետեաց, զոր աւե-  
 տարանեցեր դու ինքն ամենաբարի ճըշ-  
 մարիտ վարդապետդ, թէ՝ « Որ զբանն  
 իմ լսէ և հուտառայ . . . ընդունի զիկեաւ  
 նըս յաւիտենականառ. Յովէ. Ե. 24. Եւ-  
 կամ թէ՝ « Դարձարներ առ իս, և ես  
 դառնամ առ ձեզն. թէ այէտ և ես բա-  
 զում անգամ լուայ զկենդանի լուրս և  
 զհրաշալի բարբառս, սակայն ոչ ՚ի միտ  
 առի բնաւ, և ոչ զկնի շուղաց քոց ըն-  
 թացայ, տրուոլ և տիսմար անձամբ գռ  
 լով. և ոչ իսկ երբէք զմտաւ ածեալ՝  
 երկեայ յայնմ սոսկալի և ՚ի զարհուրելի  
 սպառնալեաց ձայնէն, զոր ունի տսել  
 մեղաւորաց թէ, « Ոչ գիտեմ զձեղ ուս-  
 տի էք. ՚ի բաց կացէք յինէն ամենայն  
 մշակդ անիրաւութեան. » Պահ. ՃԳ. 27.  
 Քանզի ոչ ՚ի միտ առի զկենդանարար  
 բանս քո զայսոսիկ. ուստի եկին հասին  
 ՚ի վերայ իմ շարիք, որք տարագիր ա-  
 րարեալ հանեն զիս յարքայութենէ նո-  
 րա, որ է գիրկ Աստուծոյ, և զրկեն  
 յերջանիկ բարութեանց և ՚ի յաւիտե-  
 նական կենաց :

Յանիո-լիւն չըրեաց, յանիալ տիհօս, յա-  
նեցոյ շւշ իմ:

Յանիո-լիւն չըրեաց ասի, ամենայն  
որ վերաբերի առ մեղս, որ է յանկու-  
թիւն սատանայի, ըստ բանի Տեսուն.  
«Օ ցանկութիւնս հօր ձերոց կամիք առ-  
նելո. Յօվհ. Ը. 44: Այն է՝ նախանձ, ո-  
րում հետեւի առելութիւն և սպանու-  
թիւն. զի սոքա առաւել դիւրաւ սպա-  
նանեն զհոգիքան զայլ մեղս. քանզի ա-  
մենայն խորհուրդք չարք, բանք չարք,  
և գործք չարութեան՝ ՚ի սատանայէ են  
և ՚ի չարագրգիռ կամաց նորա, որոց իր-  
ըու ընդ մեղս խառնեալ միաւորի ընդ  
չար միտս, և միանայ ընդ գործողին չա-  
րեաց: Յանիալ տիհօս ասէ. քանզի սատա-  
նայ զարմասս ամենայն չարեաց, և զա-  
ռարկայս չար ցանկութեան՝ ածեալներ-  
կայացուցանէ առաջի մատաց մարդկան,  
ցանկալի և գեղեցիկ դիմօք պատկերա-  
ցուցեալ՝ ՚ի զուարձութիւն աչաց և ՚ի  
բերկրութիւն սրտի, որով թիւրեալկա-  
մացն՝ ՚ի նոյն հակամիտէ. զոր օրինակ  
որար նախամօրն Եւայի, ցուցանելով  
նմա զպոտուղն հաճայ աչաց հայելոյ, և  
գեղեցիկ ՚ի տեսանել. Օննե. Գ. 6. զոր-  
մէ տես յերես 10: Այն օրինակ տանէ

և մեզ ջառեցայ լու իմ, աչքն է միտքն,  
որ է ակն հոգւոյն, և հաւատո՞ւ աչք մը-  
տաց, որով հոդին տեսանէ զԱստուած  
զուէրն ամենայնի զՅիսուս Քրիստոս. զի  
եթէ ակն ուրուք իցէ կոյր և բժոտեալ,  
չկարէ համարձակ հայիլ՚ի լուսատու ակն  
նըն արեւու, որոյ ցոլք ճառագայթիցն  
խտողեն զաշս, և խստիւ խեթկեն զաե-  
սութիւնն, ապա քանի՞ առաւել զաշս  
հոգւոյն՝ զմիտան, եթէ իցէ մեղօք կուրա-  
ցեալ, և բժոտեալ և թերահաւատու.  
թեան ամսովք և միգով պատեալ զի  
արդ կարիցէ հայիլ՚ի լոյսն Ճմարիտ Յի-  
սուս Քրիստոս, և 'ի գերամաքուր ակնն  
և յաղբիւրն լուսոյ՝ Հայրն, և 'ի բըդ  
խեալն 'ի Հօրէ՝ Հոգին սուրբ, յէակիցն  
Հօր և 'ի փառակիցն Որդւոյ, եթէ ոչ  
նախ ընկալցի զըուժումն ախտացեալ և  
խաւարեալ մուաց և զլուսաւորութիւն  
'ի ձեռն ապաշխարութեան, և զկատա-  
րեալ հաւատո՞ւ 'ի միտս՝ 'ի տեսութիւն  
երանական փառաց և շնորհաց :

Եի-բատանչի-ըոց, Եի-մամբ իուռո՞ւ աիրից,  
Եի-ծեալ է հոգիս :

Այն է 'ի յոգնատեսակ ախտից մե-  
տոց, որք իբրև հիւսուած կամ աղիսադ

խումն յոլով շղթայից ծանրացեալ ՚ի վերաց  
բայ անձին իմայ հիւծի և մաշի հոգի իմ,  
իսկ Հիւծուն հոգւոյն նշանակէ զզրկիւ  
՚ի շնորհաց, և զնուազել յամենայն գործոց  
բարեաց յորոց ընդունի զննունդն,


Փութացի՛ց անյն իմ, փախէլ ՚ի չպետց,  
քահագէլ բարեաց :

Վիւշեւ ցայս վայր յիշելով զմեղսն  
ստգտանէք զանձն, իսկ աստէն յորդորէ  
զինքն խոյս տալ ՚ի չպրէ, և առնել ըզ  
բարի ըստ Աազմասին. « Խոսորեա ՚ի չպրէ,  
և արա զբարի », ԼԳ. • 15. Այլ արդ՝  
ոչ միայն պարտ է փախշիլ և հեռանալ  
՚ի մեղաց, այլև փախագն բարեաց, այն է՝  
զհետ երթալ գործոց բարեաց : Քանզի  
ոսսէ ըղձանալ բարւոյն չէ ինչ օգուտ,  
այլ և հարկ է զհետ երթալ այնմ, իմա  
առնել և գործել զբարիս : Յէպէտ և  
բազումք փափագեն ցանկան բարեաց,  
և բազան հոգւով տեսանել անդէն և  
վայելել ՚ի կեանս յաւիտենականս, այլ  
ոչ երբէք արժանի գտանին, քանզի ոչ  
արդեամբք ՚ի գործ զնեն զբարին :

ԴԵՂ ԹԱՌ ԽԵՐՅ ՀԱՆԻՇ, ՏԵՌ ՏԵԿԱ ԷՎԵԼ  
ՄԱՆՈՂ ԴԱՊԱՄ-Ռ :

Ա,ախ՝ յիշելով զմահ մարմնոյն մերձ  
լինիլ ինքեան, հաստատէ զսիրտն եր-  
կիւղիւ, յորմէ հետեի պատրաստու-  
թիւն առ յաւիտենական կեանս : Յի-  
շելով զքննող դատաւորն, տօյ իմանալ  
զանաչառ դատաստանն, յորում իւրա-  
քանչիւր ոք ունի տալ պատասխանի,  
՚ի մտանել դատաւորին ՚ի քննութիւն  
գործոց : Խարոյալէս առեալ շնուն ճա-  
կու, նշանակէ զմեզսն, և ԴԱՊԱՄ-Ռ՝ ըշ-  
խայթ խղճին, որ առ դուրս կոյ մտացն  
և բաղիսէ, զի մի դուցէ ննջիցես քաղցր  
՚ի քուն լեալ ըստ մեռելոյն՝ որք ննջեն  
՚ի տապանի, որով նշանակէ զանհոգու-  
թիւն մեղացն, և զգանցառութիւնն կա-  
տարեալ զզմանն, որոյ վախճանն է կո-  
րուստ յաւիտենից : Ա ասն որոյ յորդո-  
րէ զգոյշ և զգաստ լինել յանձին, և  
արթուն հոգւով, զի մի խաթեալ պա-  
տրիցի, և զիսոր քուն մեղոց ննջիցէ .  
իսկ եթէ հասանիցի քեզ մեղացն քուն  
և տիրեսցէ ՚ի վերայ քո, զգաստ և ար-  
թուն լիցիս ըստ դռնապանին, զի ՚ի  
բաղիսէլ քննող դատաւորին զգուռն  
սրտի քո, այսինքն խղճի մտացդ, վառ

վաղակի բացցես առաջի նորա . ՚ ՚ ՚ .  
 ԺԲ . 36 : Եւսինքն՝ կատարեալ զղջմամբ  
 և ճշմարիտ խոստավանութեամբ թա-  
 փեացես ՚ի քէն զթմբութիւն և զքուն  
 մահու մեղաց , ընդ նմին և զյաւ իտե-  
 նական մահն :



# ԲԱՑԵՏՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱԽՈԾ ԿՈՒՍՈՅ

ԵՐԳՈՑՆ

